



Ձեռք մեր հանապազորդ

ՀՈՒԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 2018

Աստվածաշնչի ամենօրյա անձնական և ընտանեկան
ընթերցումներ և հոգևոր խորհրդածություններ

ԻԹ ՏԱՐԻ

Գ ԵՌԱՄՍՅԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible
Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread
Վերջույկից թարգմանել ենք հաջորդ էջերի խորհրդածու-
թյունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76, (010) 54-35-78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am

Աստված ինչի՞ է նման

Հատուկ մի առիթ տոնելու համար ամուսինս տարավ ինձ արվեստի ցուցասրահ և առաջարկեց մի նկար ընտրել որպես նվեր: Անտառի մեջ հոսող փոքր գետակի նկարն ընտրեցի: Վազող ջրերը կտավի մեծ մասը գրաված լինելով՝ երկնքից փոքր մաս էր ընդամենը նկարված: Սակայն ջուրը ցոլացնում էր արևը, ծառերն ու երկինքը: Երկինքը «տեսնելու» միակ ձևը ջրի մակերեսին նայելն էր:

Հիսուսը այս գետակին է նման՝ հոգևոր իմաստով: Երբ ուզենք իմանալ, թե Աստված ինչի է նման, Հիսուսին պիտի նայենք: Եբրայեցիների նամակի հեղինակը ասաց, թե Նա «Աստծո էությունն նկարագիրն է» (1.3): Թեև Աստվածաշնչի

Կարդա՛ Եբրայեցիներ 1.1-10

Որդին... Երա փառքի լույսը լինելով ու Երա էությանն Գլարագիրը: Եբր. 1.3

մեջ նշված հաստատումներով կարող ենք իրականություններին ծանոթանալ, ինչպես՝ «Աստված սեր է», սակայն Աստծո վարձուներից մենք կարող ենք մեր հասկացողությունը ավելի խորացնել, երբ տեսնում ենք, թե ինչպես է Նա վարվում, երբ դիմազրավում է այն խնդիրներին, որ մենք ունենք աշխարհի մեջ: Հիսուսը, մարդեղացած Աստված լինելով, սա մեզ ցույց տվեց:

Սատանայից փորձվելով՝ հայտնեց Աստծո սրբությունը: Աշխարհի հոգևոր խավարին դիմազրավելով՝ ապացուցեց Աստծո հեղինակությունը: Մարդկանց խնդիրների դեմ պայքարելով՝ ցույց տվեց Աստծո իմաստությունը: Իր մահով մարմնացրեց Աստծո սերը:

Թեև մեր սահմանափակ մտքերով չենք կարող ամեն բան հասկանալ Աստծո մասին, սակայն կարող ենք Նրա նկարագիրը տեսնել Քրիստոսին նայելով:

Աղոթք - Սիրելի՛ Աստված, շնորհակալ եմք, որ մեզ հնարավորություն ես տալիս Քեզ ճանաչելու: Օգնիր, որ ավելի Քեզ մոտենանք՝ Հիսուսին նայելով: Ամեն:

Հիսուսին նայելը Աստծո Գլարագիրն է ցույց տալիս:

Բացահայտ ապրելակերպ

Թեքսասի Օսթին քաղաքի պանդոկներից մեկում ուշադրու-
թյունս գրավեց սեղանին դրված քարտի գրությունը.
«Բարի գալու՛ւստ: Մեր աղոթքն է, որ ձեր կեցությունը այստեղ
լինի խաղաղ և ձեր ճամփորդությունը՝ պտղաբեր: Թող Աստ-
ված ձեզ օրհնի և պահի ու իր երեսը պայծառացնի ձեզ վրա»:

Ուզեցի ավելին իմանալ այս պանդո-
կի մասին. հետևաբար, այցելելով կայքէ-
ջը՝ կարդացի նրանց մշակույթի ու ար-
ժեքների մասին: Նկատեցի, որ նրանք
ձգտում են գերազանցություն չահել և
ուզում են իրենց ունեցած հավատքը
կյանքի կոչել իրենց աշխատավայրում:

Այս փիլիսոփայությունը ինձ հիշեցրեց Պետրոսի ասած խոս-
քերը Փոքր Ասիայում ցիրուցան եղած Քրիստոսի հետևորդներին:
Նա քաջալերեց նրանց, որ Քրիստոսի վրա իրենց ունեցած հա-
վատքը գործնական կերպով ցույց տան իրենց շրջապատում: Հա-
կառակ իրենց դիմազրաված հալածանքին ու սպառնալիքներին՝
Պետրոսը նրանց թելադրեց, որ չվախենան ու ասաց. «Այլ Տեր
Աստծուն ձեր սրտի մեջ սո՛ւրբ պահեցեք ու միշտ պատրա՛ստ եղեք
հեզությունմբ և երկյուղածությունմբ պատասխան տալու ամեն մե-
կին, ով ձեր մեջ եղած հույսի պատճառը հարցնի» (Ա Պետ. 3.15):

Բարեկամներիցս մեկը սա անվանում է «ապրել կյանքի մի
ոճով, որ բացատրություն է պահանջում»: Հոգ չէ թե ուր ենք
ապրում կամ գործում, Աստծո տված գորությունմբ մեր հավատ-
քը գործնականի պիտի վերածենք՝ մի՛շտ պատրաստ լինելով
ազնվությունմբ ու հարգանքով պատասխան տալու նրանց,
որոնք մեր ունեցած հույսի մասին են հարցնում:

Աղոթք - Երկնքում եղող Հայր, թող որ Քեզ պատվենք՝ ուրիշ-
ներից սիրելով, և խոսենք նրանց հետ հարգանքով ու ազնվու-
թյամբ, երբ հարց տան մեզ մեր ունեցած հույսի մասին: Ամեն:

**Թող մեր հավատքը պատճառ հանդիսանա ուրիշներից, որ
մեր հույսի մասին հարցնեն:**

Կարդա՛
Ա Պետրոս 3.8-16

Տեր Աստծուն ձեր
սրտի մեջ սո՛ւրբ
պահեցեք:
Ա Պետ. 3.15

Քեզ տեսնում եմ

Երբ Խավիերը երկու տարեկան էր, կոշիկի փոքր խանութի մի ծայրից մյուսը վազեց: Թաքնվելով կոշիկի տուփերի դեզերի ետևում՝ ծիծաղեց, երբ ամուսինս՝ Ալանն ասաց. «Քեզ տեսնում եմ»: Մի քանի րոպե անց տեսա, որ Ալանը խենթի պես մի կողմից մյուսն է վազում՝ Խավիերի անունը կանչելով: Վազեցի՞նք դեպի խանութի մուտքը՝ մտածելով, թե մեր տղան գնացել է դեպի բաց դուռը, որ տանում էր բանուկ փողոցի ուղղությամբ: Շուտով Ալանը գտավ նրան, առավ բազուկների մեջ, միասին գրկեցի՞նք երեխային ու համբուրեցի՞նք՝ շնորհակալություն հայտնելով Աստծուն:

Կարդա՛
Սաղմոս 120

Տերը կիսկի քո մուտքն ու ելքը՝ այսուհետև մինչև հավիտյան: Սաղմ. 120.8

Խավիերով հղի լինելուցս մի տարի առաջ մենք կորցրել էինք մեր առաջին զավակին՝ դեռ չծնված: Երբ Աստված մեր որդով մեզ օրհնեց, ես վախկոտ մայր դարձա: Կոշիկի խանութի մեջ մեր ունեցած այս փորձությունը փաստեց, որ մեր տղային միշտ պաշտպանելու կարողություն չպիտի ունենայի՝ պարզապես միայն ուշադիր լինելով: Սակայն խաղաղություն գտա, երբ սովորեցի վախի ու մտահոգության ժամանակ Աստծուն՝ մեր օգնության աղբյուրին դիմել: Մեր երկնավոր Հայրը բնավ իր աչքերից չի հեռացնում իր զավակներին (Սաղմ. 120.1-4): Թեև մենք չենք կարող արգելել փորձանքները, ցավերը կամ կորուստները, սակայն կարող ենք հաստատ հավատքով շարունակել մեր կյանքը՝ ապավինելով մեր Օգնականին ու Պահապանին, որ հսկում է մեզ վրա (Հմ. 5-8): Երբ չենք կարողանում պաշտպանել մեր սիրելիներին, կարող ենք անզոր ու անօգնական զգալ և կորսված լինելու զգացումներով լեցուն օրեր դիմագրավել: Սակայն մենք կարող ենք վստահ լինել, որ մեր ամենագետ Աստվածը բնավ չի լքում իր սիրելի զավակներին:

Աղոթք - Տեր, շնորհակալ եմք, որ հսկում ես մեզ ու մեր սիրելիների վրա: Ամեն:

Աստված միշտ իր աչքերը իր զավակների վրա է պահում:

Կատարյալ աշխարհ

Քեթին «Իմ կատարյալ աշխարհը» խորագրով արձակ ստեղծագործությունն պատրաստելու դպրոցական հանձնարարությունն ուներ: Ուստի գրեց. «Իմ կատարյալ աշխարհում... պաղպաղակը անվճար է, դյուրահաս շաքարները ամեն տեղ են, և երկինքը միշտ կապույտ է՝ միայն մի քանի ամպի ծվեկներով, որոնք հետաքրքիր ձև ունեն»։ Ապա նրա գրվածքը ավելի լուրջ է սկսում դառնալ: Նա շարունակում է՝ գրելով. «Այդ աշխարհի մեջ ոչ ոք չպիտի տուն գա վատ լուր ստանալու համար, և ոչ ոք այդ լուրը տվողը լինելու կարիքը չպիտի ունենա»:

«Ոչ ոք չպիտի տուն գա վատ լուր ստանալու համար»։ Սքանչելի չէ՞ սա: Այդ բառերը ուժեղ կերպով մատնանշում են Հիսուսի հանդեպ մեր ունեցած հաստատ հույսը: Նա «ամեն բան նոր է անում»՝ բուժելով ու փոխակերպելով մեր աշխարհը (Հայտ. 21.5): Երկինքը պիտի լինի «այլևս չպիտի լինի»-ների տեղում - այլևս չպիտի լինի չարություն, մահ, սուգ, ցավ և արցունք (Հմ. 4): Այնտեղ Աստծո հետ կատարյալ հաղորդակցություն տեղ պիտի լինի, որ Իր սիրով հավատացյալներին պիտի փրկի ու Իր սեփականությունը պիտի հռչակի (Հմ. 3): Ի՛նչ հիանալի ուրախություն մեզ է սպասում: Մենք կարող ենք այս կատարյալ ճշմարտության նախաճաշակն ունենալ հիմա և այստեղ: Երբ ուզում ենք ամեն օր Աստծո հետ հաղորդակցվել, մենք կարող ենք Իր ներկայություն ուրախության փորձառությունը ունենալ (Կող. 1.12-13): Եվ նույնիսկ եթե պայքարում ենք մեղքի դեմ, մասամբ մենք ենք ունենում Քրիստոսով մեր հաղթանակի փորձառությունը (2.13-15), նրա, որ ամբողջովին հաղթեց մեղքին ու մահին:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ ամեն բան նոր ես դարձնում: Օգնիր մեզ, որ կատարյալ հույսով Քեզ հետ ապրենք նոր երկնքի ու երկրի մեջ: Ամեն:

Աստծո կատարյալ աշխարհը բոլոր նրանց համար է, որոնք Յիսուսին են հավատում:

Կարդա՛
Հայտն. 21.1-5

Գահի վրա նստողն
ասաց. «Ահա ամեն
բան նոր եմ անում»:
Հայտն. 21.5

Աստծո մեծ արարչագործությունը

Վերջերս մեր թոռներից մի քանիսի հետ Ֆլորիդա այցելում էր թյան ընթացքում վեբ-տեսախցիկով դիտեցինք արծիվների ընտանեկան մի բույն: Ամեն օր ստուգեցինք բարձր տեղում գտնվող բույնը ու մոտիկից հետևեցինք մոր, հոր և ձագուկի ամենօրյա կյանքը: Ամեն օր հայրն ու մայրը կայուն հսկողություն և պաշտպանության իրենց արարողությունն էին անում և մոտակա գետից ձուկ բերում սննդի համար:

Արծիվի այս փոքր ընտանիքը մեզ համար ցույց է տալիս 103-րդ Սաղմոսի մեջ սաղմոսերգուհի տված Աստծո շքեղ ստեղծագործության մեկ պատկերը, ուր տեսնում ենք արարչագործության տեսարանների և հիանալի պատկերների համախմբում:

Տեսնում ենք Աստծո տիեզերքի արարչագործության փառքը (Հմ. 2-4):

Ունենում ենք երկրի սքանչելի ստեղծագործության փորձառությունը՝ ջրերի, լեռների և դաշտերի (Հմ. 5-9):

Վայելում ենք անասունների, թռչունների և բույսերի՝ Աստծո պարգևների փառքը (103.10-18):

Հիանում ենք Աստծո եղանակների ստեղծագործությամբ՝ առավոտ և երեկո, լույս ու խավար, աշխատանք ու հանգիստ (Հմ. 19-23):

Աստված իր ձեռքերով ի՛նչ հիանալի աշխարհ է ձևավորել մեր հաճույքի ու իր փառքի համար: «Օրհնի՛ր Տիրոջը, ո՛վ իմ անձ» (Հմ. 1): Մեզնից յուրաքանչյուրը կարող է շնորհակալություն հայտնել Աստծուն իր բոլոր արածների համար:

Աղոթք - Տե՛ր, փառք Քեզ Քո ստեղծած սքանչելի երկրի համար: Ամեն:

Արարչագործության գեղեցկությունը ցուցանում է Արարչի գեղեցկությունը:

Կարդա՛ր
Սաղմոս 103.1-6, 10-23

Այնտեղ երկնքի թռչունները բույն պիտի դնեն և ժայռերի միջից ձայն պիտի տան: Սաղմ. 103.12

Թաքնված գեղեցկություն

Մեր զավակները մի քիչ խրախուսանքի կարիք ունենին՝ հավատալու, թե արժեք հատուկ իրեր գործածել՝ դիտելու Տոբակոյի Կարիբյան ծովի հատակի գեղեցկությունը: Մեր հորդորով նրանք սուզվեցին ջրի մեջ ու զմայլված ջրի երեսը բարձրանալով՝ ասացին. «Հազար տեսակի գեղեցիկ ձկներ կան, ու երբեք նման գունավոր ձկներ չենք տեսել»: Ջրի մակերեսը նման լինելով մեզ մոտ գտնվող քաղցրահամ լճին՝ մեր զավակները գունավոր ձկների թաքնված գեղեցկությունը չպիտի տեսնեին: Երբ Սամուել մարգարեն Բեթղեհեմ գնաց Հեսսեի որդիներից մեկին օժելու որպես հաջորդ թագավոր, մեծապես սպավորվեց ավագ որդու՝ Եղիաբի դեմքը տեսնելով: Մարգարեն մտածեց, որ գտել էր ճիշտ մարդուն, սակայն Տերը մերժեց ու հիշեցրեց նրան, թե Ինքը «այնպես չի նկատում, ինչպես նկատում են մարդիկ. մարդիկ երեսին են նայում, իսկ Աստված՝ սրտին» (Ա թագ. 16.7):

Սամուելը Հեսսեին հարցրեց, թե ուրիշ որդիներ էլ ունի՞: Հեսսեն իր յոթ որդիներին ներկայացրեց Սամուելին, սակայն ամենից փոքր որդին՝ Դավիթը, ներկա չէր, որովհետև նա իր հոր ոչխարներն էր արածացնում: Մարդ ուղարկեցին, որ Դավիթին բերեն. ու երբ եկավ, Տերը Սամուելին հրամայեց, որ նրան օժի:

Շատ հաճախ մարդկանց նայում ենք մակերեսային կերպով ու ժամանակ չենք տրամադրում նրանց ներքին՝ թաքնված գեղեցկությունը տեսնելու: Մենք միշտ չենք արժևորում այն, ինչ Աստված է արժևորում: Սակայն եթե ժամանակ տրամադրենք մակերեսից ցած՝ հատակը նայելու, կարող ենք մեծ գանձ գտնել:

Աղոթք - Երկնավոր Հայր, շնորհակալ եմք, որ Դու մարդկանց չես արժևորում արտաքին տեսքին նայելով, այլ նայում ես նրանց սրտերին: Օգնիր, որ կարողանանք տեսնել տեսքից այն կողմ եղող գեղեցկությունները: Ամեն:

Աստված օգնում է, որ տեսնենք ուրիշների մեջ եղած ներքին գեղեցկությունը:

Կարդա՛ Ա թագ. 16.1-7

...մարդիկ երեսին են նայում, իսկ Աստված՝ սրտին:
Ա թագ. 16.7

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԽԱՅՏԱՐԱՐԵԼ

Լորայի մայրը քաղցկեղի դեմ էր պայքարում: Մի օր Լորան աղոթեց նրա համար ընկերուհու հետ, որ ուղեղային անդամալուծություն ուներ: Ընկերուհին աղոթեց՝ ասելով. «Տե՛ր, ամեն բան անում ես ինձ համար, խնդրում եմ Լորայի մոր համար էլ ամեն բան արա»: Լորան շատ ազդվեց ընկերուհու արած այս սրտածմլիկ Աստծո «ենթակայություն հայտարարությունով»: Հիշելով ընկերուհու աղերսը՝ նա ասաց. «Որքան հաճախ եմ հաստատում, թե ամեն ժամանակ Աստծո կարիքն ունեմ: Մի բան, որ ամեն օր պիտի անեմ»:

Կարդա՛
Հովհաննես 5.1-24

...առանց ինձ ոչինչ
չեք կարող անել:
Հովհ.15.5

Հիսուսը իր առաքելության ընթացքում հաճախ ցույց տվեց իր Երկնավոր Հորը ենթակա լինելը: Կարող ենք խորհել, թե Հիսուսը Աստված է մարդկային մարմնով ու լավագույն պատճառն ունի ինքնաբավ լինելու: Սակայն երբ կրոնական առաջնորդները Նրան հարցրին, թե ինչո՞ւ է Սուրբ Օրը «գործ» ու շաբաթ օրով բժշկություն անում, պատասխանեց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. Որդին իրենից չի կարող ոչինչ անել, եթե չտեսնի Հորն անելիս...» (Հովհ. 5:19): Այսպես Հիսուսն էլ իր ենթակայությունը հայտարարեց:

Հիսուսի ենթակայությունը Հոր գերագույն օրինակն է, թե ինչ է նշանակում Աստծո հետ հարաբերության մեջ լինել: Ամեն վայրկյան, որ շնչում ենք, պարզ է Աստծուց, որ ցանկանում է մեր կյանքերը իր գործությունով լեցուն դարձնել: Երբ մենք ապրենք իրեն սիրելու և իրեն ծառայելու համար մեր աղոթքներով ու իր խոսքին վստահելով, կհայտարարենք մեր ենթակայությունը իրեն:

Աղոթք - Տե՛ր, Քո կարիքն ունեմ ամեն բանի համար: Օգնիր, որ ապրեմ Քեզ ծառայելու համար: Փառք եմ տալիս Քեզ, որ իմ Տերն ու Փրկիչն ես: Ամեն:

Աղոթք չանելը Աստծուց անկախ լինելու մեր հայտարարությունն է: Դանիել Գեղեցուն

Բազմաթիվ պարզևներ, մեկ նպատակ

Կորեկը, նաև ծանոթ որպես եզիպտացորեն, իմ հայրենիքի՝ Մեքսիկայի մեջ գլխավոր կերակուր է: Նրա տարբեր տեսակներ կան՝ դեղին, սրճագույն և սև հասկերով ու նույնիսկ՝ կետավոր: Սակայն շատերը ընդհանրապես այս կետավոր տեսակի կորեկները չեն ուտում: Խորահարարապետ ու հետազոտող Ամանտո Ռամիրեսը բացատրում է, թե նրանք հավատում են, որ միօրինակուլթյունը որակի հոմանիշ է: Սակայն կետավոր հասկերի կորեկները համեղ են, ու նրանցով կարելի է շատ լավ կորեկի քաքար պատրաստել:

Քրիստոսի եկեղեցին ավելի կետավոր կորեկի է նման, քան միագույն հասկի: Պողոս առաքյալը մարմնի պատկերն է գործածում եկեղեցին նկարագրելու համար, թեև մենք մեկ մարմին ենք և ունենք նույն Աստվածը, սակայն մեզնից ամեն մեկի տարբեր տեսակի պարզևներ են տրված: Ինչպես Պողոսն է ասում. «Ծառայություններն էլ զանազան են, բայց Տերը նույնն է: Ներգործություններն էլ զանազան են, բայց Աստված նույնն է, որ ամեն բան ներգործում է ամենքի մեջ» (Ա Կորնթ. 12.5-6): Մինչ մեր բազմազանությունը ընդունում ենք, ամեն ջանք պիտի թափենք մեր հավատքի ու նպատակի միությունը պահելու համար: Ունենք զանազան կարողություններ ու ենթահոգեր, խոսում ենք տարբեր լեզուներով և գալիս ենք տարբեր երկրներից: Սակայն մենք ունենք նույն Հիանալի Արարիչ Աստվածը, որ հաճույք է ստանում զանազանությունից:

Աղոթք - Հայր, ջանք թափենք մեկ լինելու՝ իրար հարգելով ու արժևորելով մեր զանազան պարզևներն ու տաղանդները: Ամեն:

Միմյանց կարիքն ունենք, որպեսզի լինենք այն, ինչ որ Աստված է ցանկանում, որ լինենք:

Կարդա՛ր Մատթեոս 6.1-4

Ինչպես որ մարմինը մեկ է ու շատ անդամներ ունի, և մեկ մարմնի բոլոր անդամները շատ լինելով՝ մարմինը մեկ է, այնպես էլ Քրիստոսը:

Ա Կորնթ. 12.12

Յանդարտ եղիր, հոգի՛ս

Պատկերացրու մի մոր, որ սիրով նայում է իր երեխային և իր մեղմ ու քնքուշ ձայնով ասում. «Հա՛շ, հա՛շ, շո՛ւշ, շո՛ւշ»: Այս պարզ բառերը գործածվում են՝ հանգստացնելու ու հանդարտեցնելու ցավի, անհանգստություն ու նեղություն մեջ գտնվող փոքրիկներին: Նման տեսարանները համամարդկային են, և մեզինքն չատերը եղել են այս սիրո արտահայտությունը ցույց տվողը կամ ստացողը: Երբ մտածում եմ Սաղմոս 130.2-ի մասին, այս պատկերն է միտքս գալիս:

**Կարդա՛ր
Սաղմոս 130**

**Ես... խոնարհ եղա:
Սաղմ. 130.2**

Այս Սաղմոսի բառերն ու շարահյուսությունը ցույց են տալիս, թե նրա հեղինակը՝ Դավիթը, մի փորձառություն էր ունեցել, որ դրդել էր իրեն նման լուրջ արտահայտություն անելու: Հուսախաբություն, պարտության կամ ձախողության փորձառություն ունեցե՞լ ես, որ պատճառ է դարձել քեզ իմաստալից աղոթք անելու: Ի՞նչ ես անում, երբ կյանքի պարագաները քեզ խոնարհեցնում են, օրինակ երբ քննության մեջ ձախողես, կամ գործը կորցնես, կամ էլ հարաբերություն խզես: Դավիթն իր սիրտը դատարկեց Տիրոջ առջև ու հոգու անկեղծ քննություն կատարեց (Սաղմ. 130.1): Խաղաղություն հաստատելով իր ընտանիքի անդամների հետ՝ գոհացավ պարզապես իր մոր հետ լինելով՝ այդ մանուկի վստահության նման (Հմ. 2):

Կյանքի պարագաները փոխվում են, ու մենք խոնարհվում ենք: Սակայն մենք կարող ենք հույս ունենալ և գոհ լինելով՝ իմանալ, թե Մեկը կա, որ խոստացել է մեզ բնավ չթողնել կամ մոռանալ: Կարող ենք Նրան ամբողջովին վստահել:

Աղոթք - Յայր, երբ կյանքիս հանգամանքները փոխվեն, օգնիր, որ չմտահոգվեմ, այլ վստահեմ Քեզ ու գոհ լինեմ Քեզ-նով: Ամեն:

Քրիստոսի մեջ գոհացում կա:

Խորը տեղերի Աստվածը

Տովային կենսաբան Ուլարդ Աբրյլթենան ասում է. «Ամեն անգամ, երբ ծովի խորը հատակից նմուշ ես վերցնում, նոր տեսակի էակ ես գտնում»: Վերջերս մի տարում գիտնականները ծովի խորքում ապրող 1451 նոր տեսակի կյանք են հաստատել: Մենք ծովի հատակին գոյություն ունեցող բաների կեսին անձանոթ ենք:

Հոբ 38-40 գլուխներում Աստված վերաբնեց իր ստեղծագործությունը Հոբի սիրույն: Երեք բանաստեղծական գլուխներում Աստված կարևորեց եղանակի հրաշալիքները, տիեզերքի վիթխարիությունը և ապրող էակների բազմազանությունը: Ապա խոսեց խորհրդավոր կոկորդիլոսի մասին: Կոկորդիլոսը այնպիսի էակ է, որ իր նմանը չունի. տեգերով ու նետերով հնարավոր չէ նրա մաշկը վնասել (Հոբ 41.7, 13), շնորհալի կերտվածք ունի (Հմ. 12) և ահավոր ատամներ (Հմ. 14): «Նրա բերանից վառված լապտերներ են դուրս գալիս և հրեղեն շանթեր են արձակում» (Հմ. 10), «երկրի վրա չկա բան, որ նման լինի նրան» (Հմ. 33):

Արդյոք ա՞յդ է Հոբ 41-ի պատգամը: Ո՛չ: Հոբ 41-ը ընդարձակում է մեր հասկացողությունը Աստծո՝ զարմանք պատճառող նկարագրի մասին: Սաղմոսերգուն իր հերթին այս միտքը ավելի է ընդլայնում, երբ գրում է. «Ահա ծովը՝ մեծ և լայնատարած ... նաև վիշապը, որ դու ստեղծեցիր, որ խաղ անի ծովի վրա» (Սաղմ. 103.25-26): Հոբի սարսափելի նկարագրությունից մենք սովորում ենք, թե Աստված այս վախազու էակների համար վանդակ խաղավայր չինեց:

Մենք ներկան ունենք՝ օվկիանոսները խուզարկելու: Հավիտենականությունը պիտի ունենանք՝ մեր փառավոր, խորհրդավոր ու խաղաղասեր Աստծուն մոտիկից ճանաչելու:

Աղոթք - Տե՛ր, ի՞նչ հիանալի երկիր ստեղծեցիր: Ամեն օր նոր հայտնություն եմք ունենում Քո մասին: Դու ամենահզորն ես, սակայն հաճելի Աստված ես: Ամեն:

Ստեղծագործության հետազոտությունը մեզ սովորեցնում է Արարչի մասին:

Կարդա՛ Յոթ 41.12-34

Ահա ծովը՝ մեծ և լայնատարած... Այնտեղ է վիշապը, որ դու ստեղծեցիր, որ խաղ անի ծովի հետ: Սաղմ. 103.25-26

Պանդուխտների հյուրընկալող պանդուխտներ

Երբ ամուսինս ու ես Սիեթլ քաղաք փոխադրվեցինք՝ իր քրոջը մոտիկ լինելու, չգիտէինք, թե որտեղ պիտի ապրեինք և ինչ գործ պիտի անեինք: Տեղական մի եկեղեցի մեզ օգտակար եղավ՝ կեցուցյան տեղ գտնելով: Հաջորդող երեք տարին մենք կարողացանք մեր վարձած բազմաթիվ ննջարաններով տան մեկ ննջարանում բնակվել ու մյուսները վարձով տրամադրել այլազգի ուսանողների: Բաժանելով մեր բնակարանն ու ուտելիքը աշխարհի ամեն կողմերից եկած ուսանողների հետ՝ մենք եղանք պանդուխտների հյուրընկալող պանդուխտներ:

Աստծո ժողովուրդը գիտի, թե ինչ է նշանակում տնից հեռու լինել: Հարյուրավոր տարիներ Իսրայելի ժողովուրդը տառացիորեն օտարական ու գերի էր Եգիպտոսի մեջ: Ղևտացիների 19-րդ գլխում, «Թող յուրաքանչյուրդ ակնածի իր հորից ու մորից» և «Մի՛ գողացեք» (Հմ. 3, 11)

ծանոթ ցուցումների կողքին Աստված հիշեցնում է Իր ժողովրդին, որ համակրանքով հոգ տանեն օտարականներին (Հմ. 33-34):

Թեև մեզնից քչերն են որպես Աստծո հետևողներ ունեցել աքսորի փորձառությունը, սակայն բոլորս էլ շատ լավ գիտենք, թե ինչ է նշանակում «օտարականներ» լինել այս երկրում (Ա. Պետ. 2.11): Մենք կոչում ունենք ստեղծելու հյուրասիրություն անող հավաքականություն և պանդուխտներ հյուրընկալելու Տիրոջ տան մեջ: Հյուրասիրությունը, որ ամուսինս ու ես վայելեցինք Սիեթլի մեջ, մեզ սովորեցրեց ուրիշներին հյուրընկալել: Սա Աստծո ընտանիքը լինելու հասկացողության սիրտն է (Հռոմ. 12.13):

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք, որ մեզ հյուրընկալում ես հավատքի Քո ընտանիքի մեջ: Տո՛ւր մեզ սրտեր ու տներ, որ ուրիշներին հյուրընկալենք: Ամեն:

Ո՞ւմ կարող եմ հյուրասիրություն ցուցաբերել այսօր:

Կարդա՛ր
Ղևտ. 19.1-9, 33-34

Եթե ձեր երկրում օտարական հաստատվի, նրան չնեղեք... Նրան սիրիր՝ քո անծի պես, որովհետեւ դուք էլ պանդուխտ եղաք Եգիպտացիների երկրում: Ղևտ. 19.33-34

Խարիսխ, երբ վախի մեջ ենք

Պատերազմո՞ղ: Ես եմ, որովհետև ամեն օր գոտեմարտում եմ նեղսրտության ու մտատանջության հետ: Մտահոգվում եմ ամեն բանի համար՝ մեծ ու փոքր: Օրինակ՝ պատանեկուլթյան շրջանում մի օր ոստիկաններին զանգեցի, երբ ծնողներս չորս ժամ ուշացան:

Աստվածաշունչը կրկին ու կրկին մեզ ասում է, թե չպիտի վախենանք: Մեր վախերը պետք է, որ մեր կյանքերին իշխեն: Մենք կարող ենք դժվար պարագաներ դիմագրավել, սակայն Աստված խոստանում է մեզ հետ լինել բոլոր բաների մեջ:

Վախի ու սարսափի ժամերիս Եսա-

յի 51.12-16-ը իրապես օգնեց ինձ: Այստեղ Աստված հիշեցնում է Իր ժողովրդին, թե Ինքը դեռ նրանց հետ է՝ իրենց կրած սուկալի չարչարանքի ժամանակ, ու Իր հանգստացնող ներկայութիւնը գերազույն ճշմարտութիւնն է: Հոգ է թե պարագաները ինչքան վատն են թվում, նա ժողովրդին ասում է. «Ես եմ, ես այն նույնն եմ, որ մխիթարեցի ձեզ» (Հմ. 12):

Միրում եմ այդ խոստումը: Այս ութ բառերը զգացական ամուր խարիսխ են եղել իմ հոգու համար: Միշտ այս խոստումին եմ կառչել, երբ կյանքս ու իմ անձնական հարատև սարսափը (Հմ. 13) ճնշող են թվացել: Այս հատվածի միջոցով Աստված ինձ հիշեցնում է, թե երբ իմ աչքերը վեր եմ բարձրացնում իմ վախերի պահերին և հավատքով նայում «Արարչին, որ ստեղծեց երկինքը» (Հմ. 13), խոստանում է հանգիստ պարգևել:

Աղոթք - Տե՛ր, երբեմն մեր դիմագրաված պայքարները թվում են շատ մեծ: Սակայն Դու ավելի հզոր ես: Օգնիր, որ մեր վախերի մեջ կարողանանք մեզ հանգիստ տվող Քո խոստումներին կառչել: Ամեն:

Աստծո՞ հանգստություն տվող ներկայությունը ավելի հզոր է, քան մեր վախերը:

Կարդա՛ Եսայի 51.12-16

Ես եմ, ես այն
նույնն եմ, որ մխի-
թարեցի ձեզ:
Ես. 51.12

Նա մեզ ճանաչում է

Աստված իմ մասին տեղյակ էր, երբ ես գիշերով դեպի մեր գյուղը երկարող հարյուր մղոն ճանապարհին մեքենա էի վարում: Նկատի առնելով իմ այդ գիշերվա վիճակը՝ այս հարցի պատասխանը պարզ չէր: Զերմությունս բարձրացավ, ու սաստիկ գլխացավ ունեցա: Աղոթեցի. «Տե՛ր, գիտեմ, թե ինձ հետ ես, սակայն ես ցավի մեջ եմ»:

Հոգնած ու տկար՝ մեքենաս կանգնեցրի մի փոքր գյուղի մոտ: Տասը բուսե հետո մի ձայն լսեցի: «Բարև՛: Օգնության կարի՞ք ունես»: Մի մարդ էր՝ գյուղի բնակիչ իր ընկերներով: Նրանց ներկայությունից լավ զգացի: Երբ իրենց գյուղի անունը տվեցին, որ կոչվում էր Նաամիսիալա, որ նշանակում է «Թագավորը գիտի իմ մասին», հիացա: Ես այս գյուղի մոտից շատ հաճախ անցել էի առանց կանգ առնելու: Այս անգամ Տերը այդ գյուղի անունով ինձ հիշեցրեց, թե, իրոք, Ինքը՝ Թագավորը, ինձ հետ էր, երբ նեղության մեջ ես մենակ էի ճանապարհի վրա: Քաջալերված՝ շտապեցի մոտակա հիվանդանոցը: Աստված մեզ լավ է ճանաչում, մինչ մենք մեր ամենօրյա գործերն ենք անում տարբեր տեղերում ու հանգամանքներում (Սաղմ. 138.1-4, 7-12): Նա մեզ չի լքում կամ մոռանում, ոչ էլ զբաղված լինելով՝ մեզ անտեսում է: Նույնիսկ երբ մենք նեղության կամ դժվարության մեջ լինենք, «խավարի» և «գիշերվա» մեջ (Հմ. 11-12), մենք իր ներկայությունից զրկված չենք: Այս ճշմարտությունը մեզ հույս է ներշնչում ու վստահեցնում, թե մենք կարող ենք Տիրոջը փառավորել, որ մեզ սքանչելի կերպով ստեղծել ու մեզ հետ է (Հմ. 14):

Կարդա՛ր
Սաղմոս 138.1-14

Տե՛ր, ինձ փորձեցիր ու ճանաչեցիր ինձ: Դու իմացար իմ նիստուկացը: Սաղմ. 138.1-2

Աղոթք - Շնորհակալ եմ, Տե՛ր, որովհետև միշտ գիտես, թե ես ուր եմ և ինչ եմ անում: Իմ ներսն ու դուրսը լավ գիտես: Երախտապարտ եմ, որ կարող եմ միշտ Քո հոգատարությանը վստահել: Ամեն:

Չոգ չէ թե ուր ենք, Աստված մեզ լավ է ճանաչում:

Մեր վերքերը թաքցնել

Տեղական մի եկեղեցու հյուր քարոզիչն էի, ու քարոզիս նյութը անկեղծ պատմությունն էր մեր կոտրածությունը Աստծուն ներկայացնելու ու իր բուժումը ստանալու մասին: Աղոթքով պատգամս ավարտելուց առաջ եկեղեցու հովիվը միջանցքում կանգնելով նայեց ներկաների աչքերին և ասաց. «Որպես ձեր հովիվ՝ ես առանձնաշնորհում ունեմ ձեզ տեսնելու շաբաթվա ընթացքում ու լսելու սիրտ ճակատի ձեր կոտրածության պատմություննե՛րը: Ու ապա շաբաթավերջին մեր պաշտամունքների ժամանակ ցավով դիտում եմ, թե ինչպես եք ձեր վերքերը թաքցնում»: Սիրտս ցավեց՝ անդրադառնալով, թե ինչպես ենք մեր վերքերն ու ցավերը պահում Աստծուց: Երբայեցիների նամակի հեղինակը նկարագրում է Աստծո խոսքը՝ որպես կենդանի ու ազդու: Շատերն ընդունել են, որ այս «խոսքը» Սուրբ Գիրքն է, սակայն դրանից շատ ավելին է: Հիսուսը Աստծո կենդանի խոսքն է: Նա մեր խորհուրդներն ու մտադրությունները արժևորում է ու տակավին սիրում է մեզ:

Հիսուսը մահացավ՝ մեզ հնարավորություն տալով ամեն պահի Աստծո ներկայությունը վայելելու: Ու մինչ գիտենք, թե իմաստություն չէ ամեն բան ամենքի հետ կիսելը, նաև գիտենք, թե Աստված ցանկություն ունի, որ եկեղեցին լինի այն տեղը, ուր մենք կարող ենք ապրել որպես Քրիստոսի հետևորդներ՝ կոտրածության ու ներված լինելու զգացումով, ինչպես նաև այն տեղը, ուր կարող ենք «իրար բռն վերցնել» (Գաղ. 6.2):

Ի՞նչ ես ուրիշներից թաքցնում: Եվ ինչպե՞ս ես փորձում Աստծուց էլ թաքցնել: Աստված մեզ տեսնում է Հիսուսի միջոցով ու տակավին սիրում է մեզ: Թույլ պիտի տա՞նք, որ Նա մեզ սիրի ու մեր վերքերը բուժի:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, խնդրում եմ օգնիր ինձ, որ կարողանամ բռններս ու ցավերս Քեզ բերել: Ամեն:

Աստված մեզ նայում է Հոր աչքերով:

Կարդա՛ր Երբայեցիներ 4.12-13

Աստծու խոսքը... սրտի մտքերն ու խորհուրդները քննող է: Եբր. 4.12

Լավագույն պարգևը

Երբ պայուսակս էի պատրաստում տուն վերադառնալու համար, մայրս մոտեցավ ինձ՝ իր ձեռքում բռնած իր՝ իմ շատ սիրելի մատանիներից մեկը՝ ինձ նվիրելու համար: Զարմացած հարցրի. «Ինչի՞ համար է այս նվերը»: Նա պատասխանեց. «Մտածում եմ, թե հիմա՛ պիտի ուրախանաս նրանով: Ինչո՞ւ սպասես մինչև մահս: Արդեն իմ մատին չեմ կարողանում դնել»: Ուրախությունը վերցրի այդ անակնկալ նվերը՝ որպես մորիցս վաղ տրված ժառանգություն:

Մայրս ինձ նյութական պարգև տվեց, սակայն Հիսուսը խոստանում է, թե իր Հայրը Սուրբ Հոգուն պիտի տա բոլոր նրանց, որոնք խնդրում են (Ղուկ. 11.13): Եթե ծնողները, որոնք մեղքով են մրոտած, կարող են իրենց զավակների կարիքները հոգալ՝ նրանց հարկ եղածը տալով, որքա՛ն ավելի մեր երկնավոր Հայրը պիտի տա իր զավակներին: Սուրբ Հոգու պարգևների միջոցով (Հովհ. 16.13), նեղությունների ժամանակ մենք կարող ենք հույսի, սիրո, ուրախության և խաղաղության փորձառությունը ունենալ ու այս պարգևները ուրիշների հետ բաժանել:

Մեր ֆիզիկական աճման օրերին հնարավոր է, որ ունեցել ենք ծնողներ, որոնք չեն կարողացել մեզ սիրել ու հոգալ պետք եղածի պես: Կամ էլ ունեցել ենք հայրեր ու մայրեր, որոնք եղել են փայլուն օրինակ զոհաբեր սիրո արտահայտության: Եվ կամ մեր փորձառությունը եղել է նրանց միջև ինչ-որ մի տեղ: Ինչպիսին էլ լինեն մեր հարաբերությունները մեր երկրավոր ծնողների հետ, մենք կարող ենք մեր երկնավոր Հոր խոստումներին վստահել, որ մեզ սիրում է անսպառ սիրով ու իր Սուրբ Հոգու պարգևներն է շնորհում:

Աղոթք - Երկնավոր Հայր, հիացած եմ Քո ունեցած սիրով: Օգնիր, որ Քո ներկայության վրա հաստատվեմ ու կիսեմ Քո սերն ուրիշների հետ: Ամեն:

Մեր Հայրը բարի պարգևներ է ընծայում:

Կարդա՛ր
Ղուկաս 11.9-13

...որոնցեցե՛ք և
կգոնե՛ք: Ղուկ.11.9

Երաշխավորի կարիք չկա

Երբ նախկինում կանոնավոր կերպով վարկը վճարելու փաստեր չլուծեցող մեկը դիմում է զբա համար՝ տուն կամ մեքենա գնելու, ընդհանրապես այն տրամադրող հաստատությունները պատրաստ չեն լինում տնտեսական վտանգ հանձն առնելու: Նրանց համար անձի խոստումները բավարար չեն առանց փաստացի տվյալների: Դրամատներն ուզում են գտնել մեկին, ով հավաստի տվյալներ ունի, ու պահաջում են, որ նա երաշխավոր լինի՝ ստորագրելով համաձայնագիրը: Երաշխավորի խոստումը վստահություն է տալիս զբառատանը, որ պարտքը պիտի վճարվի՝ համաձայն պայմանների: Եթե մեկը խոստում է տալիս մեզ տնտեսական, նյութական և կամ այլ պատժառնելով, մենք ակնկալում ենք, որ նա իր տված խոստումը պահի: Մենք ցանկանում ենք իմանալ, թե Աստված Իր տված խոստումը պիտի պահի⁶: Երբ նա խոստացավ Աբրահամին ու երդում տվեց ասելով «օրհնելով կօրհնեմ քեզ և բազմացնելով կբազմացնեմ քեզ» (Եբր. 6.14, Ծնն. 22.17), Աբրահամը նրա տված խոսքին վստահեց: Այնքան ժամանակ, որ ամբողջ տիեզերքի Արարիչը գոյ է, Իրենից ավելի մեծը չկա, ու միայն Ինքն է կարող երաշխավորել Իր տված խոստումը:

Աբրահամը պետք է սպասեր իր որդուն ծննդյան համար տրված խոստումի իրականացմանը (Եբ. 6.15): Հակառակ նրան, որ նա չտեսավ նրա մեծանալն ու բազմանալը, Աստված փաստեց Ինքն իրեն՝ հավատարիմ լինելով Իր խոստումին: Երբ նա խոստանում է միշտ մեզ հետ լինել (13.5), մեզ ապահով Իր ձեռքերի մեջ պահել (Հովհ. 10.29), մենք էլ կարող ենք Նրան վստահել՝ որպես հավատարիմ Աստված Իր տված խոստումին:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ ենք, որ Դու վստահելի ես: Ես ուրիշ խոստումի կարիք չունեմ՝ բացի Քո տված խոսքից: Օգնիր, որ ամեն օր ավելի ու ավելի Քեզ վստահեմ: Ամեն:

Աստօծ խոստումները վստահելի են. ուրիշ երաշխավորի կարիք չունենք:

Կարդա՛ր Եբրայեցիներ 6.13-20

Յիրավի մարդիկ իրենցից ավելի մեծով են երդվում, և բանը հաստատելու համար նրանց ամբողջ հակառակության վճիռը երդումն է: Եբր. 6.16

Պարզապես չեմ կարող անել

Վհատված մի աշակերտ ողբալով ասաց. «Պարզապես չեմ կարող անել»: Իր առջև դրված թղթի վրա նա տեսնում էր փոքր տառերով մի գրություն, դժվար մտքերի արտահայտման անկարելի ժամկետ՝ այդ պարտականությունը անելու: Նա իր ուսուցչի օգնության կարիքը ուներ: Մենք էլ նման վհատության փորձառությունը կարող ենք ունենալ, երբ կարդանք Հիսուսի Լերան Քարոզի մեջ. «Ձեր թշնամիներին սիրեցե՛ք» (Մատթ. 5.44): Բարկությունը սպանության չափ վատ է (Հմ. 22): Ցանկությունը շնության է հավասար (Հմ. 28): Ու եթե խորհենք, թե կարող ենք այս չափանիշներին համաձայն ապրել, կհանդիպենք այս խոսքին. «Արդ դուք կատարյալ եղեք, ինչպես որ կատարյալ է ձեր Հայրը, որ երկնքում է» (Հմ. 48): Օսվալդ Չամբերսն ասում է. «Լերան Քարոզը մեզ վհատեցնում է»: Սակայն նա սա նկատում է բարի, որովհետև «վհատության մեջ մենք ցանկանում ենք Հիսուսին մոտենալ որպես չքավորներ՝ Իրենից ստանալու համար»: Աստված հաճախ մեր մարդկային հայեցողությանը հակառակ թվացող ձևով է գործում. նրանք, որոնք գիտեն, թե չեն կարող անել իրենց ունեցած կարողություններ, նրանք են, ովքեր Աստծո շնորհն են ստանում: Ինչպես Պողոս առաքյալն է արձանագրում, «Ոչ թե մարմնական կողմից շատ իմաստուններ ... այլ Աստված ընտրեց այս աշխարհի հիմարներին, որպեսզի զորավորներին ամաչեցնի» (Ա. Կորնթ. 1.26-27):

Երբ հավատքով Աստծուն մոտենանք, Իր Հոգու միջոցով կվաթենք Նրա «արդարությունը, սրբությունը և փրկությունը» (Հմ. 30), ինչպես նաև Իր համար ապրելու շնորհն ու զորությունը:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք, որ օրհնում ես նրանց, որոնք հոգով աղքատ են, սգավոր են և քաղցած ու ծարավ են Քո արդարության համար: Դու ես մեր արդարությունը: Ամեն:

Որդու միջոցով մենք կարող ենք կյանքը վայելել Աստծո Թագավորության մեջ:

Կարդա՛ Ա Կորնթ. 1.26-31

Ուրեմն օրենքը մեզ համար դաստիարակ եղավ դեպի Դիսուս Քրիստոսը, որպեսզի հավատով արդարանանք: Գաղ. 3.24

Ի՞նչն է քո կիրքը

Դրամատան պաշտոնյաներից մեկը իր պատուհանի վրա ունի ուժեղ շարժակով շինված Շելբի Կոբբա մեքենայի մի նկար, որ Ֆորդ մեքենաշինական ընկերությունն է արտադրում: Մի օր, երբ դրամատանն էի, հարցրի, թե դա իրե՞նն էր: «Ո՛չ,- պատասխանեց,- դա իմ կիրքն է ու պատճառը՝ ամեն առավոտ ինձ ոտքի հանելու ու աշխատանքի գնալու: Մի օր այդ մեքենայից պիտի ունենամ»:

Լավ եմ հասկանում այս երիտասարդի ունեցած կրքոտ սերն ու բաղձանքը: Ես առիթը ունեցա մի բարեկամի Կոբբան վարելու: Իսկապես ուժեղ մեքենա է: Սակայն այս աշխարհի մեջ եղած ուրիշ բաների նման չարժե նրա համար ապրել: Նրանք, ովքեր Աստծուց զատ այլ բաների վստահեցին, «կորածանվեցին ու ընկան» Սաղմոսերգուհի Համաձայն (Սաղմ. 19.9):

Մեր փորձառություն մեջ մենք պետք է արժևորենք այն ճշմարտությունը, թե մենք Աստծո համար ենք, ու ոչինչ էի կարող նրան փոխարինել: Երբ գնում ենք այս կամ այն բանը, խորհում ենք, թե այդ բանը մեզ պիտի ուրախացնի, սակայն մանուկի նման, որ բազմաթիվ նվերներ է ստանում, մենք էլ ենք հարցնում. «Միայն այսօրն»։ Միշտ մի բան պակաս ենք տեսնում ու ավելին ցանկանում ունենալ: Աշխարհում ոչ մի բան էի կարող ամբողջովին գոհացնել: Նույնիսկ շատ լավ բաների մեջ միշտ կա հաճույքի մի սահման, ու մեր ուրախությունը շուտով չքանում է (Ա. Հովհ. 2.17): Ս. Լուիսը ճիշտ է, երբ ասում է. «Աստված էի կարող ուրախություն և խաղաղություն տալ իր անձից անկախ: Չկա այդպիսի բան»:

Աղոթք - Տե՛ր, ներիր մեզ, երբ ունենանք կրքեր ու այլ բաներ և կարևոր նկատենք դրանք մեր կյանքերի մեջ: Օգնիր, որ մեր գոհացումը գտնենք միայն Քո մեջ: Ամեն:

Ամեն սրտի մեջ կա փափագ, որ միայն Հիսուսը կարող է գոհացնել:

Կարդա՛ր Սաղմոս 19. 6-9

Ոմանց աչքը ռազմակառքերին է, ուրիշներինը՝ երիվարների: Իսկ մենք մեր Աստծու անուռն ենք կանչում: Սաղմ. 19.8

Խաչի միջոցով

Գործընկերս՝ Թոմը, իր գրասեղանին ունի ապակուց մի փոքրիկ խաչ: Նրա ընկերը՝ Յիլը, որ իր նման քաղցկեղից բուժված է, իրեն է տվել այդ խաչը, որպեսզի ամեն բանի նայի «խաչի միջոցով»: Այդ խաչը իր համար մնայուն հիշեցում է Աստծո սիրո և բարի նպատակների: Սա մարտահրավեր անող միտք է Հիսուսին բոլոր հավատացողների համար, հատկապես դժվար ժամանակներում: Շատ ավելի դյուրին է մեզ համար մեր դիմագրաված հարցերի վրա կենտրոնանալ, քան թե Աստծո սիրո:

Վստահաբար Պողոս առաքյալի կյանքը շատ լավ օրինակ է խաչածե հեռանկար ունենալու: Նա ինքնիրեն ներկայացրեց նեղություն ժամանակ որպես՝ «հալածված, բայց երեսից չընկած, վայր ընկած, բայց չկորած» (Բ Կորնթ. 4.9): Նա հավատաց, թե մեր ունեցած դժվար ժամանակներում Աստված գործի վրա է ու ասաց. «Մեր այժմյան թեթև նեղությունը անգերազանցելի հավիտենական փառքի մեծություն է գործում մեզ համար, քանի որ այս երևացող բաներին չենք նայում, այլ աներևույթներին» (Հմ. 17-18): «Մեր աչքերը կենտրոնացնել անտեսանելի բաների վրա» չի նշանակում հարցերը նվազեցնել: Փոյ Բարնեթը այս հատվածի իր մեկնաբանությունն մեջ բացատրում է՝ ասելով. «Վստահություն պիտի լինի Աստծո՝ մեզ համար ունեցած նպատակների ստուգության վրա: ...Սակայն մյուս կողմից կա ստույգ գիտակցությունը, թե մենք հույսով հառաչում ենք ցավով շողախված»: Հիսուսը իր կյանքը տվեց մեզ համար: Նրա սերը խոր ու զոհաբերող է: Երբ նայում ենք կյանքին «խաչի միջոցով», տեսնում ենք Նրա սերն ու հավատարմությունը, ու մեր վստահությունը Նրա հանդեպ ավելանում է:

Կարդա՛
Բ Կորնթ. 4.8-18

...ո՛չ մի ուրիշ բան չի կարող մեզ բաժանել Աստծու սիրուց, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մեջ է: Հռոմ. 8.39

Աղոթք - Հայր, սովորեցրու մեզ, թե Դու ով ես: Մեր վստահությունը ավելացրու ու մեր մտքերը լցրու Քո հեռանկարով: Ամեն:

Ամեն բանի նայիր խաչի միջոցով:

Տո՛ւն, քաղցր տուն

Տղաս հարցրեց. «Ինչո՞ւ պիտի մեր տունը թողնենք և ուրիշ տեղ գնանք»: Դժվար է բացատրել, թե ինչ է տունը, հատկապես հինգ տարեկան մանուկի համար: Մենք բնակարան ենք թողնում ու ոչ թե մեր տունը, որովհետև տունը այն տեղն է, ուր մեր սիրելիներն են: Տունը այն տեղն է, ուր կարոտով ցանկանում ենք վերադառնալ երկար ճամփորդությունից կամ էլ երկար աշխատանքային օրվանից հետո:

Երբ Հիսուսը վերնատան մեջ էր իր մահից մի քանի ժամ առաջ, Իր աշակերտներին ասաց. «Ձեր սրտերը թող չխռովվեն» (Հովհ. 14.1): Աշակերտները վստահ չէին իրենց ապագայի հանդեպ,

որովհետև Հիսուսը Իր մահվան մասին խոսեց նրանց հետ: Սակայն միաժամանակ վստահեցրեց նրանց Իր ներկայություն մասին ու հիշեցրեց, թե Իրեն դարձյալ պիտի տեսնեին: Նրանց ասաց. «Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան... գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու» (Հմ. 2): Նա կարող էր ուրիշ բառեր գործածել երկինքը նկարագրելու համար: Սակայն ընտրեց բառեր, որոնք նկարագրեցին ոչ թե անհանգիստ կամ անձանոթ մի տեղ, այլ տե՛ղ, ուր Հիսուսը՝ մեր սիրելի Փրկիչը պիտի լինի: Ս. Լուբսը գրեց. «Մեր Հայրը մեզ թարմացնում է մեր ճամփորդության ընթացքում հանգստավետ ու հաճելի իջևանների մեջ, սակայն չպիտի քաջալերի, որ դրանք մեր տունը նկատենք»: Մենք կարող ենք Աստծուն շնորհակալություն հայտնել կյանքի մեջ մեր ունեցած «հաճելի իջևանների» համար, սակայն հիշենք, թե մեր իսկական տունը երկինքն է, ուր «ամեն ժամանակ Տիրոջ հետ կլինենք» (Ա. Թեա. 4.17):

Կարդա՛
Յովհաննես 14.1-14

...Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու:
Յովհ. 14.2

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմք երկնքի՝ մեր հավիտե-
ցական տան համար: Ամեն:

Առաջ եմք գայում՝ հավիտյան Տիրոջ հետ լինելու:

Ապաստան փոթորկից

Բարեկամս՝ Ջոնը, մրրիկներ էր որոնում Օկլահոմա նահանգում: Նա ուշադրությունը հետախուզում էր դրանք ուրիշների հետ տեղական «ուղարով» ու ձայնասփյուռով՝ փորձելով ապահով հեռավորություն պահել, մինչ դիտում էր դրանց ավերիչ ուղին, որպեսզի կարողանա վտանգի շրջանում եղող մարդկանց զգուշացնել ու տեղեկացնել հանկարծակի փոփոխությունների մասին:

Մի օր խողովակաձև մի ամպ հանկարծ իր ուղղությունը փոխեց, և Ջոնը իրեն մեծ վտանգի առջև գտավ: Բարեբախտաբար ապահով ապաստարան գտնելով՝ նա փրկվեց: Ջոնի փորձառությունը այդ կեսօրից հետո ինձ մտածել է տալիս մի այլ քանդիչ ուղու՝ մեր մեջ եղած մեղքի մասին: Աստվածաշունչը մեզ ասում է. «Բայց ամեն մեկը փորձվում է իր իսկ ցանկությունից հրապուրված ու խաբված: Ու այնուհետև, երբ ցանկությունը հղացված է, ծնվում է մեղքը, և մեղքն էլ, երբ կատարվում է, մահ է ծնում» (Հակ. 1.14-15): Այստեղ կա առաջացում և ընթացք: Ինչ որ նախապես անվնաս է թվում, կարող է շուտով վերահսկողությունից դուրս գալ և ավերածություն առաջացնել: Սակայն երբ փորձությունը ապաստան, Աստված մեզ ապաստան կիստատանա սաստկացող փոթորկից:

Աստծո խոսքն ասում է, թե Նա մեզ բնավ չի փորձում: Մենք մեր ընտրությունները միայն կարող ենք վատաբանել: Սակայն երբ մենք փորձվենք, «փորձության հետ ելքն էլ կպատրաստի, որ կարողանաք համբերել» (Ա. Կորնթ. 10.13): Մինչ փորձության ժամին իրեն ենք դիմում օգնության համար, Հիսուսը մեզ պետք եղած ուժն է պարգևում՝ դիմազրավելու համար:

Աստծո խոսքն ասում է, թե Նա մեզ բնավ չի փորձում: Մենք մեր ընտրությունները միայն կարող ենք վատաբանել: Սակայն երբ մենք փորձվենք, «փորձության հետ ելքն էլ կպատրաստի, որ կարողանաք համբերել» (Ա. Կորնթ. 10.13): Մինչ փորձության ժամին իրեն ենք դիմում օգնության համար, Հիսուսը մեզ պետք եղած ուժն է պարգևում՝ դիմազրավելու համար:

Աղոթք - Տեր Հիսուս, Դու մեղքին ու մահին հավիտենապես հաղթեցիր Բո խաչով ու դատարկ գերեզմանով: Օգնիր, որ ապրեմ ու ուռճանամ այն ներումով, որ միայն Դու կարող ես տալ: Ամեն:

Մեր Փրկիչը խաղաղեցնում է մեր փորձության փոթորիկները:

**Կարդա՛ր
Հակոբոս 1.12-18**

Ինձ համար բարիք է մերձենալ Աստծուն, հույսս դնել Տիրոջ վրա:
Սաղմ. 72.28

ԻՆչ էլ լինի, հուսա՛

1 1988-ից ի վեր **Զհաց Մեր** Հանապազորդի մեջ իմ գրած հար-
լյուրավոր հոդվածներից միայն մի քանիսն են մտքիս մեջ
լավ տպավորված: Այդ հոդվածներից մեկը 1990-ականների կե-
սերին է գրված, ուր խոսում եմ իմ վեց տարեկան մանչուկի՝
Սթիվի հետ մանկական ժամանակ անցկացնելուս մասին, երբ
երեք աղջիկներս միսիոներական համագումարի էին գնացել:

Մինչ հաճույքով գնում էինք դեպի
օդակայան, Սթիվը ինձ դառնալով
ասաց. «Այդքան էլ հաճելի չէ այս օրը
առանց Մելիսայի»: Կյանքը այդքան էլ
«հաճելի» չէր իր ութ տարեկան քրոջ,
մեր աղջկա՝ փոքրիկ Մելիսայի՝ ավտով-
թարից մահանալուց հետո: Ժամանակը
կարող է վիշտը մեղմացնել, սակայն
ոչինչ չի կարող այդ ցավը ամբողջովին վերացնել: Ժամանակը
չի կարող բուժել այդ վերքը: Սակայն կա մի բան, որ կարող է
օգնել. Մխիթարիչ Աստծո խոստումը լսելը, նրա մասին խո-
կալն ու սփոփանքի խոստումի համն առնելը:

Լսել - «Անսպառ են Տիրոջ ողորմությունները, նրա գթու-
թյունները չեն նվազում» (Ողբ. Եր. 3.22):

Խոկալ - «Չար օրերին նա ինձ թաքցրեց իր վրանում, պատս-
պարեց ինձ իր վրանի ծածկի տակ» (Սաղմ. 26.5):

Համը առնել - «Դա է թշվառությանս մեջ ինձ մխիթարողը,
քանզի քո խոսքն ինձ պահպանեց» (Սաղմ. 119.50):

Կյանքը երեք նույնը չի կարող լինել, երբ սիրելիին ենք
կորցնում: Սակայն Աստծո խոստումը հույս ու մխիթարու-
թյուն է պարգևում:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ մոտ ես ու միշտ իմ կող-
քին: Երախտապարտ եմ իմ ցավերի մեջ Քո մխիթարության
ու խաղաղության համար: Ամեն:

Աստծո խոսքը մխիթարության ճշմարիտ աղբյուրն է:

Կարդա՛
Սաղմոս 33.15-18

Դա է թշվառու-
թյանս մեջ ինձ
մխիթարողը, քան-
զի քո խոսքն ինձ
պահպանեց:
Սաղմ. 118.50

Հսկող հոգատարություն

Մինչև դռնից դեպի դպրոց դուրս թռչելը մանչուկիս հարց-րի, թե մաքրե՞լ է արդյոք ատամները: Նորից հարցնելով՝ նրան հիշեցրի ճշմարտությունն ասելու կարևորությունը: Առանց լսելու իմ ազնիվ խրատը՝ կատակախառն ասաց, թե բաղնիքում տեսախցիկ պիտի դնեի, որպեսզի կարողանայի ստուգել, թե մաքրե՞լ էր ատամները, և ինքն էլ ստելու հնարավորություն չէր ունենա:

Մինչ նկարահանող սարքի գործա-ծությունը կարող է մեզ հիշեցնել կա-նոններին հետևելու մասին, դեռ կան տեղեր, ուր կարող ենք գնալ աննկատ, և կամ կան ձևեր՝ խույս տալու երևալուց: Թեև կարող ենք խույս տալ կամ խաբել նկարահա-նող մեքենային, սակայն մենք մեզ ենք խաբում, եթե մտածում ենք, թե Աստծո տեսողության ցանցից դուրս ենք:

Աստված հարցնում է. «Եթե մարդը թաքնվի թաքստոցում, մի՞թե ես նրան չեմ տեսնի» (Եր. 23.24): Այս հարցի մեջ թե՛ քաջալերանք և թե՛ զգուշացում կա: Հուշումն այն է, որ մենք չենք կարող Աստծուց ծածուկ լինել: Չենք կարող նրան խա-բել: Ամեն ինչ, որ անում ենք, նրան տեսանելի է:

Քաջալերանքը այն է, թե չկա աշխարհի կամ երկնքի մեջ մի տեղ, ուր մենք կարող ենք մեր Երկնավոր Հոր հսկող հոգատա-րությունից դուրս մնալ: Նույնիսկ երբ միայնակ զգանք, Աստ-ված մեզ հետ է: Հոգ չէ թե ուր ենք գնում. թող որ այդ ճշմար-տություն գիտակցությունը մեզ քաջալերի՝ Իր Խոսքին հնա-զանդվելու ու մխիթարվելու: Նա հսկում է մեզ:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, շնորհակալ եմ, որ տեղ չկա, ուր կա-րողանամ գնալ Քո սիրո տեսողության սահմաններից դուրս: Գիտեմալով, որ ինձ տեսնում ես, օգնիր, որ Քեզ պատվեմ իմ խոսքերով ու արարքներով: Ամեն:

Մենք երբեք մեր Երկնավոր Հոր հսկող հոգատարությունից դուրս չենք:

Կարդա՛
Երեմիա 23. 20-24

-Միթե երկինքն ու երկիրը ես չե՞մ լց-ցում, - ասում է Տերը:
Եր. 23.24

Յիսուսը գիտի ինչո՞ւ

Ունեմ բարեկամներ, որոնք մասամբ բուժում են ստացել, սակայն պայքարում են հիվանդությունների պատճառած ցավերի դեմ: Ուրիշ բարեկամներ էլ մոլուխյան հիվանդություններից են բուժվել, սակայն դեռ պայքարում են անկարողության ու դժկամության զգացումներով: Ու ես հարց եմ տալիս, թե ինչո՞ւ Աստված նրանց ամբողջովին չի բուժում: Մարկոս 8.22-26-ի մեջ կարդում ենք Հիսուսի՝ մի կույրի բժշկելու պատմությունը: Հիսուսը նախ մարդուն գյուղից դուրս տարավ: Հետո թքեց նրա աչքերին և «ձեռքը վրան դրեց»: Մարդը իր շուրջ նայելով ասաց. «Տեսնում եմ քայլող մարդկանց, որոնք ծառերի նման են»: Ապա Հիսուսը նորից իր ձեռքերը մարդու աչքերին դրեց, և այս անգամ նա ամեն բան հստակ տեսավ:

Իր առաքելության մեջ Հիսուսի խոսքերն ու գործերը ապշեցրին մարդկանց ու իր հետևորդներին (Մատթ. 7.28, Ղուկ. 8.10, 11.14), ինչպես նաև շատերին Նրանից հեռու պահեց (Հովհ. 6.60-66): Կասկած չկա, որ այս երկու մասով եղած հրաշքը շատերին չփոթեցրեց: Ինչո՞ւ է նա անմիջապես չբուժեց այս մարդուն:

Զգիտենք ինչու: Սակայն Հիսուսը գիտեր, թե մարդն ու դիտող աշակերտները ինչի կարիքն ունեին այդ պահին: Նա նաև գիտի, թե մենք ինչի կարիք ունենք այսօր, որ մեզ իրեն ավելի կարող է մոտեցնել: Թեև շատ անգամ չենք հասկանում, սակայն կարող ենք վստահ լինել, որ Աստված գործում է մեր ու մեր սիրելիների կյանքերի մեջ: Նա պիտի տա մեզ պետք եղած գորությունը, քաջությունն ու հստակությունը, որպեսզի շարունակենք իրեն հետևել:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմք, որ մեզ շատ լավ ես ճանաչում ու մեր կարիքները հոգում ես: Տո՛ւր մեզ աչքեր՝ Քեզ տեսնելու, և սիրո՛ւ Քո խոսքը հասկանալու: Ամեն

Տե՛ր, մեր աչքերը բաց. ուզում ենք Յիսուսին տեսնել:

Ռոբերտ Քալլ

Կարդա՛ր
Մարկոս 8. 22-26

Եվ երբ որ Յիսուսն այս խոսքերն ավարտեց, բազմությունը զարմանում էր նրա ուսուցումի վրա:

Մատթ. 7.28

Կատարյալ անկատարելիությունը

Քողեջի դասախոսներիցս մեկը, ակնարկելով ձգձգումով մղված իմ կատարելությունից, սուփորությունը, իմաստուն խրատ տվեց. «Թույլ մի՛ տուր, որ կատարյալը լավի թշնամին լինի», ու բացատրեց, թե կատարելության ձգտումը կարող է արգելել աման համար անհրաժեշտ արկածախնդրությունը: Ընդունելը, որ իմ աշխատանքը միշտ էլ կատարյալ չպիտի լինի, ինձ պիտի տա անհույս ազատությունը: Պողոս առաքյալը ավելի կարևոր պատճառ բերեց՝ կատարյալ լինելու մեր ձգտումից հրաժարվելու՝ ասելով, թե ձգտումը Քրիստոսին կարոտ լինելու մեր գիտակցությունն է կուրացնում: Առաքյալը այս դժվար դասը սուփորեց: Տարիներ շարունակ Աստծո օրենքին կատարելապես հնազանդվելու համար մաքառելուց հետո Հիսուսին հանդիպելով ամեն բան փոխվեց (Գաղ. 1.11-16): Պողոսը անդրադարձավ, թե եթե իր

Կարդա՛ Եփեսացիներ 3.8-19

Որպեսզի իր հարուստ փառքի համեմատ տա ձեզ, որ իր Հոգու միջոցով ներսի մարդու մեջ գործությամբ հաստատվեք:
Եփես. 3.16

Ջանքերը բավարար էին կատարյալ և Աստծո հետ ուղիղ լինելու համար, «ուրեմն՝ Քրիստոսը զուր տեղը մեռավ» (Գաղ. 2.21): Հրաժարվելով իր անձին վստահելու ջանքից՝ կարող էր Քրիստոսի՝ իր մեջ բնակության (Հմ. 20) և միայն իր անկատարելիությունով Աստծո կատարյալ զորության փորձառությունը ունենալ: Սա չի նշանակում, որ մենք մեղքի դեմ պիտի չկանգնենք (Հմ. 17), սակայն նշանակում է, որ մենք պետք է դադարենք մեր ուժին վստահելուց՝ հոգեպես աճելու համար (Հմ. 20):

Այս կյանքի մեջ մենք միշտ աճող ընթացքի մեջ պիտի լինենք: Սակայն երբ մեր սրտերը Միակ Կատարյալին ձգտեն, Հիսուսը այնտեղ պիտի բնակվի (Եփ. 3.17): Նրա մեջ արմատաորված՝ մենք ազատ պիտի լինենք ավելի աճելու և խորանալու իր սիրո մեջ:

Աղոթք - Տեր, հաճախ ենք փոխում Քեզ հետ եղած ուրախությունն ու ազատությունը մեր անձերին վստահելու բռնով: Օգնիր, որ խոնարհությամբ Քեզ ապավինենք ու խորանանք Քո սիրո մեջ: Ամեն:

Մենք ազատ ենք՝ աճելու Հիսուսի սիրով:

Անձնուրաց ծառայություն

Մի խումբ մարդիկ գետնին տապալված հսկա ծառի մոտ փոքրացած կանգնել էին, երբ տարեց մի կին, հենված իր գավազանին, նկարագրեց գիշերվա մեծ փոթորիկը ու հուզումով ասաց. «Մեր փառավոր հին կնձենիի ծառը արմատախիլ եղավ ու ընկավ մեր գեղեցիկ քարաշեն պատի վրա, որ ամուսինս էր շինել, երբ մենք ամուսնացանք: Մենք շատ էինք սիրում այդ պատը: Հիմա պատը չկա, ինչպես ինքը չկա»:

Հաջորդ առավոտ, մինչ նա նայում էր այն աշխատավորներին, որոնք մաքրում էին գետնին տապալված ծառը, ժպիտ գծագրվեց նրա դեմքին: Ճյուղերի միջից նշմարեց իր մարգագետնին հոգ տանող այն երկու մարդկանց ու պատանուն, որոնք վերաշինում էին իր սիրելի պատը:

Եսայի մարգարեն նկարագրում է աստվածահաճո այն ծառայությունը, որ հրճվանք է տալիս շուրջիններին, ինչպես այս պատ նորոգողները արեցին այս տարեց կնոջը: Այս հատվածը մեզ սովորեցնում է, թե Աստված գնահատում է ուրիշներին մեր արած անձնուրաց ծառայությունները՝ փոխանակ անիմաստ կրոնական ծեսերի: Իրականության մեջ Աստված կրկնակի օրհնություն է պարգևում իր զավակներին անձնուրաց ծառայությունների համար: Առաջին՝ Աստված գործածում է մեր կատարած կամավոր արարքները անպատասպար դժբախտների համար (Ես. 58.7-10): Երկրորդ՝ նա պատվում է նրանց, որոնք ծառայում են նորոգվելով կամ վերականգնելով մեր վաստակը՝ որպես հզոր դրական ուժ Իր թագավորության մեջ (Հմ. 11-12): Այսօր դու ի՞նչ ծառայություն պիտի մատուցես:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ ուրիշների կատարած գործերով մեզ վեր ես բարձրացնում ու հրավիրում ես մեզ նույնը անելու: Ամեն:

Ուրիշներին մատուցած անձնուրաց ծառայությունը Աստծուն փառք է բերում:

Կարդա՛ եսայի 58.6-12

Եթե... քո հացը հոժար սրտով քաղցածներին տաս և չքավոր մարդկանց կշտացնես, այն ժամանակ խավարի մեջ կժազի քո լույսը: Ես. 58.10

Սիրո հորդառատ արտահայտություն

Ամեն տարի մեր ամուսնուլթյան տարեդարձի առթիվ ամուսինս՝ Ալենը, ինձ թարմ ծաղիկների մեծ փունջ է նվիրում: Երբ աշխատանքը դադարեցրեց ընկերուլթյան վերադասավորման ծրագրերի պատճառով, չահնկալեցի, որ իր այս չափագանցված սիրո արտահայտուլթյունը շարունակվի: Սակայն մեր ամուսնուլթյան 19-րդ տարեդարձին ցայտուն գույներով ծաղկի մեծ փունջը սիրով ողջունեց ինձ մեր ճաշասենյակի սեղանի վրայի իր սովորական տեղից, որովհետև Ալենը կարևոր նկատեց շարունակել մեր այս տարեկան սովորուլթյունը, մի քիչ դրամ խնայեց ամեն ամիս՝ փստահ լինելու, որ բավարար գումար պիտի ունենար իր այս անձնական սիրո զգացումը ցույց տալու համար:

Կարդա՛ր
Բ Կորնթ. 9.6-15

Ամեն բանում ամեն լիությամբ հարստացած կլինեք:
Բ Կորնթ. 9.11

Ամուսնուս այս ուշադիր ծրագրումը ցույց տվեց լիառատ առատաձեռնուլթյուն՝ նման Պողոս առաքյալի արած քաջալերանքին, երբ գրեց Կորնթոսի հավատացյալներին: Նրան գնահատեց եկեղեցին իրեն դիտումնավոր և խանդավառ օժանդակուլթյան համար (Բ Կորնթ. 9.2, 5), հիշեցնելով նրանց, որ Աստված սիրում է ցնծուլթյամբ տվողներին (Հմ. 6-7): Ի վերջո, ոչ ոք մեր սիրո Հոգատարից ավելին չի տալիս, որ միշտ պատրաստ է մեր բոլոր կարիքները հոգալու (Հմ. 8-10): Մենք կարող ենք առատաձեռն լինել ամեն տեսակի տվչուլթյան մեջ՝ հոգատար լինելով իրար հանդեպ, որովհետև Տերը մեր բոլոր նյութական, զգացական և հոգևոր կարիքներն է հոգում (Հմ. 11): Տալով՝ մենք մեր շնորհակալուլթյունն ենք հայտնում Աստծուն մեզ իր բոլոր տվածների համար: Մենք նույնիսկ կարող ենք ուրիշներին մղել Տիրոջը փառավորելու և տալու Աստծո պարգևներից (Հմ. 12-13):

Աղոթք - Տեր, խնդրում եմ օգնիր մեզ Քո անսահման սիրուն ու առատաձեռնությանը վստահելու, որպեսզի մենք էլ ուրիշներին կարողանանք տալ, ինչպես Դու ես հավատարիմ կերպով մեզ տվել: Ամեն:

Առատաձեռնությունը ցույց է տալիս վստահություն Աստծո սիրո ու հավատարիմ նախատեսության հանդեպ:

Մեղուներ և օձեր

Մի շարք խնդիրների լուծում «Հայրիկ» անունն է կրում: Օրինակ՝ վերջերս զավակներս նկատեցին, որ մեղուները տեղափոխվել են մեր տան առջև գտնվող կրածույլ գավիթի ճեղքի մեջ, ուստի միջատներ սրսկելու սարքը վերցնելով դուրս եկա նրանց դեմ պայքարելու: Հինգ անգամ խայթեցին: Չեմ սիրում խայթոցը, սակայն նախընտրում եմ ինձ խայթեն, քան թե զավակներիս կամ կնոջս: Ընտանիքիս հոգ տանելը պարտականությունների ցուցակիս մեջ առաջին տեղում է: Զավակներս խնդիր տեսան և ինձ դիմեցին, որ հնարավոր ամեն ինչ անեմ, ու վստահեցին, որ իրենց պաշտպանեմ իրենց սարսափեցնող մեղուներից:

Մատթ. 7-ի մեջ Տեր Հիսուսը սովորեցնում է մեր կարիքներն Աստծուն ներկայացնել (Հմ. 7)՝ մեր խնդրանքները Նրան վստահելով: Օրինակ՝ Նա մարդկային նկարագրի մի հանգամանքն է ներկայացնում. «Ձեզանից ո՞վ է այն մարդը, որից եթե զավակը հաց ուզի, մի՞թե քար կտա նրան: Եվ եթե ձուկ ուզի, մի՞թե նրան օձ կտա» (Հմ. 9-10): Միտող ծնողների համար պատասխանը հստակ է: Սակայն Հիսուսը պատասխանում է՝ մեզ մարտահրավեր կարդալով, որ չկորցնենք մեր հավատքը մեր Հոր առատաձեռն բարության հանդեպ: «Արդ, եթե դուք, չար լինելով, ձեր զավակներին բարի պարգևներ տալը գիտեք, հապա Ձեր հայրը, որ երկնքում է, որքա՞ն առավել բարիքներ կտա նրանց, ովքեր իրենից խնդրում են» (Հմ. 11): Չեմ կարող երեակայել զավակներիս ավելի սիրելը, սակայն Հիսուսը մեզ վստահեցնում է, թե երկրային հայրերի սերը խավարում է Աստծո՝ մեր հանդեպ ունեցած սիրուց:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ մեզ շատ ես սիրում, նույնիսկ մեր ամենից լավ երկրային հորից ավելի: Ամեն:

Մեր երկնավոր Հորը կարող ենք վստահել մեր բոլոր կարիքների համար:

Կարդա՛ Մատթոս 7.7-11

Արդ եթե դուք, չար լինելով, ձեր զավակներից բարի պարգևներ տալը գիտեք, հապա ձեր Հայրը, որ երկնքում է, որքա՞ն առավել բարիքներ կտա նրանց, ովքեր իրենից խնդրում են:
Մատթ. 7.11

Վշտի մեջ հույս

Երբ 19 տարեկան էի, իմ մոտիկ բարեկամներից մեկը ավտովթարից մահացավ: Հաջորդող շաբաթներին ու ամիսներին ամեն օր վշտի փակուղու միջով էի անցնում: Երիտասարդ ու սքանչելի մարդու կորուստը իմ տեսողությունն ամպոտեց, և եղան ժամանակներ, երբ չգիտեի, թե ինչ էր կատարվում շուրջս: Կույր զգացի՝ ցավով ու վշտոտ, և պարզապես չկարողացա Աստծուն տեսնել:

Ղուկաս 24-ի մեջ երկու աշակերտներ Հիսուսի մահից հետո շփոթված ու կտորված սրտով չիմացան, թե քայլում են հարույթուն առած իրենց Վարդապետի հետ, նույնիսկ երբ Նա Աստծո Խոսքից բացատրեց նրանց, թե ինչ¹ և խոստացյալ Փրկիչը պետք է մեռներ ու հարույթուն առներ: Երբ Նա հացն առավ ու կտրեց, միայն այն ժամանակ իմացան, որ Հիսուսն է (Հմ. 30-31): Թեև Հիսուսին հետևողները մահը դիմագրավեցին, երբ նա մահացավ, սակայն Նրա հարույթյան միջոցով Աստված դարձյալ նրանց հույս ներշնչեց:

Այդ աշակերտների նման մենք էլ շփոթով ու վշտով խորտակված ենք զգում: Սակայն կարող ենք հույս և մխիթարություն ունենալ այն իրողության մեջ, որ Հիսուսը կենդանի է ու գործի վրա՝ աշխարհի ու մեր մեջ: Թեև մենք տակավին վիշտ ու նեղություն ենք դիմագրավում, սակայն կարող ենք խնդրել, որ Քրիստոսը մեզ հետ քայլի մեր վշտի փակուղու մեջ: Որպես աշխարհի Լույս (Հովհ. 8.12)՝ Նա հույսի շողեր կարող է բերել՝ պայծառացնելու մեր մշուշապատ կյանքը:

Աղոթք - Տեր Աստված, շնորհակալ եմք, որ իսկական լույսն ես խավարի մեջ: Երբ տխուր եմ ու շփոթված, հույս տուր ինձ և օգնիր, որ կարողանամ Քո փառքը տեսնել: Ամեն:

Թեև մենք սգում ենք, հույս ունենք Տեր Հիսուսով:

Կարդա՛ր Ղուկաս 24.13-32

Եվ նրանց աչքերը բացվեցին, ու նրան ճանաչեցին, և նա աներևութացավ նրանցից: Ղուկ. 24.31

Մարտահրավերներին հաղթել

Ամիսը մի անգամ հավաքվում էինք մեր նախանշած նպատակների իրականացման հաշվետվության համար: Ընկերուհիս՝ Մերին, ուզում էր իր ճաշասենյակի աթոռները նորոգել տարվա ավարտից առաջ: Նոյեմբերի մեր հանդիպմանը սրամտորեն տեղեկացրեց իր արածը հոկտեմբեր ամսին. «Տասր ամիս և երկու ժամ տևեց աթոռներս նորոգելու գործը»: Ամիսներ շարունակ չկարողանալով ճարել անհրաժեշտ նյութերը կամ գտնել ազատ ժամանակ իր պահանջկոտ աշխատանքից ու զավակների կարիքներից՝ ծրագրի կատարումը խլեց երկու ժամի նվիրում գործն ավարտելու:

Տերը Նեեմիային կանչեց ավելի մեծ ծրագրի համար՝ 150 տարի քանդված մնալուց հետո Երուսաղեմի պարիսպները շինելու (Նե. 2.3-5, 12): Մինչ նա առաջնորդեց ժողովրդին աշխատանքի մեջ, նրանք ծաղրի, հարձակումի ու մեղք գործելու փորձություն ենթակա եղան (4.3 և 8, 6.10-12): Սակայն Աստված նաև զինեց նրանց, որ հաստատակամ շարունակեն իրենց աշխատանքը ու ավարտեն այդ վճատեցնող գործը միայն հիսուներկու օրվա մեջ: Նման մարտահրավերների հաղթելը անձնական ցանկություններից ու նպատակներից շատ ավելին է պահանջում: Երբ Աստված մեզ հորդորում է հանձնելով մի պարտականություն, լինի դա հարաբերություն վերանորոգելը կամ բաժանել այն, ինչ Ինքն է արել մեր կյանքում, Նա մեզ տալիս է պետք եղած ձեռքն ու կարողությունը՝ շարունակելու մեր ջանքը և անելու այն, ինչ Նա է մեզնից խնդրել, հոգ չէ թե ինչ մարտահրավերներ են հանդիպում մեր ճանապարհին:

Աղոթք - Տե՛ր, խնդրում եմ զինիր Քո զորութունով, որպեսզի կարողանամ հարատևել ու ամբողջացնել ինձ հանձնած գործդ: Թող իմ աշխատանքը Քեզ պատիվ բերի: Ամեն:

Աստված զինում է մեզ՝ մեր առջև դրված բոլոր արգելքներին հաղթելու և ամբողջացնելու մեզ հանձնված պարտականությունը:

Կարդա՛
Նեեմիա 6.1-9, 15

Պարիսպն ավարտվեց Իլուլ ամսի քսանհինգին հիսուներկու օրվա ընթացքում: Նե. 6.15

Մեզ նման մեղավորներ

Էղբիթը որևէ հետաքրքրություն չուներ կրոնի և հավատքի հանդեպ: Սակայն մի կիրակի առավոտ որոշեց իր տան մոտ եղող եկեղեցին գնալ՝ փորձելով գտնել մի բան իր դժգոհ հոգու համար: Այդ օրվա Սուրբ Գրային հատվածը, որ հովիվը կարդաց, Ղուկաս 15.1-2-ն էր: «Բոլոր մաքսավորներն ու մեղավորները մոտենում էին նրան, որ լսեին նրան: Փարիսեցիներն ու դպիրները տրտնջում էին ու ասում. «Սա մեղավորներին ընդունում է ու նրանց հետ ուտում»:

Այդ էր Աստծո խոսքը, սակայն էղբիթը լսեց. «Սա կընդունի մեղավորներին և էղբիթին էլ նրանց հետ»: Նա նստարանի վրա իրեն շտկեց: Սակայն շուտով անդրադարձավ իր սխալին, սակայն խորհուրդը, թե Հիսուսը մեղավորներին ընդունում է և նրանց հետ էղբիթին, նրան մեծապես տպավորեց: Սկսեց Ավետարանները կարդալ և որոշեց հավատալ Հիսուսին ու Նրան հետևել:

Հիսուսի օրերին կրոնական առաջնորդները զայրացան այն իրողությունից, որ նա մեղավորներին՝ ահավոր մարդկանց հետ ուտում և խմում է: Իրենց կանոնները արգելել էին նրանց նման մարդկանց հետ հաղորդակցություն մեջ մտնել: Սակայն Հիսուսը կարևորություն չտվեց շինծու կանոններին: Նա ընդունեց և իր շուրջ հավաքեց մերժվածներին ու նախատվածներին, հոգ չէ թե նրանք որքան էին մերժված մարդկանցից:

Գիտե՞ս, ճիշտ է, որ Հիսուսն ընդունում է մեղավորներին և քեզ:

Աղոթք - Երկնավոր Զայր, չենք կարող բավարար չափով շնորհակալ լինել Քո Որդու սիրո համար, որ մեզ նման մերժվածներին ու մեղավորներին ընդունում է ու դառնում ճանփան՝ մեզ դեպի Քեզ առաջնորդելու: Ամեն:

Աստված հետապնդում է մեզ մեր երկմտանքի մեջ, ընդունում մեզ մեր մեղքերով ու բռնում մեզ մեր կոտրածության մեջ: **Սքոթ Սմիթ**

Կարդա՛ր Ղուկաս 15.1-7

Սա մեղավորներից ընդունում է ու նրանց հետ ուտում: Ղուկ. 15.2

Անսահման սեր

Մի իմաստուն բարեկամ խրատեց ինձ, որ զգուշանամ վիճաբանության ընթացքում «դո՛ւ միշտ» և «դո՛ւ երբեք» բառերը գործածելուց, հատկապես իմ ընտանիքի հետ: Որքա՛ն դյուրին է մեր շուրջիներին քննադատել ու սիրո պակասի զգացումը ունենալ մեր սիրելիների հանդեպ: Սակայն բնավ տարբերություն չկա Աստծո՝ մեր հանդեպ մնայուն սիրո մեջ:

144-րդ Սաղմոսը հորդում է «բոլոր» բառով. «Տերը քաղցր է բոլորի հանդեպ, և նրա գթությունը տարածվում է նրա բոլոր արարածների վրա» (Հմ. 9): «Տերն ամուր է պահում բոլոր սայթաքողներին, և ոտքի կանգնեցնում բոլոր գլորվածքներին» (Հմ. 14): «Տերը պահպանում է բոլոր նրանց, ովքեր սիրում են իրեն, և Տերը կործանում է բոլոր մեղավորներին» (Հմ. 20):

Բազմաթիվ անգամներ այս Սաղմոսը մեզ հիշեցնում է, թե Աստծո սերը անսահման է, ու կողմնապահություն չկա նրա մեջ: Նոր Կտակարանը հայտնում է, թե դրա մեծագույն արտահայտությունը երևում է Հիսուս Քրիստոսի մեջ. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ամեն նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա» (Հովհ. 3.16):

144-րդ Սաղմոսը հայտարարում է, թե «Տերը մոտ է բոլոր նրանց, ովքեր կանչում են իրեն: Իրենից ակնածողների կամքը կատարում է Տերը, լսում է նրանց աղոթքն ու փրկում նրանց» (Հմ. 18-19): Աստծո սերը մեր հանդեպ տևական է ու բնավ չի սպառվում ու հատնում:

Աղոթք - Երկնքում եղող Դայր, մենք հիանում ենք Քո անփոփոխ, մնայուն ու անվերջ սիրով: Փառք ենք տալիս Քեզ՝ Քո ցուցաբերած անսահման սիրո համար մեր Փրկչի՝ Դիսուս Քրիստոսի միջոցով: Ամեն:

Բնավ տարբերություն չկա մեր բոլորի հանդեպ Աստծո ունեցած սիրո մեջ:

Կարդա՛

Սաղմոս 144. 8-21

Տերը քաղցր է բոլորի հանդեպ, և նրա գթությունը տարածվում է նրա բոլոր արարածների վրա: Սաղմ. 144.9

Բուժիչ ջրիեղեղ

Միշտ սիրել եմ որոտախառն անձրևը: Երեխա ժամանակ, երբ մի փոթորիկ իրապես անհավատալի էր թվում, շարունակական որոտներով և հեղեղային անձրևներով, ես, քույրերս ու եղբայրներս մեր տան շուրջ անզուսպ վազվզում էինք՝ սահելով և չմշկելով: Երբ ժամանակը հասնում էր ներս մտնելու, մինչև մեր ոսկորները թրջված էինք լինում:

Զվարճալի կարճ պահ էր ուժեղ անձրևաջրի մեջ թաթախվելը՝ առանց գիտենալու, թե հաճելի ժամանակ էր, թե՞ սարսափ: Այս պատկերը մտաբերում եմ, երբ Աստվածաշունչը ցույց է տալիս Աստծո՝ անապատը՝ «Ջրառատ վայրի» փոխակերպումը (Սաղմ. 106.35), որովհետև պարզ ու սովորական անձրևը չի

Կարդա՛ր՝ Սաղմոս
106.1-16, 35-36

Անապատը վերածեց ջրառատ վայրի, և ծարաված հողը՝ հոսող ջրերի: Սաղմ. 106.35

կարող անապատը օազիսի վերածել: Միայն տեղատարափ անձրևը կարող է իր հեղեղներով չոր գետնին նոր կյանք տալ: Մենք էլ վերանորոգության կարիք ունենք, որովհետև մենք «անոթի ու ծարավ» աննպատակ թափառում ենք՝ փափագելով ունենալ այն բժշկությունը, որը ցանկանում ենք, և հույսից մի քիչ ավելիի կարիք ունենք: Ու երբ խորապես արմատացած մեր մեղքերը մեզ խավարի մեջ թակարդված են թողնում, մեր սրտերը պարզ փոփոխությունից շատ ավելիի կարիք են զգում:

Ճիշտ այգալիսի մի այլափոխությունն է մեր Աստվածը մեզ կարող է տալ (Հմ. 20): Բնավ ուշ չէ մեր վախերն ու ամոթը բերել նրա առջև, որ մեր շղթաները քանդելուց և մեր խավարը լույսով հեղեղելուց ավելին կարող է անել (Հմ. 13-14):

Աղոթք - Հայր, օգնիր, որ մեր մեղքերի ու հուսահատության մեջ չմնանք: Օգնիր մեզ, որ Քեզ գանք մեր բեռներով՝ վստահելով Քո սիրուն ու զորությանը՝ մեզ բուժելու ու այլափոխելու համար: Ամեն:

Աստծո գործընդունող այլափոխում է:

Սիրելի բարեկամիս

Ինչ որ արեց Հովհաննեսը իր սիրելի բարեկամի համար առաջին դարում, քսանմեկերորդ դարում մեռնող արվեստ է: Հովհաննեսը նամակ գրեց նրան: «Նյու Յորք Թայմզ» թերթի լրագրող Քեթրին Ֆիլդը, օրինակ, ասաց. «Նամակագրությունը մեր ամենահին արվեստներից մեկն է: Մտածիր նամակների մասին ու կմտաբերես Տարսոնից Պողոս առաքյալին»: Կարող ենք նաև ավելացնել Հովհաննես առաքյալին:

Գայիոսին գրած նամակում Հովհաննեսը մարմնի ու հոգու առողջություն մաղթեց, քաջալերական խոսքեր արձանագրեց նրա հավատարմության, ինչպես նաև եկեղեցու հանդեպ իր ունեցած սիրո մասին: Հովհաննեսը նաև հիշեց եկեղեցու մեջ գոյություն ունեցող մի խնդրի մասին ու խոստացավ այդ առնչությամբ հետո առանձին գրել: Նա նաև շեշտեց Աստծո փառքի համար կատարված բարի գործերի արժեքի ու կարևորության մասին: Այս նամակը քաջալերական և խրախուսիչ էր՝ ուղղված իր բարեկամին: Արդիական համակարգչային միջոցներով հաղորդակցությունը կարող է նշանակել, թե թղթի վրա գրված նամակագրությունը հետզհետե անհետանում է, սակայն սա մեզ չպիտի կանգնեցնի ուրիշներին քաջալերել: Պողոսը քաջալերական նամակներ գրեց մագաղաթի վրա, մենք կարող ենք ուրիշներին քաջալերել զանազան միջոցներով: Բանալին ուրիշներին քաջալերելու ձևի մեջ չէ, այլ երբ մի պահ կանգնում ենք ուրիշներին ասելու, թե սիրում ենք իրենց Հիսուսի անունով:

Մտածիր Գայիոսի ունեցած քաջալերանքի փորձառություն մասին, երբ նա բացեց Հովհաննեսի նամակը: Կարող ենք մենք էլ Աստծո սերը ցոլացնել մեր բարեկամների վրա՝ մտախոհ գրությունով կամ քաջալերական հեռախոսային հաջորդակցությամբ:

Աղոթք - Տեր, օգնիր, որ գիտեմանք, թե ինչպե՞ս կարելի է քաջալերել նրանց, որոնք հոգևոր մղումի կարիք ունեն: Ամեն:

Քաջալերական խոսքերը մարդկային հոգուն հույս են ներշնչում:

Կարդա՛ր Գ Գովհաննես

Երեցը՝ սիրելի Գայիոսին, որին ես ճշմարտապես սիրում եմ: Գ Գովհ. 1

Ծայրահեղական սեր

Պատկադրություն որոշված օրից մի շաբաթ առաջ Սառայի նշանախոսությունը վերջ գտավ: Հակառակ իր տխրության և հուսախաբուծության՝ նա որոշեց խրախճանքի համար պատվիրված ուտելիքը չվատնել ու փոխեց ծրագիրը: Նվերների համար որոշված սեղանը վերցրեց, հրավիրյալների ամբողջ անվանացանկը փոխեց ու իր շրջանի անտունների ապաստարանի բնակիչներին հրավիրեց:

Տեր Հիսուսը նման անկաշկանդ ազնվության արտահայտությունը գնահատեց, երբ խոսում էր փարիսեցիների հետ՝ ասելով. «Երբ ճաշկերույթ ես անում, կանչի՛ր աղքատներին, խեղերին, կաղերին, կույրերին: Եվ երանելի կլինես» (Ղուկ. 14:13-14): Նա նշեց, թե օրհնությունը Աստծուց

**Կարդա՛ր
Ղուկաս 14:7-14**

Երբ ճաշկերույթ ես անում, կանչի՛ր աղքատներին, խեղերին, կաղերին, կույրերին:
Ղուկ. 14:13

պիտի գա, որովհետև այդ հրավիրյալները չպիտի կարողանան փոխադարձել հրավեր տվողին: Հիսուսը հաստատեց օգնելու արարքը այն մարդկանց, որոնք չէին կարող բարեսիրական նվերներ տալ և ընկերային կապեր ստեղծել: Երբ նկատի առնենք Հիսուսի այս խոսքերը՝ ասված փարիսեցիի կողմից տրված կոչունքի ընթացքում, Նրա պատգամը կլծկա գրգռիչ և ծայրահեղական: Սակայն իսկական սերը ծայրահեղական պիտի լինի: Լսել ենք, թե սերը ուրիշների կարիքների համար տալ է՝ առանց ակնկալելու որևէ բան դրա փոխարեն: Այսպիսի սիրով սիրեց Հիսուսը մեզնից յուրաքանչյուրին: Նա տեսավ մեր ներքին աղքատությունը ու իր կյանքը տվեց մեզ համար: Քրիստոսի անձը ճանաչելը երթ է դեպի իր հավիտենական սերը: Մենք բոլորս հրավիրված ենք հետախուզելու Հիսուսի սիրո «լայնությունը և երկարությունը, բարձրությունը և խորությունը» (Եփ. 3:18):

Աղոթք - Սիրելի՛ Աստված, օգնիր ինձ, որ կարողանամ իմանալ Քո սիրո խորությունը: Ուզում եմ տալ ուրիշներին այն, ինչ որ Դու ես ինձ տվել: Ամեն:

Որքա՞ն խորն է Աստծո սերը մեր հանդեպ:

Դժվար խորհուրդներ

Բարեկամիս հետ ճեմելու ժամանակ խոսեցիք Աստվածաշնչի հանդեպ մեր ունեցած սիրո մասին: Նա զարմացրեց ինձ, երբ ասաց. «Օ՛հ, սակայն շատ չեմ սիրում Հին Կտակարանը: Այնտեղ նշված շատ դժվարհասկանալի բաների և վրեժխնդրության փոխարեն նախընտրում եմ Հիսուսին»:

Երբ փորձում ենք Աստծո բարկության խորքը թափանցել, հասկանում ենք, թե երբ Նա բարկանում է, շատ հաճախ Նա Իր ժողովրդին կամ Իր անունն է պաշտպանում: Իր ունեցած հորդառատ սիրո դիմաց Նա արդարություն է ուզում գործված սխալների համար և փրկություն՝ Իրենից հեռացողների համար: Այս բանը ոչ միայն Հին Կտակարանի մեջ ենք տեսնում, ուր նա Իր ժողովրդին ետ Իր մոտ է հրավիրում, այլևս Նոր Կտակարանի մեջ էլ Իր Որդուն է ուղարկում, որպեսզի մեր գործած մեղքերի համար մատուցված զոհը Ինքը լինի:

Մենք կարող ենք չհասկանալ Աստծո նկարագրի բոլոր խորհուրդները, սակայն կարող ենք վստահ լինել, որ Նա ոչ միայն արդարություն է ցույց տալիս, այլև ամեն սիրո աղբյուրն է: Մենք չպիտի վախենանք Նրանից, որովհետև «բարեհաճ է Տերը նրանց նկատմամբ, ովքեր ապավինում են Նրան նեղ օրերին. Նա ճանաչում է Իրենից երկյուղ կրողներին» (Նավում 1.7):

Աղոթք - Հայր Աստված, Դու բարի, սիրող ու ողորմած ես: Օգնիր ինձ, որ Քո փրկարար սիրո խորհուրդներիցդ մի մաս ավելի հասկանամ: Ամեն:

Կարդա՛
Նաում 1.1-7

Համբերատար է
Տերը, մեծ է Որս
գորությունը:
Նավումի 1.3

Աստծո արդարությունն ու ողորմությունը իրար են
հանդիպում խաչի մոտ:

Տալու ուրախությունը

Տխուրը շաբաթ էր: Անհոգ ու անտարբեր էի, թեև չգիտեի, թե ինչու: Շաբաթվա վերջին իմացա, որ հորաքրոջս երիկամները վատ էին գործում: Գիտեի, թե նրան պիտի այցելեի, սակայն անկեղծ լինելու համար, զգում էի, որ փորձում էի այցելությունս հետաձգել: Հակառակ այս բանի՝ գնացի իր տուն, ուր ընթրեցինք, գրուցեցինք և միասին աղոթեցինք: Մի ժամ անց իր բնակարանը լավ զգացումներով թողեցի՝ այդ շաբաթ առաջին անգամը լինելով: Ուրիշի վրա կենտրոնանալը իմ անձի փոխարեն տրամադրությունս ինչ-որ տեղ փոխեց:

Հոգեբանները փաստում են, թե տալու արարքը կարող է գոհացում տալ, որ գալիս է, երբ տվողը տեսնում է ստացողի շնորհակալությունը: Մի շաբթ մասնագետներ նույնիսկ հավատում են, թե մարդ արարածները հակամետ են առատաձեռն լինելու: Թերևս սրա համար Պողոսը, երբ Թեսաղոնիկեի եկեղեցուն քաջալերում էր չինելու իր հավատքի հավաքականությունը, թախանձեց նրան «տկարներին օգնել» (Ա թեա. 5.14): Նախապես նա կրկնել էր Հիսուսի այս խոսքը. «Ավելի երանելի է տալը, քան առնելը» (Գործք Առ. 20.35): Թեպետ սա ասված է նյութականի ծիրում, կիրառվում է նաև ժամանակ ու ջանք տալու պարագային: Երբ տալիս ենք, մենք տեսնում ենք, թե Աստված ինչպես է զգում: Հասկանում ենք, թե Նա մեծապես հրճվում է իր սերը մեզ տալով, ու մենք բաժանում ենք իր ուրախությունն ու ուրիշներին օրհնելու գոհացումը: Մտածում եմ, թե շուտով դարձյալ պիտի այցելեմ հորաքրոջս:

Աղոթք - Հայր, ինձ ստեղծել ես ուրիշներին տալու համար, ինչպես Դու ես ինձ տվել: Սովորեցրու ինձ տալ, որպեսզի կարողանամ ճշմարտապես Քո նկարագիրը ցույց տալ ու ավելի Քեզ նմանվել: Ամեն:

Տվողը մեծագույն ստացողն է:

**Կարդա՛ր
Ա թեա. 5. 12-24**

...անկարգներին խրատեցե՛ք, երկչուներից քաջալերեցե՛ք, տկարներին օգնական եղե՛ք, բոլորի հանդեպ համբերատար եղե՛ք:
Ա թեա. 5.14

Երբ հատակը բացվի

1977-ի Ասիայի տնտեսական ճգնաժամի օրերին աշխատանք փնտրող մարդկանց թիվը շատ ավելի էր, քան դրա հնարավորությունները: Այդ գործ փնտրողներից մեկը ես էի: Ինը երկար մտահոգ ամիսներ հետո վերջապես տպագրական գործ գտա: Սակայն ընկերությունը դժվար օրեր դիմազրավեց, ու ես դարձյալ մնացի անգործ: Երբեք նման վիճակի մեջ եղե՞լ ես: Երբ այնպես է թվում, թե ամենավատ օրերը անցել են, հանկարծ հատակն է բացվում: Սարեիթայի այրի կնոջ պարագան նույնն էր (Գ. Թագ. 17.12): Սովի պատճառով նա վերջին ճաշն էր պատրաստում իր ու իր որդու համար, երբ Եղիա մարգարեն իրենից մի պատառ հաց խնդրեց: Նա ակամա համաձայնեց տալ, ու Աստված միշտ նրան ալյուր ու յուղ հայթայթեց (Հմ. 10-16):

Հետո նրա որդին հիվանդացավ. նրա առողջությունը վատթարացավ, ու շունչը կտրվեց: Կինն աղաղակեց՝ ասելով. «Ի՞նչ գործ ունես ինձ հետ, ո՞վ Աստծո մարդ, եկել ես ինձ մոտ, որ մեղքե՞րս հիշեցնես ու որդե՞ս սպանես» (Հմ. 18): Երբեմն մենք էլ ենք ուզում այս այրու նման արտահայտվել՝ խորհելով, թե Աստված մեզ պատժում է: Մոռանում ենք, թե վատ բաներ կարող են պատահել այս ընկած աշխարհում:

Եղիան այս պարագան Աստծուն ներկայացրեց՝ թախանձազին ու անկեղծ աղոթելով երեխայի համար, և Աստված տղայի հոգին վերադարձրեց (Հմ. 20-22): Երբ հատակը բացվում է, թող մենք էլ Եղիայի նման անդրադառնանք, թե մեր հավատարիմ Աստված մեզ չպիտի լքի:

Աղոթք - Հայր, երբ կյանքի պարագաները ճնշում են վրաս, օգնիր, որ հիշեմ, թե Դու հզոր ու հոգատար Աստվածն ես: Եղիայի նման Քեզ եմ կառչում՝ գիտենալով, թե Դու բարիք ես անում նրանց, որոնք Քեզ սիրում են: Ամեն:

Աստված բարի է լավ ու վատ ժամանակների մեջ:

Կարդա՛

Ա Թագ. 17. 15-24

Ուրեմն շնորհի աթոռին համարձակությամբ մոտենանք, որ ողորմություն ընդունենք ու շնորհ գտնենք պատշաճ ժամանակին մեզ օգնելու: Եբր. 4.16

Սիրուն Գվիրված

Որպես Հիսուս Քրիստոսին դարձած մարդ՝ Նաբել Քուրեշին մի գիրք է գրել իր ընթերցողներին օգնելու համար, որ կարողանան իրենց կրոնից հրաժարված մարդիկ հասկանալ: Նրա ոճը հարգալիք է, ու միշտ ցուցաբերում է սիրող մի սիրտ իր ժողովրդի հանդեպ:

Քուրեշին իր գրքերից մեկը ձոնել է իր քրոջը, որ տակավին չի հավատում Հիսուսին: Իր գրած ձոնը հակիրճ է, սակայն ուժեղ. «Ազաչում եմ Աստծուն այն օրվա համար, երբ մենք պիտի կարողանանք միասին իրեն պաշտել»:

Նման սիրո զգացում ենք ունենում, երբ կարգում ենք Պողոսի նամակը՝ գրված Հռոմի մեջ եղող եկեղեցուն: «Ինձ համար մեծ տրամուխյուն է և իմ սրտին՝ անպակաս ցավ, որ պիտի փափագեի ես ինքս Քրիստոսից նզովված լինել իմ եղբայրների ու մարմնավոր կողմից ազգակիցների համար, որոնք իսրայելացի են...» (Հռոմ. 9.2-4):

Պողոսն այնքան սիրեց Իսրայելի ժողովրդին, որ պատրաստ էր Աստծուց նզովվել, միայն թե նրանք ընդունեին Քրիստոսին: Նա հասկացավ, որ Հիսուսին մերժելով՝ իր ժողովուրդը մերժում էր ճշմարիտ Աստծուն: Այս բանը մղեց նրան թախանձելու իր ընթերցողներին Հիսուսի բարի լուրը բաժանելու բոլորի հետ (10.14-15):

Թող որ ազոթքով մեր անձերը նվիրենք նրա սիրուն, որ ցավում է մեր շուրջիներին համար:

**Կարդա՛ր
Հռոմեացիներ 9. 1-5**
Իմ սրտի փափագն ու աղոթքն Աստծուն՝ Իսրայելի փրկության համար է: Հռոմ. 10.1

Աղոթք - Հայր, խնդրում եմք, որ մեր սրտերը Քո սիրով լրացես: Քեզ եմք բերում ու աղոթում մեր բարեկամների համար, որ Որդուդ՝ Հիսուսի ճշմարտությունը տեսնեն: Ամեն:

Պետք է սիրենք նրանց, որոնց համար Քրիստոսը մեռավ, ինչպես նաև նրանց, որոնց մեջ Քրիստոսն ապրում է:

Բարի Յայրիկը

Երբ տղան՝ Խավիերը, փոքր էր, աշխատանքային ճամփորդությունները ամուսնուս հետո էին պահում տնից: Թեև նա հաճախ էր հեռաձայնում, սակայն տակավին դժվար գիշերներ էինք ունենում, երբ հեռաձայնային կապը բավարար չէր լինում Խավիերի համար: Հանդարտեցնելու համար նրան, երբ հոր կարիքն էր ունենում, մեր նկարների ալբոմն էի բերում, մինչ նա պատրաստվում էր անկողին մտնել: Ցույց էի տալիս նկարները, որոնք վերցված էին իրենց միասին անցկացրած պահերից, ու հարցնում էի. «Հիշո՞ւմ ես սա»: Այդ հուշերը քաջալերում էին մեր տղային, որ հաճախ ասում էր. «Ես բարի հայրիկ ունեմ»:

Հասկանում եմ Խավերին իր հոր սերը հիշեցնելու անհրաժեշտությունը, երբ նրա հետ չէր: Երբ դժվար ու առանձին ժամանակներ եմ հաղթահարում, ես էլ եմ ուզում գիտենալ, թե սիրված եմ, հատկապես երկնավոր Հորս կողմից: Դավիթը հայտարարեց իր ցանկությունը Աստծուն, մինչ անապատի մեջ իր թշնամիներից էր թաքնվում (Սաղմ. 62.1): Աստծո անսահման զորություն և գոհացնող սիրո հետ իր ունեցած հանդիպումները հիշելը նրան առաջնորդեց փառաբանության (Հմ. 2-5): Իր դժվարագույն գիշերներում Դավիթը կարող է տակավին ուրախանալ Իր Հոր հոգատար սիրով (Հմ. 6-8): Մեր մուլթ ժամերին, երբ զգում ենք, թե Աստված մեզ մոտ չէ՛, մենք հիշեցումների կարիք ունենք, թե ով է Աստված և թե ինչպես է Իր սերը ցույց տալիս մեզ: Անդրադառնալով մեր՝ Իր հետ ունեցած անձնական փորձառություններին, ինչպես նաև Իր կատարած գործերին՝ արձանագրված Աստվածաշնչի մեջ, կարող ենք հաստատել այն անհամար ձևերը, որոնցով մեր բարի Աբբահայրը մեզ սիրում է:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ ցույց ես տալիս Քո անսահման սերը Քո ժողովրդի, մեր կյանքերում և Աստվածաշնչի մեջ արձանագրված խոսքերի միջոցով: Ամեն:

Յիշելով Աստծո գործերը, որ հայտնում է Իր նկարագիրը, դարձյալ վստահ ենք լինում Իր սիրո մեջ:

Կարդա՛ Սաղմոս 62

Երբ քեզ հիշում էի իմ անկողնում, առավոտյան կանուխ խոսում էի քեզ հետ: Սաղմ. 62.7

Յուսալից մի ողբ

Նասո՛ Բահամազի Քլիֆթըն ժառանգության Ազգային Զբոսավայրը այցելել, պատմության մի ողբերգական ժամանակի նորից այցելել է նշանակում: Մի տեղ, ուր ցամաքը հանդիպում է ջրին, քարե սանդուղքներով բարձրանում ենք մի գահավանդ: 18-րդ դարում նավերով Բահամազ բերված գերիները այս սանդուղքներով պիտի բարձրանային՝ հաճախ իրենց ետևում թողնելով ընտանիք ու մտնելով անմարդկային կյանքի մեջ: Գահավանդի գազաթին այդ գերիներին նվիրված մի կոթող կա: Մայրի ծառերը քանդակված կանանց տեսք ունեն, որոնք նայում են դեպի իրենց երկիրը ու հիշում իրենց կորցրած ընտանիքի անդամներին: Յուրաքանչյուր քանդակ սպիացած մտրակի հետքեր ունի:

**Կարդա՛ր
Ողբ Երեմիա 3.49-58**

Տառապանքի գրից
քո անունը կանչեցի,
Տե՛ր:
Ողբ Եր.3.55

Իրենց կորուստների համար այս սգացող կանանց քանդակները ինձ հիշեցնում են անարդարության կարևորությունը և աշխարհի կոտրած կերպերը ու ողբը նրանց համար: Ողբալ չի նշանակում, թե մենք հույս չունենք. այն միջոց է Աստծո հետ անկեղծ լինելու: Քրիստոնյաների համար ծանոթ կեցվածք պիտի լինի սա: Մաղմոսների քառասուն տոկոսում և Ողբ Երեմիայի գրքում Աստծո ժողովուրդը աղաղակում է նրան ասպատակողներին իրենց քաղաքը կործանելուց հետո (Ողբ Եր. 3.55):

Ողբը օրինական պատասխան է տառապանքի դիմաց և ցույց է տալիս Աստծո կապը ցավի ու նեղության մեջ: Ի վերջո ողբը հուսալից է, երբ մենք ողբում ենք այն բանի համար, որ շիտակ չէ. մենք մեզ և ուրիշներին հրավիրում ենք փոփոխություն փնտրելու:

Աղոթք - Տե՛ր, խնդրում եմք, տո՛ւր մեզ այն վստահությունը, թե երբ մեր ողբն ենք բարձրացնում դեպի Քեզ, Դու մեզ հետ ես: Ամեն:

Կարող ենք վստահել Աստծուն, որ մեր ողբի ժամանակներում իսկ նոր բան է անում:

Այդ ժպտացող մարդը

Խանութ զնայր ինձ հաճույք չի պատճառում: Սա պարզապես մեր կյանքի ու կարիքների մասն է կազմում, մի բան, որ պիտի անել: Սակայն մի մաս կա այս պարտականություն մեջ, ինչին նայում եմ անակնկալ հրճվանքով. հաճելի է գանձապահ Ֆրեդին մոտենալ՝ վճարում կատարելու համար: Ֆրեդը վճարումի այդ արարողությունը ներկայացումի է վերածում: Նա շատ արագաշարժ է, միշտ ժպտում է և նույնիսկ պարում ու երբեմն էլ երգում է, մինչ լարախաղացի իր հմտությամբ չկոտրվող առարկաներն է նետում տոպրակների մեջ: Հստակ է, թե Ֆրեդը հաճույք է ստանում մի գործից, որ շատերի համար կարող է հոգնեցուցիչ ու ճանճրացուցիչ լիվալ: Ու մի բուսեով զվարթ այդ հոգին վճարումի համար իրեն մոտեցող մարդկանց պայծառացնում է:

Կարդա՛
Կողոս. 3.18-23

Եվ ամենը, ինչ էլ որ անեք, սրտանց արեք, ինչպես Տիրոջը, և ոչ թե մարդկանց: Կող. 3.23

Ֆրեդը շատերի հարգանքն ու հիացումն է շահել է իր այսպիսի աշխատանքի համար: Իր զվարթությունը, ծառայելու փափազը ու մանրամասնություններին իր տված կարևորությունը համապատասխանում են Կողոսացիս 3.23-ի մեջ Պողոսի տված բացատրությունը, թե մենք ինչպես պիտի աշխատենք. «Եվ ամենը, ինչ էլ որ անեք, սրտանց արեք, ինչպես Տիրոջը, և ոչ թե մարդկանց»: Երբ մենք Հիսուսի հետ հարաբերության մեջ ենք, ինչ գործ անում ենք, մեզ առիթ է տալիս՝ ցոլացնելու իր ներկայությունը մեր կյանքերում: Ո՛չ մի գործ փոքր չէ... կամ շատ մե՛ծ: Ուրախությամբ, հնարամտությամբ և գերազանցությամբ մեր պատասխանատվություններին լծվելը, ինչ էլ լինեն դրանք, մեզ առիթ է տալիս ազդելու մեր շուրջինների վրա, հոգ չէ թե ինչ է մեր գործը:

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ, որ իմ առջև դրված ամեն տեսակի գործի լծվեմ շնորհով, խանդավառությամբ եւ ուրախությամբ՝ գիտենալով, թե իմ կեցվածքը կարող է ազդել ուրիշների վրա, այնպիսի ձևերով, որ ինձ ծանոթ չեն: Ամեն:

Լավագույն ձևը գոհացուցիչ աշխատանք կատարելու՝ Տիրոջ համար անելն է:

Երկնքից օգնություն

ՄՍՍՍ-ը՝ Մորս նշանը, 1905-ին ստեղծվեց, քանի որ նավաստիները անհրաժեշտություն զգացին մի միջոցի՝ իրենց ծայրահեղ տազնապը ցույց տալու: Այս նշանը 1910-ին հանրաձայնությամբ դարձավ, երբ ընկղմվող Կենտուկի շոգենավը գործածեց՝ պատճառ դառնալով քառասունվեց մարդու փրկության:

Մինչ ՄՍՍ-ը կարող է ավելի այժմեական հնարք լինել, շտապօգնության կոչը հին է մարդու նման: Հաճախ ենք լսում Հին Կտակարանի Հեսուի պատմության մեջ, որ նա տասնչորս տարուց ավելի հակասություն և տրտունջներ դիմադրավից իր ազգակից իսրայելցիներին (Հես. 9.18) ու զանազան մար-

Կարդա՛ր
Յեսու 10. 6-15

...Տերն Իսրայելի
հետ միասին պատե-
րազմեց: Յես. 10.14

տահրավերներ, ինչպես Հորդանան գետի հոսող ջրերը (3.15-17), մինչ իսրայելցիները կամաց-կամաց գրավեցին ու բնակվեցին այն երկրում, որ Աստված էր խոստացել նրանց: Այդ բոլոր պայքարների մեջ «Տերը Հեսուի հետ էր» (6.27): Հեսուի 10-րդ գլխում կարդում ենք, որ իսրայելցիները իրենց դաշնակից Գաբավոնի ժողովրդին են օգնում, որ հարձակումի էին ենթարկվել հինգ թագավորների կողմից: Հեսուն իմացավ, որ Տիրոջ օգնության կարիքն ունի՝ պարտության մատնելու հզոր թշնամիներին (Հմ. 12): Աստված երկնքից մեծ կարկուտի քարեր նետեց, նույնիսկ արևը կանգնեցրեց՝ իսրայելցիներին ավելի ժամանակ տալու թշնամիներին հաղթելու համար: Հեսու 10.14-ը նշում է. «Տերն Իսրայելի հետ միասին պատերազմեց»: Եթե մարտահրավերներ ես դիմադրավում, կարող ես ՄՍՍ ուղարկել Աստծուն, թեև գալիք օգնությունը Հեսուի ստացածից տարբեր կարող է լինել: Նա կարող է դա անել անակնկալ գործի միջոցով կամ հասկացող բժշկի ձեռքով: Սրանք միջոցներ են, որոցով Նա պատասխանում է քո օգնության կանչին:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ ինձ հետ քայլում ես կյանքի այս դժվար ճանապարհի մեջ ու լսում ես, երբ Քեզ եմ կանչում: Ամեն:

Մինչ Աստծուն ենք կանչում օգնության համար, վստահ լինենք, թե Նա մեզ հետ պիտի լինի:

Ժամանակի պարզևը

Աճապարանքով փոստ գնացի: Այդ օրվա անելիքներին ցանկը երկար էր, ու երբ ներս մտա, հուսահատվեցի՝ գտնելով հերթի սպասողների մինչև դուռը երկարող շարան: Քրթմնջատով ու ժամացույցին նայելով՝ ասացի. «Շտապիր ու սպասիր»:

Ձեռքս դեռ դռան վրա էր, երբ տարեց մի օտարական մոտեցավ ու ասաց. «Ձեռ կարող այս սարքը գործածել»՝ ցույց տալով մեր ետևում դրված պատճենահանող մեքենան: «Դրամս վերցրեց, և չգիտեմ ինչ անել»:
Անմիջապես հասկացա, թե Աստված ուղում էր, որ օգնեի այդ տարեց մարդուն: Շարքից դուրս եկա և կարողացա հարցը լուծել տասը րոպեում: Մարդը շնորհակալութուն հայտնեց և գնաց: Երբ ետ դարձա, տեսա, որ հերթ չկար, և ուղիղ մոտեցա ծառայողական սեղանին:

Այդ օրն իմ փորձառութունը ինձ հիշեցրեց Հիսուսի այս խոսքը. «Տվե՛ք և կտրվ, ձեզ. լա՛վ չափով, թափ տրված-չարժված, լեփ-լեցուն կտան ձեր գիրկը, որովհետև ինչ չափով որ չափեք, նույնով էլ ձեզ կչափվի» (Ղուկ. 6.38):

Սպասելն ավելի կարճ թվաց ինձ, որովհետև Աստված ընդմիջեց իմ աճապարանքը: Աչքերս ուրիշների կարիքներին դարձնելով և օգնելով ինքս ինձ, որ ժամանակս ուրիշին տրամադրեմ, նա ինձ պարզե տվեց: Դաս, որ հույս ունեմ միշտ հիշել, երբ ժամացույցին նայեմ:

Աղոթք - Երկնավոր Հայր, իմ ունեցած ամբողջ ժամանակը Քո ձեռքերում է և պարզ և Քեզնից: Խնդրում եմ ցույց տուր ինձ, թե ինչպես պիտի գործեմ Քեզ փառք ու պատիվ բերելու համար: Ամեն:

Կարդա՛ր
Ղուկաս 6. 37-38

Բարերար անձը կպարարտանա, և նա, ով ոռոգում է, ինքն էլ կորոզվի: Առ. 11.25

Երբեմն մեր գործերի համար պիտի սպասենք:

Նավարկել հոսանքի մեջ

Լաստանավի մեր առաջնորդը մեր խմբին ընկերացավ մինչև գետեղերը և ցույց տվեց ինչպես ազատարար վերարկուները հագնել ու բռնել թիակները: Լաստը հավասարակշռելու համար՝ մեր մարմնի ծանրությունը համաձայն մեր նստատեղերը ցույց տվեց: Նավարկության բարդ պարագան ներկայացնելով՝ մանրամասն ուղղություն տվեց, որոնց ուշադրությունը պիտի հետևեինք՝ ուժգին վազող ջրի մեջ կողմնորոշվել կարողանալու համար: Նա վստահեցրեց, թե հակառակ պրկվածության պահերին՝ մեր ճամփորդությունը պիտի լիներ թե՛ վախազդու և թե՛ ապահով:

Կարդա՛
Եսայի 43. 1-7

Եթե ջրերի միջով անցնես... գետերը քեզ չեն խեղդի: Ես. 43.2

Շատ անգամ մեր կյանքը թվում է հոսող ջրերի վրա եղած նավարկություն, որովհետև մեր ակնկալածից ավելի շատ հոսանքների ենք դիմազրավում: Աստծո խոստումը Իսրայելի ժողովրդին Եսայի մարգարեի միջոցով կարող է մեր զգացումները առաջնորդել, երբ մտածենք, թե ամենից վատն է պատահում մեզ հետ. «Երբ ջրերի միջով անցնես՝ քեզ հետ կլինես, և գետերը քեզ չեն խեղդի» (Ես. 43.2): Իսրայելի ժողովուրդը Աստծո մերժումի վախը զգաց, երբ աքսորվեց իր գործած մեղքերի համար: Սակայն դեռ Նա հաստատում է ու խոստանում նրանց հետ լինել, որովհետև սիրում է (Հմ. 2, 4):

Աստված մեզ չի լքի, երբ հորդահոս ջրերի միջով անցնենք: Մենք կարող ենք Նրան վստահել՝ մեզ հետ լինելու ու մեզ առաջնորդելու հոսանքների մեջ, ինչպես նաև մեր վախերի ու ցավի մեջ, որովհետև Նա մեզ սիրում է ու խոստանում մեզ պաշտպանել:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ հոսանքների մեջ իմ առաջնորդն ես: Օգնիր ինձ, որ Քեզ վստահեմ, նույնիսկ երբ ճամփորդությունը վայրագ ու վախազդու է: Ամեն:

Աստված մեզ ղեկավարում է դժվար ժամանակների մեջ:

Տերն է խոսում

Հորի գրքում գտնում ենք գրեթե ամեն տեսակի վեճ, թե ինչու աշխարհում ցավ կա, սակայն այնպես է թվում, թե վեճը երբեք օգուտ չի բերում Հորին: Նրա պարագայում ճգնաժամը հարաբերութիւնների ճգնաժամ է և ոչ թե կասկածի: Նա կարող է Աստծուն վատահել: Հորը մի բան է ուզում ամենից շատ. մի անձի հայտնութիւնը, որ կարող է բացատրել իր թշվառ ու ողորմելի վիճակը: Նա ուզում է Աստծուն հանդիպել երես առ երես: Վերջապես Հորի բաղձանքը կատարվում է: Աստված Ինքն իրեն ցույց է տալիս (տե՛ս Հոր 38.1): Աստված Իր հայտնութիւնն անում է կատարյալ հեզմանքով, այնպես, ինչպես Հորի բարեկամ Եղիուսը մեկնում է, թե ինչու Հորը իրավունք չունի Աստծուց այցելութիւնն ակնկալելու: Ո՛չ ոք՝ ո՛չ Հորը, ո՛չ էլ իր բարեկամներից որևէ մեկը պատրաստ չէր լսելու, թե Աստված ինչ ունի ասելու: Հորը պատրաստ էր հարցերի երկար ցանկ, սակայն Աստված ու ոչ թե Հորն է, որ հարցեր է տալիս: Նա սկսում է այսպես. «Տղամարդու պես պնդացրո՛ւ մեջքդ. հարցեր եմ տալու քեզ, ու պատասխա՛ն տուր ինձ» (Հմ. 3): Մի կողմ դնելով 35 գլուխները, որոնք խոսում են ցավի, կորստի ու տառապանքի մասին, Աստված տալիս է մի բանաստեղծութիւն աշխարհի հրաշալիքների մասին: Նրա խոսքը սահմանում է հսկա տարբերութիւնը ստեղծագործ Աստծո ու Հորի նման համբակ մի մարդու: Նրա ներկայութիւնը հրաշալի կերպով պատասխանում է Հորի մեծագույն հարցին՝ «Մեկը կա այնտեղ»: Հորը պարզապես կարող է պատասխանել. «Այն ո՞վ կասի ինձ, ինչ որ չգիտեմ, մեծ ու ապշելի բաներ, որոնց ես իրազեկ չէի» (42.3):

Կարդա՛ր Յոր 38. 1-11

Միթե պիտի կարողանա՞ իմ դատաստանը ծնել, պիտի հանդիմանի՞ Աստծուն ու նրա առաջ պատասխա՞ն պիտի տա: Գոր 39. 32

Աղոթք - Տեր, շատ հարցեր ունենք կյանքի մասին: Դու Քո բարությունն ես մեզ ցույց տվել: Օգնիր, որ Քեզ ապավինենք այն բաների համար, որոնք չենք կարող հասկանալ: Ամեն:

Չկա թշվառություն, որ Աստծո գերիշխանությունից դուրս է:

Սրտի անոթություն

Երբ ամուսնուս հետ մեր մեքենայով գնում էինք մեր գործերն անելու, և բլջային հեռախոսիս էլեկտրոնային նամակներս էի կարդում, փոքր կարկանդակի խանութի ծանուցում եկավ: Ծիշտ այդ պահին մենք այդ խանութի առջևից էինք անցնում: Հանկարծ ստամոքսս գալարվեց, ու անոթությունն զգացի: Հիացա, թե ինչպես է ժամանակակից ճարտարամտությունը թույլ տալիս վաճառողներին, որ մեզ փաղաքշեն իրենց հաստատություններից ներս հրավիրելով:

Այս ծանուցումի պատճառով մտածեցի Աստծո՝ հարատե ինձ Իր մոտ հրավիրելու փափագի մասին: Նա միշտ գիտի, թե ես ուր եմ, և ցանկանում է ազդեցություն ունենալ իմ որոշումների վրա: Ես ինձ հարցրի. «Արդյո՞ք սիրտս Նրան փափագելով է մրմուռում, այնպես, ինչպես ստամոքսս արեց կարկանդակների պատճառով»:

Հովհաննու 6-րդ գլխում հինգ հազար հոգու հրաշքով կերակրելուց հետո աշակերտները Հիսուսից կաթոգին խնդրեցին. «Տե՛ր, ամեն ժամանակ տուր մեզ այդ հացը» (Հմ. 34): Հիսուսը պատասխանեց ու ասաց. «Ես եմ կյանքի հացը. ինձ մոտ եկողը չի քաղցի, և ինձ հավատացողը երբեք չի ծարավի» (Հմ. 35): Ի՛նչ հիանալի է, որ Հիսուսի հետ մեր հարաբերությունը կարող է մեր ամենօրյա կյանքի մեջ մեզ մնայուն սնունդ պարգևել:

Փոքր կարկանդակի խանութի ծանուցումը իր թիրախը դարձրեց մարմնիս ցանկությունը, սակայն իմ սրտի վիճակի մասին Աստծո ունեցած գիտությունը հրավիրում է ինձ ընդունելու Նրան ունենալու իմ հարատե կարիքը և ստանալու այն սնունդը, որ միայն Նա կարող է տալ:

Աղոթք - Սիրելի՛ Չայր, հիշեցրու ինձ Քո տված ամենօրյա հացի կարիքը: Ամեն:

Միայն Չիսուսը կարող է տալ այն հացը, որ իրապես մեզ կարող է գոհացնել:

Կարդա՛ր
Չովհաննես 6. 32-40

Ես եմ կյանքի հացը. ինձ մոտ եկողը չի քաղցի, և ինձ հավատացողը երբեք չի ծարավի:
Չովհ. 6.35

Հիսուսը ձեռք երկարեց

Երբեմն կյանքը թվում է շատ բազմազբազ. դասերը՝ դժվար, աշխատանքը՝ հոգնեցուցիչ, տունը՝ մաքրության կարիք ունեցող ու բարեկամի հետ սուրճ խմելը՝ ժամադրությունների ցանկում: Զբաղվածությունը այն կետին է հասնում, որ պարտադրված միայն մի քանի ընթացք Աստվածաշունչ եմ կարգում ու որոշում ավելի շատ ժամանակ անցկացնել Աստծո հետ առաջիկա շաբաթ: Սակայն դարձյալ ծրագրերս խառնվում են, ու մխրճվում եմ առօրյա գործերիս մեջ և մոռանում Աստծուն դիմել օգնության համար:

Կարդա՛
Մատթեոս 14. 22-33

Հիսուսն իսկույն ձեռքը մեկնեց, բռնեց նրան: Մատթ. 14.31

Երբ Պետրոսը ջրերի վրայով էր քայլում Հիսուսի մոտ գնալու համար, քամու ու ալիքների պատճառով նա շուտով երկմտեց ու վախեցավ: Ինձ նման նա էլ սկսեց ընկղմվել (Մատթ. 14.29-30): Սակայն երբ աղաղակեց, «Հիսուսն իսկույն ձեռքը մեկնեց, բռնեց նրան» (Հմ. 30-31):

Հաճախ եմ մտածում, որ Աստծուն պիտի դառնամ, երբ շատ զբաղված եմ ու ուշադրությունս չեղելով՝ Նրան չեմ տեսնում: Սակայն Աստված այդ ձևով չի գործում: Երբ Իրեն դառնանք օգնության համար, Հիսուսը Իր ձեռքը կմեկնի առանց վարանելու:

Երբ կյանքի քաոսային վիճակների պատճառով հաստատուն չենք, շատ դյուրին է մոռանալ, թե Աստված փոթորկի մեջ մեզ հետ է: Հիսուսը հարցրեց Պետրոսին. «Ինչո՞ւ երկմտեցիր» (Հմ. 31): Հոգ չէ թե ինչ վիճակի մեջ ենք կամ ինչ պարագաների միջով ենք անցնում, Նա այնտեղ է: Նա այստեղ է՝ մեր կողքին, այդ պահին և հիմա՝ պատրաստ Իր ձեռքը երկարելու և ազատելու մեզ:

Աղոթք - Տե՛ր, օգնիր, որ Քեզ դառնամ զբաղված վիճակիս ու կյանքի երկմտություններիս մեջ: Շնորհակալ եմ, որ միշտ այստեղ ես՝ պատրաստ ինձ բռնելու: Ամեն:

Աստված սպասում է, որ Իրեն դառնանք, որպեսզի Իր ձեռքը երկարի ու մեզ օգնի:

Երկնային պարտեզ

Երբ Լոնդոնում էինք, մի բարեկամ խորհուրդ տվեց, որ տիկինս՝ Մաուլենը, ու ես այցելենք Լոնդոնի առևտրական շրջանի մեջ գտնվող երեսունհինգ հարկանի շենքի վերջին հարկում գտնվող երկնային պարտեզը: Ապակեպատ տախտակամածով այս պարտեզը լեցուն է բույսերով, ծառերով և ծաղիկներով: Սակայն նրա «երկնային» բաժինը մեր ուշադրությունը գրավեց: Շուրջ հարյուր հիսուն մետր բարձրությունից մենք հիացումով դիտեցինք ներքևում գտնվող Սբ. Պողոս տաճարը, Լոնդոնի աշտարակը և շատ ուրիշ բաներ: Քաղաքի տեսարանը սքանչելի էր ու մեզ տվեց օգտակար դաս հեռանկարի մասին:

Կարդա՛ Սաղմոս
101.1-2, 18-28

Նայեց նա իր սրբության բարձրությունից: Սաղմ. 102.19

Մեր Աստվածը կատարյալ հեռանկար ունի մեր ունեցած փորձառությունների համար: Սաղմոսերգուն գրում է. «Նայեց նա իր սրբության բարձրությունից, Տերն երկնքից երկիր նայեց՝ բանտարկյալների հառաչանքը լսելու և մահապարտների որդիներին ազատ արձակելու համար» (Սաղմ. 101.19-20): 101-րդ Սաղմոսի մեջ նկարագրված ցավող ժողովրդի նման մենք էլ շատ հաճախ բռնված ենք ներկայի բոլոր պայքարներով ու վհատությունով «հառաչում ենք»: Աստված մեր կյանքերը տեսնում է սկզբից մինչև վերջ: Մեր Տերը բնավ անակնկալ կերպով չի կրանվում այն բաներով, որոնք մեր տեսողությունն են խափանում: Ինչպես Սաղմոսերգուն նախատեսեց, նրա կատարյալ հեռանկարը պիտի առաջնորդի գերազույն ազատագրումի, որ ազատ է արձակում նույնիսկ նրանց, որոնք «մահապարտներ են» (Հմ. 20, 27-28): Դժվար պահերին հիշիր, որ թեև մենք չգիտենք ինչ պիտի պատահի հաջորդիվ, սակայն մեր Տերը գիտի:

Աղոթք - Հայր, երբեմն իմ հեռանկարն այնքան նեղ է, որ ինձ կարող է շեղել: Այն ինձ մղում է նայելու միայն դժվարություններին՝ փոխանակ Քեզ դիմելու: Օգնիր, որ ունենամ շիտակ հեռանկար՝ Քեզ վստահելու ամեն պահի: Ամեն:

Հիսուսի վրա կենտրոնանալը ամեն ինչ ճիշտ հեռանկարի մեջ է դնում:

Հրաշալի Արարիչ

Որպես արվեստասեր նկարիչ՝ Հաճույք եմ զգում իմ նկարչական սարքով Աստծո ստեղծագործության նշույլները նկարելու: Տեսնում եմ Նրա մատների գործը՝ ծաղկի նուրբ թերթերի, կենսունակ արևածագի ու մայրամուտի մեջ և ...: Նկարչական սարքիս ուժեղ սպայակի Հնարավորությունները թույլ են տալիս ինձ Տիրոջ ստեղծած արարածների պատկերները նկարելու: Նկարել եմ շաղակրատող սկյուռների ծաղկած կեռասնու վրա, ծաղկից ծաղիկ թռչող գունավոր թիթեռնիկ և ծովային կրիաների ժայռոտ ծովեզերքին՝ արևի տակ նստած: Յուրաքանչյուր պատկեր Հիշեցնում է ինձ, որ Հիանալի Արարչին պաշտեմ:

Մինչ ես Հիանում եմ իր յուրահատուկ ստեղծագործության վրա, 103-րդ Սաղմոսի Հեղինակը երգում է Աստծո՝ բնության մեջ արած բազմաթիվ արվեստի գործերի մասին (Հմ. 24): Նա ծովը նկատում է «մեծ և լայնատարած, որի մեջ վիստացող կենդանիներին թիվ չկա. այնտեղ կան մեծամեծ ու փոքր գազաններ» (Հմ. 25) և ուրախանում է Աստծով, որ տալիս է մնայուն ու ամբողջական հոգատարություն իր ստեղծագործությանը (Հմ. 27-31): Նկատի առնելով շքեղությունը իր շուրջ եղող Աստվածատուր կյանքի՝ Սաղմոսերգուն փառաբանության երախտագիտության մեջ ժայթքում է ու երգում. «Պիտի օրհնեմ Տիրոջն իմ կյանքում, սաղմոս պիտի երգեմ իմ Աստծուն՝ քանի դեռ կամ» (Հմ. 33):

Երբ անդրադառնում ենք Աստծո Հրաշալի ստեղծագործությանը, կարող ենք մոտիկից նայել իր ստեղծագործ մտքին և երգել իրեն շնորհակալ փառաբանության մեջ, թե որքան՝ սքանչելի և սիրող է ու միշտ պիտի լինի:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ ստեղծագործության յուրաքանչյուր մանրամասնության համար, որ հաստատում է մնայուն հոգատարությունդ ու եզակի ստեղծագործությունդ: Ամեն:

Աստծո գործերը հրաշալի են, ինչպես Ինքը:

Կարդա՛

Սաղմոս 103. 24-34

Որքա՛ն մեծ են գործերը քո, Տե՛ր, ամեն ինչ իմաստությամբ ստեղծեցիր դու, և աշխարհը լցվեց քո ստեղծածներով: Սաղմ. 103.24

Ընթացքի մեջ, թե՞ ավարտված

Գոհունակություն եմ ունենում, երբ մի գործ ավարտին եմ հասնում: Օրինակ՝ ամեն ամիս, երբ իմ աշխատանքային պատասխանատվություններիցս մեկն անցնում է մի աստիճանից մյուսը՝ «ընթացքի մեջ»-ից «ավարտված»-ի: Սիրում եմ սեղմել «ավարտված»-ի կոճակը, սակայն անցյալ ամիս, երբ այդ կոճակը սեղմեցի, մտածեցի. «Եթե միայն կարողանայի հաղթել իմ հավատքի կյանքի մեջ եղած այդ անտաշ մասերին նույն հեշտությամբ»: Այնպես է թվում, թե Քրիստոնեական կյանքը միշտ էլ ընթացքի մեջ է ու բնավ ավարտված չէ: Հետո հիշեցի Եբրայեցիս 10.14-ը: Նա նկարագրում է, թե ինչպես է Քրիստոսի զոհաբերությունը մեզ ամբողջովին փրկում: Հետևաբար մի կարևոր իմաստով այս «ավարտված» կոճակը սեղմված է մեզ համար: Հիսուսի մահը մեզ համար արեց այն, ինչ որ մենք չէինք կարող անել: Նա մեզ ընդունելի է դարձնում Աստծուն, երբ Իրեն ենք դիմում հավատքով: Տրամաբանորեն թեև Իր զոհողությունը կատարված է ու ամողջական, մենք մեր կյանքի մնացյալ մասն անցկացնում ենք ապրելով այդ հոգևոր իրականության մեջ, ինչպես Եբրայեցիների գրքի հեղինակն է գրում՝ «սրբանալով»: Դժվար է հասկանալ այն իրողությունը, թե Հիսուսը մի բան ավարտեց, որ տակավին ընթացքի մեջ է մեր կյանքերի մեջ: Երբ հոգևոր առումով պայքարում եմ, քաջալերական է հիշել, թե Հիսուսի զոհը ինձ համար, ինչպես նաև քեզ համար, «ավարտված է», նույնիսկ եթե մեր կյանքերի մեջ նրա իրականացումը ընթացքի մեջ է: Ոչ մի բան չի կարող կասեցնել նրա նպատակակետի վերջնական իրագործումը՝ Իր նմանությունը մեր կերպարանափոխվելը (տե՛ս Բ Կորնթ. 3.18):

Կարդա՛
Եբր. 10.5-14

Որովհետև մեկ զոհով սրբվողներին հավիտյան կատարյալ դարձրեց: Եբր. 10.14

Աղոթք - Տեր Դիսուս, շնորհակալ եմք, որ Քո կյանքն ես տվել մեզ համար: Օգնիր մեզ Քեզ վստահել, մինչ աճում եմք՝ լինելու Քո հետևորդները, գիտենալով, թե Դու մեզ կատարյալ ես դարձնում: Ամեն

Աստված գործի վրա է՝ մեզ դարձնելու այն անձերը, որ ուզում է լինենք:

Աղոթք մեզ տու՛ն ուղղորդելու համար

Փոքր ժամանակ առաջինը սովորած աղոթքներիցս էր. «Հիմա մտնում եմ անկողին, աղոթում եմ, որ Տերը պահի հոգիս»: Աղոթք էր, որ ես սովորեցի ծնողներիցս ու սովորեցրի իմ զավակներին, երբ նրանք փոքր էին: Իբրև մանուկ՝ քնելուց առաջ այդ աղոթքը արտասանելով ապահով էի զգում՝ ինքս ինձ Աստծո ձեռքերի մեջ դնելով:

Նմանօրինակ աղոթք կա, որ կոկիկ ձևով ամփոփված է «աղոթքի»՝ Սաղմոսների գրքում: Մի շարք մեկնաբաններ գտնում են, որ «քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին» խոսքը (Սաղմ. 30.6) Հիսուսի ժամանակ փոքրիկներին սովորեցրած «գիշերվա» աղոթք է քնելուց առաջ:

Այդ աղոթքը Հիսուսի վերջին աղաղակն է խաչի վրա: Սակայն Հիսուսը նրա վրա մեկ բառ ավելացրեց՝ «Հայր»

(Ղուկ. 23.46): Իր մահից առաջ արտասանած այդ բառերով Հիսուսը ներկայացրեց իր ունեցած մտերմիկ հարաբերությունը Հոր հետ և ուղղորդեց հավատացյալներին դեպի իրենց տուն՝ Իր հետ (Հովհ. 14.3): Հիսուսը մեռավ խաչի վրա, որպեսզի մենք կարողանանք ապրել Աստծո՝ մեր երկնավոր Հոր հետ եղած հարաբերության հրաշալիության մեջ: Որքա՛ն մխիթարական է գիտենալ, թե Հիսուսի՝ մեր հանդեպ ունեցած զոհաբեր սիրո պատճառով մենք կարող ենք Աստծո խնամքի մեջ հանգստանալ՝ որպես Իր զավակներ: Մենք կարող ենք մեր աչքերը փակել առանց վախի, որովհետև մեր Հայրը հսկում է մեզ վրա ու խոստացել է մեզ արթնացնել նոր կյանքի մեջ Իր հետ (Ա. Թես. 4.14):

Աղոթք - Տեր Գիսուս, խաչի միջոցով Քո ներումի պարգևն եմ ստանում: Օգնիր, որ իմ մեղքերից հրաժարվեմ ու Քեզ հետևեմ, մինչև որ տուն հասնեմ: Ամեն:

Նոր պայծառ առավոտ է մեզ սպասում Տեր Գիսուսով:

Կարդա՛

Ղուկաս 23. 44 - 48

Բայց ովքեր նրան ընդունեցին, նրանց, որ հավատում են նրա անվանը, իշխանություն տվեց նրանց Աստծու զավակներ լինելու: Դովհ. 1.12

Աստծո հոգատարությունը մեր հանդեպ

Թոռնիկներս սիրում են իրենց զգեստները մենակ հագնել: Սակայն երբեմն նրանք իրենց շապիկները ծուռ են հագնում, ու հաճախ փոքր թոռնիկա կոշիկները սխալ ոտքերին է անցկացնում: Ընդհանրապես ոչինչ չեմ ասում ու նրանց անմեղությունը գողտրիկ եմ համարում: Սիրում եմ դիտել աշխարհը նրանց աչքերով, որովհետև ամեն բան արկածախնդրություն է իրենց համար. երբ ընկած ծառի կոճղի վրայով քայլում են, արևի տակ մնացած կրիայի են նայում մոտիկից կամ էլ գրգռալից դիտում գոչյունով սուրացող հրչեջ մեքենային: Սակայն գիտեմ, թե իմ փոքրիկ թոռնիկներն էլ իրապես անմեղ չեն: Նրանք կարող են բազմաթիվ չքմեղանքներ անել, թե ինչու չեն կարող իրենց անկողինների մեջ մնալ գիշերը և շտապում են վերցնել մյուսի ձեռքի մեջ եղած խաղալիքը: Ու տակավին ես շատ եմ սիրում նրանց: Պատկերացրի Ադամին ու Եվային՝ Աստծո ստեղծած առաջին մարդկանց, որոնք նման էին իմ թոռնիկներին: Ամեն ինչ, որ տեսան պարտեզում, պետք է սքանչելի լիներ, մինչ Աստծո հետ էին քայլում: Սակայն մի օր նրանք գիտակցաբար անհնազանդ եղան: Նրանք արգելված ծառի պտուղից կերան (Ծննդ. 2:15-17, 3:6): Ու այս անհնազանդությունը անմիջապես առաջնորդեց ստերի ու հանցանքը ուրիշի վրա դնելու (3:8-13):

Տակավին Աստված սիրեց ու հոգաց նրանց մասին: Կենդանիներին գոհեց՝ նրանց հագուստ տալու համար (Հմ. 21) ու հետո փրկություն միջոց էլ պարգևեց բոլոր մեղավորներին՝ Իր Որդու գոհաբերությունամբ (Հովհ. 3:16): Նա մեզ շատ է սիրում:

Տակավին Աստված սիրեց ու հոգաց նրանց մասին: Կենդանիներին գոհեց՝ նրանց հագուստ տալու համար (Հմ. 21) ու հետո փրկություն միջոց էլ պարգևեց բոլոր մեղավորներին՝ Իր Որդու գոհաբերությունամբ (Հովհ. 3:16): Նա մեզ շատ է սիրում:

Աղոթք - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմք, որ մեզ սիրում ես հակառակ մեր գործած մեղքերի, ու հավիտյան Քեզ հետ լինելու Քո տված միջոցի համար: Ամեն:

Յիսուսը մեզ այնքան է սիրում, որ պատրաստ է Իր անձը գոհելու մեզ համար:

Կարդա՛ր Ծննդոց 3.1 - 13

Տեր Աստված Ադամի ու նրա կնոջ համար կաշվից զգեստներ պատրաստեց և հագցրեց նրանց:
Ծննդ. 3.21

Տևական ուրախություն

Հաճախ լսում ենք, թե ուրախությունը առաջանում է ամեն բան մեր ուզածով անելով: Սակայն ճիշտ չէ: Այդ փելիսոփայությունը միայն առաջնորդում է ունայնության, անձկության, նեղության ու սրտի ցավի: Բանաստեղծ Ռ. Հ. Օդենը նկատեց մարդկանց, որոնք փորձում են փախուստ փնտրել հաճույքի մեջ: Այդպիսի մարդկանց մասին նա գրում է. «Կորած, ոգեբնակ անտառի մեջ մթից վախեցող մանուկներ, որոնք երբեք ուրախ կամ բարի չեն եղել»:

Սաղմոսերգու Դավիթը մեր երկյուղներին ու տխրության դարմանի մասին երգում է. «Խնդրեցի Տիրոջն, ու Նա լսեց ինձ, և իմ բոլոր նեղություններից փրկեց ինձ» (Սաղմ. 33.5): Ուրախությունը ամեն ինչ Աստծո ուզածի պես անելուց է. իրողություն, որ կարելի է հաստատել ամեն օր:

Դավիթը գրում է. «Մոտեցե՛ք Տիրոջն ու լույս առեք» (Հմ. 6): Փորձիր ու պիտի տեսնես: Դավիթը այդ բանն է ուզում ասել, երբ գրում է. «Ճաշակեցե՛ք և տեսե՛ք, թե որքան քաղցր է Տերը» (Հմ. 9):

Մենք ասում ենք. «Տեսնելը հավատալ է»: Այդպես նկատի ենք ունենում բանական աշխարհի մեջ: Ինձ փաստ ցույց տուր, ու կհավատամ: Աստված հակառակ ձևով է դնում միտքը: Հավատալը տեսնել է. «Համտեսիր ու ապա պիտի տեսնես»:

Ընդունիր Տիրոջ խոսքը և արա այն, ինչ որ Ինքն է խնդրում, որ անես հաջորդիվ, ու պիտի տեսնես: Շնորհ պիտի տա քեզ շիտակը ու շատ ավելին անելու համար: Նա Ինքն իրեն պիտի տա քեզ, որ միակ միջոցն է բարություն ու նրանով տևական ուրախության:

Աղոթք - Տե՛ր, երբեմն պարզապես պիտի աղոթենք՝ ասելով. «Հավատում եմ: Օգնիր իմ անհավատությանը»: Օգնիր, որ քեզ վստահեմ այսօր՝ անելով այն, ինչ ակնկալում ես, որ անեմ: Ամեն:

Ուրախությունը շիտակ բանն անելն է:

Կարդա՛ր Սաղմոս 33. 1-15

...Սարդն այն, որ սիրում է կյանքը, և ուզում է իր օրերը բարության մեջ տեսնել... թող չարությունից խուսափի և բարիք գործի:

Սաղմ. 33.13,15

Պիտի տեսնենք Յիսուսին

Մի հուղարկավորութեան ժամանակ, երբ գլուխս ծռեցի աղոթքի համար, ուշադրութեամբ գրավեց եկեղեցու ամբիոնին դրված պղնձե հուշատախտակը, որի վրա փորագրված էր Հովհ. 12.21 համարը. «Տե՛ր, ուզում ենք Հիսուսին տեսնել»: Այո՛, ես մտածեցի, որքան պատշաճ է նկատի ունենալ, թե ինչպես ենք տեսնում Հիսուսին այն տիկնոջ մեջ, որի կյանքն ենք տոնում արցունքներով ու ժպիտներով: Թեև նա դիմազրավեց զանազան մարտահրավերներ ու հուսախաբուծություններ իր կյանքում, երբեք Քրիստոսի հանդեպ իր ունեցած հավատքը տեղի չտվեց: Եվ որովհետև Աստծո Հոգին իր մեջ էր բնակվում, մենք կարող էինք Հիսուսին տեսնել իր մեջ: Հովհաննու Ավետարանը նշում է, թե ինչպես Հիսուսի՝ էջի վրա նստած Երուսաղեմ մտնելուց հետո (Հովհ. 12.12-16) մի քանի հույներ Փիլիպպոսին մոտեցան՝ թախանձելով. «Տե՛ր, ուզում ենք Հիսուսին տեսնել» (Հմ. 21): Նրանք հավանաբար հետաքրքրված էին Հիսուսի կատարած բժշկություններով ու հրաշքներով: Սակայն որովհետև հրեա չէին, նրանք արտոնված չէին մտնել տաճարի ներքին գավիթները: Երբ նրանց խնդրանքը հասավ Հիսուսին, նա հայտարարեց, թե ժամը հասել է, որ Մարդու Որդին փառավորվի (Հմ. 23):

Նա ուզեց ասել, թե ինքը պիտի մեռնի շատերի մեղքերի համար: Եվ նա իր առաքելությունը պիտի ամբողջացնի՝ հասնելով ոչ միայն հրեաներին, այլ հեթանոսներին էլ: Ու հիմա նրանք էլ պիտի տեսնեն Հիսուսին: Հիսուսը իր մահից հետո Սուրբ Հոգուն ուղարկեց բնակվելու իր հետևորդների մեջ (14.16-17): Արդ, երբ սիրում ենք ու ծառայում Հիսուսին, տեսնում ենք Նրան գործի վրա մեր կյանքերի մեջ: Եվ մեր շուրջ եղողներն էլ են տեսնում Հիսուսին:

Աղոթք - Տե՛ր Յիսուս Քրիստոս, նվաստանում եմ ու հիանում, երբ գալիս ես իմ մեջ բնակվելու համար: Օգնիր, որ բաժանեմ այս հիանալի պարգևը նրանց հետ, որոնց հանդիպում եմ այսօր: Ամեն:

Կարող ենք Յիսուսին տեսնել իրեն հետևողների կյանքի մեջ:

**Կարդա՛ր
Յովհաննես 12. 20-26**

«Տե՛ր, ուզում ենք
Յիսուսին տեսնել»: Յովհ. 12.21

Առատաձեռն տվողներ

Վերաբննելուց հետո այն բոլոր բաները, որ Աստված արդեն արել է մեր եկեղեցում, առաջնորդները նոր մարզասրահ ունենալու առաջարկը ներկայացրին ժողովրդին, որպեսզի կարողանանք ավելի լավ ծառայել մեր գաղութին: Առաջնորդների խումբը հայտարարեց, թե իրենք արդեն խոստումի քարտեր էին ստորագրել՝ շինություն ծախսերը հոգալու համար: Ես աղոթեի էի ու չէի ուզում ավելին տալ մեր նախապես տվածից: Սակայն ամուսնուս հետ համաձայնություն եկանք ավելին տալու այս ծրագրի համար: Երբ նկատի ունեցանք Աստծո շարունակաբար մեզ տվածները, որոշեցինք ամսական նվիրատվություն ևս անել: Հետևաբար եկեղեցու ընտանիքներից հավաքված նվերները փակեցին մարզասրահի շինության բոլոր ծախսերը:

**Կարդա՛ր
Ա Մնաց. 29. 1-4**

...քոն է ամեն ինչ, և քեզից ստացածն է, որ տալիս ենք քեզ:
Ա Մնաց. 29.14

Երախտապարտ լինելով Նրան, բազմաթիվ տոնակատարություններով բացումից հետո Աստված գործածեց մարզասրահը գաղութի միջոցառումների համար: Հիշում եմ ուրիշ առատաձեռն տվողի՝ Դավիթ Թագավորին: Թեև Աստված նրան չընտրեց տաճարը շինելու համար, սակայն նա իր բոլոր միջոցները տրամադրեց ծրագրի հաջողության համար (Ա Մնաց. 29.1-5): Երբ իր ձեռքի տակ եղած առաջնորդները և ժողովուրդը հոժարությամբ առատորեն տվեցին (Հմ. 6-9), Դավիթը գիտակցեց, թե նրանց բոլոր տվածները ամեն բան ստեղծող, պահող ու Տերը եղող Աստված էր տվել (Հմ. 10-16): Երբ ընդունենք, թե ամեն բանի տերը Աստված է, կարող ենք շնորհակալությամբ և առատաձեռնությամբ տալ՝ ուրիշների օգտի համար: Ու մենք կարող ենք վստահել, թե Տերը պիտի հոգա, ինչպես նաև գործածի շատերի տված ընծաները մեզ օգնելու համար, երբ կարիքն ունենանք:

Աղոթք - Տեր, օգնիր, որ հիշենք, թե ամեն բան քեզ է պատկանում, երբ մեր ունեցածը ուզում ենք Քեզ տալ՝ հոժարությամբ ու անձնուրացությամբ: Ամեն:

Նախ Աստված տալիս է, ու Նա միշտ ավելին է տալիս, քան իր անունով առատաձեռն տվողը:

Չսառած

Հաշտության մասին կլոր սեղանի վիճաբանություն ընթացքում մասնակցողներից մեկը իմաստությունամբ ասաց. «Մի՛ սառեցրեք մարդկանց ժամանակի մեջ»: Նա մատնաչեց, թե ինչպես մենք հակում ունենք հիշելու մարդկանց սխալներն ու երբեք հնարավորություն չենք տալիս նրանց փոխվելու:

Շատ պարագաներ կան Պետրոսի կյանքի մեջ, երբ Աստված կարող էր նրան «սառեցնել» ժամանակի մեջ: Սակայն Նա երբեք դա չարեց: Պետրոսը՝ խթանող աշակերտը, փորձեց «չտկել» Հիսուսին, սակայն հանդիմանվեց դրա համար (Մատթ. 16.21-23): Նա ուրացավ Քրիստոսին (Հովհ. 18.15-27),

սակայն հետո ներում ստացավ (21.15-19): Ու մի անգամ էլ եկեղեցու մեջ եղած ցեղային բաժանումին մասնակից դարձավ: Խնդիրը պատահեց, երբ Պետրոսը (որ նաև Կեփաս էր կոչվում) ինքն իրեն հեթանոսներից բաժանեց (Գաղ. 2.11-12): Միայն հետո ազատորեն նրանց հետ հաղորդակցվեց: Սակայն մի քանի հրեաներ հասան, որոնք պնդեցին, թե թյփատումը անհրաժեշտ է Քրիստոսին հավատացողների համար, ուստի Պետրոսը սկսեց խույս տալ անթլփատ հեթանոսներից: Պողոսը Պետրոսի այս վարվելակերպը նկատեց «կեղծավորություն» (Հմ. 13), ու նրա հանդուգն ընդդիմությունամբ հարցը լուծվեց: Պետրոսը շարունակեց ծառայել Աստծուն՝ մեզ համար նպատակադրված միասնականության գեղեցիկ հոգով:

Ոչ ոք կարիք չունի սառած մնալու ամենավատ պահերին: Աստծո շնորհով մենք կարող ենք իրար ողջագուրել, իրարից սովորել, երբ անհրաժեշտ է ընդդիմանալ իրար և միասին աճել Իր սիրո մեջ:

Աղոթք - Տե՛ր, մեզ Քեզ մոտեցրու, որպեսզի կարողանանք իրար մոտ լինել: Պահիր Քո եկեղեցու միությունը: Տո՛ւր մեզ հասկանալ, թե ուր անվստահություն կա: Բուժիր մեզ, երբ բաժանում կա: Ամեն:

Երբ ընդդիմանանք մեկին, մեկ նպատակ պիտի նկատի ունենանք՝ նորոգություն, ոչ թե ամոթը: Չափ Սուինդըլ

Կարդա՛
Եբր. 1. 1-10

Որդին...նրա փառքի լույսը լինելով ու նրա եղբայրն նկարագիրը... Եբր. 1.3

Հարատև ծառայեք

Երբ կրթական հոգեբան Բենջամին Բլուսը հետազոտություն էր կատարում՝ քննելով 120 մարզիկների, արվեստագետների և գիտնականների մանկությունը, թե ինչպե՞ս կարելի է ձիրքեր զարգացնել երիտասարդների մոտ, գտավ, որ նրանք բոլորն էլ մեկ հասարակ ընդհանրություն ունեին. նրանք երկար ժամեր էին տրամադրում մարզվելու համար: Բլուսի հետազոտությունը ցույց է տալիս, որ մեր կյանքի որևէ բնագավառում աճելու համար անհրաժեշտ է կարգապահություն: Աստծո հետ մեր քայլվածքի մեջ էլ Իր հետ կանոնավորապես ժամանակ անցկացնելու մեր հոգևոր կարգապահությունը մշակելը մի լավ միջոց է՝ աճելու Իրեն վստահելու պարագայի համար:

**Կարդա՛ր
Ա Պետրոս 3. 8-16**

Տեր Աստծուն ձեր սրտի մեջ սուրբ պահեցեք: Ա Պետ. 3.15

Դանիելը լավ օրինակ է, մեկը, որ նախընտրեց Աստծո հետ կարգապահ քայլվածք ունենալ: Որպես երիտասարդ՝ նա սկսեց զգուշ և իմաստուն որոշումներ ընդունել (1.8) նաև նվիրումով աղոթելով, «գոհություն հայտնելով իր Աստծուն» (6.10): Իր կյանքի մեջ հաճախակի Աստծուն փնտրելը պատճառ եղավ, որ իր հավատքը դյուրություն մը նկատելի լինի շուրջիներին: Դարե՞ս թագավորը նկարագրեց նրան որպես «կենդանի Աստուծառան» (Հմ. 20) և երկու առիթներով նրան ներկայացրեց որպես «հարատև» Աստծուն ծառայող մեկը:

Դանիելի նման մենք էլ Աստծո կարիքն ունենք: Ուստի ամեն օր Աստծո ներկայության գանք՝ վստահելով, որ մեր՝ Իր հետ անցկացրած ժամանակը պիտի արդյունավորվի սիրով, որ պիտի հոսի ավելի ու ավելի՝ աճելու գիտություն մեջ ու հասկանալու մեր Փրկչին (1.10):

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ Քեզ ծառայելու առանձնաշնորհունի համար: Օգնիր, որ կարողանամ Քեզ հետ կանոնավոր ժամանակ անցկացնել, որպեսզի աճեմ Քո գիտության մեջ: Ամեն:

**Աստծո հետ մեր անցկացրած ժամանակը
կերպարանափոխում է մեզ:**

Վատահեղ սովորել

Պատանի հասակում հաճախ էի մերժում մորս լսել, երբ նա փորձում էր քաջալերել ինձ հավատք ունենալու: Նա ինձ ասում էր. «Աստծուն վատահիր: Նա քեզ պիտի հոգա»: Ու ես բարկությամբ հակադարձում էի՝ ասելով. «Այդքան էլ դյուրին է, մա՛յր: Աստված օգնում է նրանց, որոնք իրենք իրենց են օգնում»:

Սակայն այդ խոսքը՝ «Աստված օգնում է նրանց, որոնք իրենք են իրենց օգնում», հնարավոր է գտնել Աստվածաշնչի մեջ: Աստծո խոսքը մեզ սովորեցնում է իրեն վատահել մեր ամենօրյա կարիքների համար: Հիսուսն ասում է. «Նայեցե՛ք երկինքի թռչուններին, որ ո՛չ սերմանում են, ո՛չ հնձում և ո՛չ էլ ամբարների մեջ հավաքում, և ձեր երկնավոր Հայրը նրանց կերակրում է: Չէ՞ որ դուք նրանցից ավելի լավ եք: Հիմա ձեզանից ո՞վ կարող է հոգ անելով իր հասակի վրա մի կանգուն ավելացնել» (Մատթ. 6.26-27):

Ամեն ինչ, որ վայելում ենք, նույնիսկ զորութիւնը մեր ապրուստը հոգալու ու «ինքներս մեզ օգտակար լինելու», պարզևներ են մեր երկնավոր Հորից, որ մեզ սիրում է ու արժևորում՝ մեր կարողության խորը թափանցելով: Երբ մայրս մոտենում էր իր կյանքի մայրամուտին, մոռացկոտության հիվանդութիւնը կողպտեց նրա ստեղծագործ միտքն ու հիշատակները, սակայն մնաց Աստծո հանդեպ ունեցած վատահոլութիւնը: Նա մի շրջան մեր տանը բնակվեց, ու ես առիթը ունեցա տեսնելու Աստծո տված անակնկալ խնամքը իր ամենօրյա կարիքներին ու համոզվեցի, որ նա միշտ ճիշտ էր եղել: Փոխանակ մտահոգվելու՝ նա իրեն վատահեց նրան, որ խոստացել էր հոգալ: Ու Տերը ցույց տվեց իր հավատարմութիւնը:

Աղոթք - Սիրո՛ղ Տեր, խնդրում եմ օգնիր, որ Քեզ վատահեմ, որ կարիքներս հոգաս՝ այսօր, վաղը և հավիտյան: Ամեն:

Վաղվա համար հոգ մի՛ արա, և Աստված արդեն այստեղ է:

Կարդա՛ր Մատթեոս 6. 25-34

Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև վերևից է իջնում, լույսի Պորից, որի մեջ փոփոխություն կամ փոփոխման շուք բնավ չկա: Դակ. 1.17

Ինձ սիրո՞ւմ ես

Պատանեկության տարիներին մորս հեղինակության դեմ ապստամբելու ինքնատիպ եղանակ ունեցա: Հայրս մահացավ չափահաս դառնալուցս առաջ, հետևաբար մայրս առանց հորս պիտի առաջնորդեր ինձ այս փոթորկոտ շրջանում:

Հիշում եմ այն մտածումը, թե մայրս չէր ուզում, որ ես որևէ հաճույք ունենայի, և նույնիսկ այն կասկածը, թե նա ինձ չէր սիրում, որովհետև նա շատ հաճախ ո՛չ էր ասում: Սակայն հիմա տեսնում եմ, թե իր ունեցած սիրո պատճառով նա ո՛չ ասաց այն բաներին, որոնք ինձ օգտակար չէին:

Կարդա՛
Մաղաքիա 1. 1-5

Ինչով սիրեցիր
մեզ: Մաղ.1.2

Իսրայելցիները հարցականի տակ դրեցին Աստծո սերը իրենց հանդեպ Բաբելոնի մեջ իրենց ունեցած գերության օրերին: Սակայն այդ գերությունը Աստծո դեմ հարատև ապստամբության պատճառով էր ու միակ միջոցը նրանց սրբազործելու: Ուստի Աստված Մաղաքիա մարգարեին է ուղարկում, ու նրա առաջին խոսքն է. «Ես սիրեցի ձեզ» (Մաղ. 1.2): Ժողովուրդը պատասխանում է կասկածով՝ պահանջելով ցույց տալ, թե Աստված ինչպես է իրեն սիրում, կարծես ասելիս լիներ. «Իրապե՞ս»: Սակայն Աստված մարգարեի միջոցով նրանց հիշեցնում է, թե ինչպես էր Իր սերը հայտնել նրանց: Նա նախընտրել էր նրանց Եզովմի ժողովրդից: Բոլորս էլ անցնում ենք դժվար պահեր մեր կյանքում: Մենք կարող ենք փորձության ենթարկվել հարցականի տակ դնելու Աստծո սերը այդ ժամանակներում: Եկեք հիշենք այն բոլոր ձևերը, որ Նա ցույց է տվել Իր հաստատ սիրով: Երբ կանգ առնենք նկատի առնելու Իր բառությունը, կտեսնենք, թե Նա սիրող Հայր է:

Աղոթք - Տե՛ր, ցույց ես տվել հոգատար սեր ինձ իմ կյանքում: Ներկա ես եղել իմ նեղություններիս: Օգնիր, որ միշտ կարողանամ հիշել Քո սերը: Ամեն:

Մեր երկնավոր Հայրը մեզ շտկում է ու ընդդիմանում է մեզ հարկ եղած պարագային:

Վեմի վրա դրված տունը

Երկար տարիներ իրենց տան մեջ բնակվելուց հետո բարեկամներս անդրադարձան, որ իրենց տան հյուրասենյակը ընկղմվում էր. պատերի վրա ճեղքեր երևացին, ու պատուհաններից մեկը հնարավոր չեղավ բացել: Այդ ժամանակ նրանք հասկացան, որ այդ սենյակը կցված էր իրենց տանը՝ առանց հիմքի: Ուղղել այդ սխալը ու նոր հիմք գցել պիտի նշանակեր ամիսների դժվար աշխատանք կատարել:

Երբ ամիսներ հետո նրանց այցելեցի, տեսա, որ այդ գործը կատարել էին, ու մեծ տարբերություն չկար, թեև պատի ճեղքերը անհետացել էին, ու պատուհանը հնարավոր էր բացել: Սակայն հասկացա, որ հաստատ ու անխախտ հիմքը կարևոր է: Այս բանը ճիշտ է նաև մեր կյանքերի համար: Հիսուսը առակ պատմեց իմաստուն ու անմիտ շինարարների մասին՝ Իրեն չստանալով ցույց տալու համար (Ղուկ. 6.16-49): Նրանք, ովքեր լսում են ու հնազանդվում Իր խոսքերին, նմանվում են այն մարդուն, որ իր տունը շինում է հաստատ հիմքերի վրա. ոչ նրանց, որոնք լսում, սակայն անտեսում են Իր խոսքերը: Հիսուսը վստահեցրեց Իրեն լսողներին, թե երբ հեղեղները գան, նրանց տունը հաստատ պիտի մնա, ու նրանց հավատքը՝ աներեր: Մենք կարող ենք խաղաղություն գտնել՝ գիտենալով, թե մինչ լսում ենք ու հնազանդվում Հիսուսին, Նա հաստատ հիմք է դնում մեր կյանքերի համար: Մենք կարող ենք Իր հանդեպ մեր ունեցած սերը զորացնել Աստվածաշունչ կարգալույս և աղոթելով: Հետո երբ մեր դեմ սպառնացող հեղեղներ ունենանք, մենք կարող ենք վստահ լինել, թե մեր հիմքը հաստատ է: Մեր Փրկիչը մեզ պետք եղած հոգատարությունը պիտի տա:

Աղոթք - Տե՛ր, ուզում եմ իմ տունը շինել վեմի վրա: Օգնիր, որ գիտեման, թե իմ հաստատ հիմքը Քեզ վրա է, ու Քո խոսքը ինձ տալիս է իմաստություն ու զորություն: Ամեն:

Լսելն ու հնազանդվելը Հիսուսին մեր կյանքերին հաստատ հիմք է պարգևում:

Կարդա՛ր Ղուկաս 6. 46-49

...երբ ջրի հեղեղումներ եղան, գետը խփեց այն տանը, բայց չկարողացավ շարժել այն, որովհետև ժայռի վրա էր հ ա ս տ ա տ վ ա ծ :
Ղուկ. 6.48

Օգնության կոչ

2016-ին վերելակի վթարի պատճառով հինգ մահ և հիսուն-
 2 մեկ վիրավոր ունենալուց հետո Նյու Յորք քաղաքը աշխա-
 տանքի լծվեց՝ մարդկանց դաստիարակելու, թե ինչպես կարելի
 է հանգիստ մնալ ու ապահով լինել: Ամենավատ պարագան
 այն է, երբ մարդիկ փորձում են իրենք իրենց ազատել, երբ պա-
 տահարի են հանդիպում: Հեղինակավոր
 մարդիկ ասում են, թե լավագույն ծրա-
 գիրը պարզապես «զանգիր, հանդարտ-
 վիր ու սպասիր»-ն է: Նյու Յորքի շեն-
 քերի հեղինակությունները որոշում ըն-
 դունեցին մարդկանց պաշտպանելու և
 դուրս բերելու այդ վիճակից:

Կարդա՛
Գործք Առ. 2. 14-21

...ամեն ոք, ով Տի-
 րոջ անունը կանչի,
 կփրկվի:
 Գործք. Առ. 2.21

Գործք Առաքելոց գրքում Պետրոսը քարոզեց՝ խոսելով մեր
 անձերը փրկելու սխալի մասին: Ղուկասը, որ գրեց այս գիրքը,
 արձանագրում է մի շարք զարմանալի դեպքեր, երբ Քրիստոսին
 հավատացողները իրենց չիմացած լեզուներով են խոսում (2.1-
 12): Պետրոսը ոտքի ելավ՝ բացատրելու իր հրեա եղբայրներին և
 քույրերին, թե այն, ինչին ականատես էին, Սուրբ Հոգու թափ-
 վելու և փրկության օրվա մասին եղած հին մարգարեության
 իրականացումն էր (Հովել 2.28-32): Սուրբ Հոգու օրհնությունը
 հիմա տեսանելի էր նրանց, որոնք Հիսուսին կանչեցին՝ մեղքից
 ու դրա ազդեցությունից ազատվելու համար: Հետո Պետրոսը
 նրանց ասաց, թե այս փրկությունը տրամադրելի է բոլորին (Հմ.
 21): Մեր Աստծուն մոտենալը ոչ թե Օրենքը պահելով է հնարա-
 վոր, այլ Հիսուսին վստահելով՝ որպես մեր Տերն ու Մեսիան:

Եթե մեղքի թակարդի մեջ ենք, մենք մեզ չենք կարող ազա-
 տել: Մեր միակ հույսը ազատվելու՝ Հիսուսին որպես Տեր ու
 Մեսիա ընդունելով և նրան վստահելով է հնարավոր:

Աղոթք - Տե՛ր, աղաչում եմ, ազատիր ինձ իմ մեղքերից:
 Ամեն:

**Ազատությունը տրվում է նրանց, որոնք Զիսուսին են
 դիմում օգնության համար:**

Ոստիկան Միկլիոյի սիրտը

Ոստիկան Միկլիոն հոգնած պատին կռթնեց: Ընտանեկան բռնաբարություն մասին հեռախոսային մի զրույց նրա օրվա աշխատանքի ժամանակի կեսը խլել էր, և արդյունքում մի մարդ էր ձերբակալվել, մի երեխա էր շտապ օգնությունով հիվանդանոց տարվել, ու մի ցնցված մայր մտածում էր, թե ինչպես էր դա պատահել: «Ոչինչ չես կարող անել, Վի՛գ», - համակրալից ասաց նրա քսանապետ ոստիկան վերակացուն: Սակայն նրա արտասանած բառերը օգուտ չտվեցին: Մի շարք ոստիկաններ կարող են իրենց դիմագրաված հարցերը ոստիկանատանը թողնել ու տուն գնալ, սակայն ո՛չ Վիգը, և ո՛չ նման դժվարին պարագաներում:

Ոստիկան Միկլիոյի սիրտը ցույց է տալիս Տեր Հիսուսի ցուցաբերած սերը: Աշակերտները մի հարցով Նրան էին մոտեցել. «Երկնքի արքայություն մե՞ջ ո՞վ է մեծ»

(Մատթ. 18.1): Մի մանուկի կանչելով՝ Հիսուսն ասաց իր աշակերտներին. «...Եթե դարձի չգաք ու երեխաների նման չլինեք, երկնքի արքայություն չեք մտնի» (Հմ. 3): Ապա տվեց խիստ նախազգուշացում նրան, ով դայթակղում է կամ վնաս է հասցնում մանուկին (Հմ. 6): Իրականում Հիսուսի համար մանուկները այնքան հատուկ են, որ Նա մեզ ասում է. «Նրանց հրեշտակները երկնքում միշտ տեսնում են իմ Հոր երեսը, որ երկնքում է» (Հմ. 10): Որքա՛ն մխիթարական է, որ այդ ժամանակ Տեր Հիսուսի ցուցաբերած սերը մանուկների հանդեպ կապ ունի ներկայիս մեր բոլորի հանդեպ իր ունեցած սիրո հետ: Դրա համար Նա հրավիրում է մեզ, որ մանկական հավատքով իր զավակները լինենք:

Աղոթք - Տե՛ր, հիշեցրու մեզ, որ սիրենք մանուկներին, ինչպես Դու ես սիրում, նույնիսկ երբ Քեզ ենք դիմում վստահող մանկական հավատքով: Ամեն:

Մեր երկրային ընտանիքները կարող են մեզ հուսախաբանել, սակայն մեր Հայրը՝ երբե՛ք:

Կարդա՛ր Մատթոս 18.1-10

Զգուշացե՛ք, որ այս փոքրերից մեկին չանարգեք. որովհետև ասում են ձեզ, որ նրանց հրեշտակները երկնքում միշտ տեսնում են իմ Հոր երեսը, որ երկնքում է: Մատթ. 18.10

Զորութուն ճամփորդության համար

«Եղնիկների ոտքերը բարձր տեղերում», հիմնված Ամբակում 3.19-ի վրա, Քրիստոնեական կյանքի դասական այլաբանությունն է: Պատմությունը ներկայացնում է «վախկոտ» մի անձի, որ ճամփորդում է Հովվի հետ: Նա վախենալով խնդրում է Հովվից, որ իրեն կրի: Հովվի վր քաղցրություն է պատասխանում. «Ես կարող եմ քեզ կրել մինչև բարձր տեղերը՝ փոխանակ թողնելու, որ դու միայնակ մագլցես: Սակայն եթե ես քեզ կրեմ, դու երբեք չպիտի կարողանաս ունենալ եղնիկի ոտքեր՝ ինձ ընկերակցելու և զնալու ամեն տեղ, ուր ես եմ գնում»:

Վախկոտը արձագանքում է Հին Կտակարանի Ամբակում մարգարեի խոսքին, որ անկեղծ լինելու համար նաև իմ հարցն է. «Ինչո՞ւ պիտի ես տառապելու փորձառությունը ունենամ»: «Ինչո՞ւ իմ ճամփորդությունը դժվար պիտի լինի»: Ամբակումը ապրեց Հուդայի երկրում Ն.Ք յոթերորդ դարի վերջին՝ Իսրայելի ժողովրդի աքսորից առաջ: Նա ինքն իրեն գտավ մի ընկերության մեջ, որ անտեսեց ընկերային անարդարությունը ու անշարժացավ բաբելոնացիների անխուսափելի գրավումի վախով (Ամբ. 1.2-11): Նա Տիրոջից խնդրեց, որ միջամտի ու տառապանքը վերացնի (1.13): Աստված պատասխանեց, թե Ինքը արդարություն է պիտի վարվի, սակայն Իր ժամանակի մեջ (2.3): Նույնիսկ եթե տառապանքը չզաղարի, մարգարեն հավատում է, թե Աստված պիտի շարունակի լինել իր գորությունը: Մենք էլ կարող ենք մխիթարվել՝ գիտենալով, թե Տերը մեր գորությունն է՝ պատրաստ օգնելու, որ կարողանանք տառապանքի ժամանակ դիմանալ:

Աղոթք - Հայր, հաճախ իմ կրած տառապանքները շատ են թվում: Շնորհակալ եմ, որ ինձ զորացնում ես նույնիսկ այս դժվար պարագաներում: Օգնիր ինձ, որ Քեզ վստահեմ ու շարունակեմ հետո քայլել: Ամեն:

Կարող ենք Տիրոջը վստահել, որ մեր զորությունը լինի դժվար ժամանակների մեջ:

Կարդա՛ր Ամբակում 3.16-19

Տեր Աստվածն է իմ զորութունը, նա կիսատատի իմ ոտքերը մինչև վերջ և ինձ բարձունք կհանի՝ հաղթելու իր երգով: Ամբ. 3. 19

Տան ճանապարհը գտնել

Երբեմն այս կյանքի ճանապարհը կարող է այնքա՛ն դժվար լի-
նել, որ մենք պարզապես ջախջախվում ենք, ու այնպես է
թվում, թե վերջ չկա խավարին: Մեր ընտանեկան կյանքի նման
վիճակի մեջ եղած ժամանակ կինս, իր մենության պահը օգտագոր-
ծելով, նոր դաս էր սովորել, ու ասաց. «Մտածում եմ, թե Աստված
ուզում է, որ մենք չմոռանանք լույսի մեջ այն, ինչ սովորում ենք
այս խավարի մեջ»: Իր և իր ընկերակիցները՝ Ասիայում կրած սոսկալի նեղությունները
նկարագրելով՝ Պողոսը գրում է Կորնթացիներին այս նույն խորհուրդը (Բ Կորնթ.
1): Նա ուզում է, որ նրանք հասկանան, թե
Աստված ինչպես կարող է փրկել մեզ մեր
խավարագույն պահերին: Նա ասում է, որ
մենք մխիթարված ենք, որպեսզի սովորենք
ուրիշներին մխիթարել (Հմ. 4): Պողոսն ու
իր խումբը իրենց փորձությունների մեջ
Աստուծոց սովորում էին, թե կարող են մխի-
թարել ու խրատել Կորնթացիներին, երբ
նման դժվարություններ դիմագրավեցին:
Աստված այդ նույն բանը մեզ հետ կանի, եթե ուզենք լսել իրեն: Նա
պիտի փրկի մեզ մեր փորձություններից՝ մեզ սովորեցնելով, թե ինչ-
պե՞ս պիտի գործածենք մեր սովորածները՝ ուրիշներին ծառայելու
համար: Խավարի մե՞ջ ես հիմա: Բաջալերվիր Պողոսի խոսքերով ու
փորձառությունով: Վստահ եղիր, թե Աստված այս պահին քո քայ-
լերն է առաջնորդում, ինչպես նաև իր ճշմարտությունները դրոշմում
քո սրտին, որպեսզի դու էլ կարողանաս ուրիշների հետ բաժանել,
որոնք նման պարագաներում են: Դու այդ նույն տեղում ես եղել նա-
խապես ու գիտես տուն առաջնորդող ճամփան:

Աղոթք - Հայր, օգնիր նրանց, որոնք ցավում են այսօր,
որպեսզի տեսնեն ու գիտենան Քո սիրող ներկայությունը
իրենց խավարագույն պահերին: Ամեն:

**Երբեք մի մոռացիր լույսի մեջ այն, ինչ որ սովորում ես
խավարի մեջ:**

Կարդա՛ր Բ Կորնթ. 1.3-11

Որ մեր բոլոր նեղու-
թյունների ժամանակ
մխիթարում է մեզ, որ-
պեսզի մենք էլ կարո-
ղանանք մխիթարել
նրանց, ովքեր ամեն
տեսակ նեղության
մեջ են, այն մխիթա-
րությամբ, որով
մենք մխիթարվում
ենք Աստուծոց:
Բ Կորնթ. 1.4

Աստղերից այն կողմ

2011-ին Օդանավային ու Տիեզերական Ազգային Ընկերակ-
շցությունը (NASA) տոնեց տիեզերական հետազոտության
երեսուն ամյակը: Այդ երեք տասնամյակներին տիեզերանավե-
րը փոխադրեցին ավելի քան 355 հոգի դեպի տիեզերք՝ կառու-
ցելու Միջազգային տիեզերակայանը: NASA-ն այժմ ուշադրու-
թյուն է դարձնում խորը տիեզերքի հե-
տազոտությանը:

Մարդկային ցեղը մեծածավալ գու-
մարներ ու ժամանակ է հայթայթել, ինչ-
պես նաև մի քանի աստղաբաշխներ
իրենց կյանքն են զոհել՝ սերտելու տիե-
զերքի վիթխարիությունը: Ու դեռ Աստծո
մեծության ապացույցը տարածվում է մեր կարողությամբ չա-
փած տիեզերքից շատ այն կողմ:

Երբ նկատի առնենք տիեզերքի Քանդակագործին ու Պահա-
պանին, որ դիտի յուրաքանչյուր աստղ իր անունով (Ես.
40.26), մենք կարող ենք հասկանալ, թե ինչու է Սաղմոսերգու
Դավիթը գովաբանում Նրա մեծությունը (Սաղմ. 8.2): Աստծո
մատների գործն են «լուսինն ու աստղերը, որոնք Նա հաստա-
տեց» (Հմ. 4): Երկիրքն ու երկիրը ստեղծողը թեև բոլորից վեր
իշխում է, սակայն մոտ է իր բոլոր գավակներին և յուրաքանչ-
յուրին անձնապես հոգատար է (Հմ. 3): Աստված սիրով մեզ
տալիս է պատասխանատվություն, զորություն և առանձնաչ-
նորհում՝ հոգ տանելու մեզ հանձնած աշխարհին (Հմ. 5-8):

Երբ մոտիկից սերտենք մեր աստղազարդ երկիրքը, մեր Արա-
րիչը մեզ կհրավիրի, որ հարատևությամբ ու սիրով Իրեն փնտ-
րենք: Նա լսում է մեր բերանից ելած յուրաքանչյուր բարձրա-
ցող աղոթք և փառաբանության երգ:

Աղոթք - Սիրո՛ղ տիեզերքի Արարիչ, շնորհակալ եմք, որ
մեզ հոգ ես տանում: Ամեն

**Աստծո մեծությունը երևում է Իր հոյակապ վիթխարիու-
թյան, ինչպես նաև Իր մտերմիկ մոտիկության մեջ:**

Կարդա՛
Սաղմնո 8.1-9

Քո փառքը բարձ-
րացավ երկնքից
վեր: Սաղմնո 8.1

Կանուրջներ կառուցել

Մեր շրջանում բարձր կրածույլ պատեր են շրջապատում մեր տները: Այդ պատերին էլ գտնվում են էլեկտրական փշաթելեր՝ գողերին հեռու պահելու նպատակով:

Էլեկտրական հոսանքի ընդհատումներ հաճախակի ենք ունենում, որի պատճառով դրսի դռան մոտ եղող զանգը անպետք է դառնում: Էլեկտրական հոսանքի ընդհատումի ժամանակ այդ պատերի պատճառով այցելուն կարող է մնալ կիզիչ արևի կամ տեղատարափի տակ: Նույնիսկ երբ զանգն աշխատում է, այցելուի ներս ընդունվելը կախված է նրա անձից: Մեր տները շրջապատող պատերը ծառայում են լավ նպատակի համար, սակայն կարող են դառնալ խտրականություն պատեր, նույնիսկ երբ այցելուն ոտնձգություն կատարող չէ: Սամարացի կինը, որին Հիսուսը հանդիպեց ջրհորի մոտ, նման խնդիր ուներ խտրականության հետ: Հրեաները ոչինչ չէին ուզում ունենալ Սամարացիների հետ: Երբ Հիսուսը կնոջից ջուր խնդրեց, կինը ասաց. «Դու որ հրեա ես, ինչպե՞ս ես ինձանից ջուր ուզում խմելու» (Հովհ. 4.9): Երբ նա սկսեց իր սիրտը բանալ Հիսուսին, կյանք փոխող փորձառություն ունեցավ, որ դրական ազդեցություն թողեց նրա ու իր դրացիների վրա (հմ. 39-42): Հիսուսը դարձավ այն կամուրջը, որ թշնամության և խտրականության պատը փշրեց: Խտրականության հրապույրը իրական է, ու մենք պետք է դա տեսնենք մեր կյանքերի մեջ: Ինչպես Հիսուսը ցույց տվեց, մենք էլ կարող ենք ամեն մարդու մոտենալ՝ անկախ ազգությունից, ընկերային վիճակից և կամ հանգամանքից: Հիսուսը եկավ կամուրջներ կառուցելու:

Կարդա՛ր
Յովհ. 4.7-14, 39-42

Այլևս ո՛չ հրեա կա, ո՛չ էլ հույն, ո՛չ ծառա կա, ո՛չ էլ ազատ, ո՛չ արու կա, ո՛չ էլ էգ, որովհետև ամենքդ մեկ եք Զիսուս Քրիստոսով:
Գաղ. 3.28

Աղոթք - Տե՛ր շնորհակալ եմ, որ ինձ սովորեցնում ես, որ խտրականություն չդնեմ: Օգնիր, որ տեսնեմ մարդկանց Քո աչքերի միջոցով, որպեսզի Քե՛զ պատվեմ: Ամեն:

Զիսուսը փշրում է խտրականության պատերը:

Աստծով մկանավորվել

Մկաններ ցուցադրող մարզիկները իրենք իրենց դնում են խիստ հսկողության տակ: Սկզբնական ամիսներին նրանք աշխատում են չափսեր ու ուժ ավելացնել: Մինչ մրցումները մոտենում են, նրանք կենտրոնանում են մկանները ծածկող ճարպերը կորցնելու վրա: Վերջին օրերին՝ մրցումներից առաջ, ստվորականից քիչ ջուր են խմում, որպեսզի մկանները ավելի տեսանելի դառնան: Մնդի պակասի պատճառով նրանք տկարանում են մրցման օրը՝ հակառակ այն բանի, որ ուժեղ են երևում:

Բ Մնացորդաց 20-ի մեջ հակառակ ճշմարտության մասին ենք կարդում. ընդունել մեր տկարությունը՝ Աստծո զորության փորձառությունը ունենալու համար: Մարդիկ, գնալով Հովսափատի մոտ, ասացին. «Քեզ վրա մեծ բազմություն է հարձակվում» (Հմ.2): Հետևաբար նա ծոմապահություն հայտարարեց (Հմ. 3)՝ իրեն ու ամբողջ ժողովրդին սնունդից զրկելով: Հետո նրանք Աստծուց օգնություն խնդրեցին, ու երբ Հովսափատը վերջապես իր զորքը հավաքեց, նրանց առջև երգիչներ բերեց, որպեսզի Աստծուն փառավորեն (Հմ. 21): Եվ նրանք սկսեցին երգել, «Տերը ամոնացիներին կովի հանեց մովաբացիների ու Սեիր լեռան բնակիչների դեմ...: Եվ նրանք պարտվեցին» (Հմ. 22): Հովսափատի այս որոշումը ցույց տվեց Աստծո հանդեպ ունեցած իր մեծ հավատքը: Նա նպատակադրված ընտրեց իր մարդկային ու ռազմական ուժին չվստահելը, այլ Աստծու ուժին: Փոխանակ մեր ուժին վստահելով մեր փորձություններին դիմադրավելու՝ թող որ մենք Աստծուն դառնանք ու թույլ տանք, որ Նա լինի մեր զորությունը:

Աղոթք - Տե՛ր, օգնիր ինձ Քո զորությունը խնդրելու և պատրաստ լինելու ճանաչել իմ տկարությունը, որպեսզի Քո զորությունը տեսանելի լինի իմ կյանքի մեջ: Ամեն:

Մեր տկարությունը պիտի ճանաչենք՝ Աստծո զորության փորձառությունը ունենալու համար:

Կարդա՛ր
Բ Մնաց. 20.2-22

Յոսափատը վախեցավ... և հայտարարեց, որ ծոմ պահեն ամբողջ Յուդայի երկրում:
Բ Մնաց. 20.3

Անփոփոխ սեր

Երբ ես ավագ դպրոցի աշակերտ էի, համալսարանի թենիսի խմբում էի խաղում: Պատանեկուլթյան տարիներին ժամեր տրամադրեցի՝ զարգացնելու խաղալու իմ կարողությունը մեր տան մոտ գտնվող թենիսի գնդախաղարանում:

Վերջին անգամ երբ այցելեցի այդ քաղաքը, ուզեցի գնալ այդ նույն գնդախաղարանը՝ հույս ունենալով, որ կտեսնեմ ուրիշ խաղացողների ու կհիշեմ իմ անցյալը: Սակայն այդ հին գնդախաղարանը չտեսա: Նրա տեղում հիմա կար դատարկ խոպան դաշտ՝ լեցուն անպետք խոտերով, որոնց վրայից քամին էր անցնում:

Այդ կեսօրից հետո եղած պահը մտքիս մեջ մնացել է որպես հիշեցում կյանքի կարճություն մասին: Այն վայրը, ուր իմ պատանեկուլթյան լավագույն օրերն էի անցկացրել, այլևս գոյություն չուներ: Հետո այդ փորձառություն մասին մտածելը ինձ առաջնորդեց ծերացող Դավիթ Թագավորի այս ճշմարիտ արտահայտությանը. «Մարդու օրերը խոտի պես են. նա ծաղկում է ինչպես վայրի ծաղիկ: Երբ փչի քամին, նա կանհետանա, և նրա տեղն իսկ չի երևա: Բայց Տիրոջ ողորմությունը հավիտյանս հավիտենից իրենից երկյուղ կրողների վրա է» (Սաղմ. 102.15-17):

Մենք ծերանում ենք, և մեր շուրջ եղող աշխարհը կարող է փոխվել, սակայն Աստծո սերը երբեք չի փոխվում: Միշտ կարելի է Նրան վստահել, որ հոգում է նրանց, ովքեր Իրեն են դիմում:

Աղոթք - Հավատարիմ Հայր, շնորհակալ եմ Քո անփոփոխ սիրո համար: Օգնիր, որ Քեզ սիրեմ՝ հավատարմորեն Քեզ ծառայելով: Ամեն:

Սեր փոփոխական աշխարհի մեջ մենք միշտ կարող ենք վստահել անփոփոխ Աստծուն:

Կարդա՛ր
Սաղմոս 102.13.22

Եվ աշխարհն անցնում է, նրա ցանկությունն էլ, բայց Աստծու կամքը կատարողը մնում է հավիտյան:
Ա Յովի. 2.17

Աստծո հետ անկեղծ լինել

Գլուխա խոնարհում եմ, աչքերս փակում և սկսում աղոթել. «Սիրելի՛ Տեր, որպես Քո զավակ՝ Քեզ եմ դիմում այսօր: Տեսնում եմ Քո զորութիւնն ու բարութիւնը...»: Ու հանկարծ աչքերս բացվում են, ու հիշում եմ, թե որդիս հաջորդ օրը հանձնելիք իր պատմութեան հանձնարարութիւնը չի ավարտել: Հիշում եմ նաև, թե նա բասկետբոլի խաղ ունի վաղը, ու երևակայում եմ նրան մինչև ուշ գիշեր արթուն վիճակում՝ փորձելով ամբողջացնել իր գործը: Այս բանը ինձ մտահոգութեան է առաջնորդում՝ խորհելով, թե իր հոգնած վիճակը նրան հիվանդանալու վտանգի տակ պիտի դնի:

Ս. Լուիսը գրեց աղոթքի ժամանակ եղած մտացրութեան մասին՝ մատնանշելով, թե երբ մեր մտքերը սկսում են ցրվել, մենք մեր կամքի զորութիւնն ենք գործածում՝ վերադառնալու մեր աղոթքին: Լուիսը եզրակացնում է՝ ասելով, թե «ավելի լավ է ընդունել, որ մտացրութիւնը մեր ներկայի հարցն է, ու անհրաժեշտ է Աստծուն հասցնել՝ այն դարձնելով մեր աղոթքի հիմնական նյութը»: Հետևողական մի մտահոգութիւն կամ էլ մեղանշական մի մտածում, որ խանգարում է աղոթքը, կարող է դառնալ Աստծո հետ մեր ունեցած խոսակցութեան կենտրոնական նյութը: Աստված ուզում է, որ մենք անկեղծ լինենք, երբ Իր հետ հաղորդակցվենք ու ներկայացնենք մեր մտահոգութիւնները, վախերըն ու ցավերը: Նա չպիտի զարմանա մեր ներկայացրած հարցերով: Նրա՝ մեզնով հետաքրքրվելը նման է մտերիմ բարեկամի՝ մեր հանդեպ ցուցաբերած ուշադրութեան: Քաջալերվում ենք մեր բոլոր հարցերն ու մտահոգութիւնները Աստծուն հանձնելու համար, որովհետև Նա մեր մասին հոգ է տանում (Ա Պետ. 5.7):

Աղոթք - Սիրելի՛ Աստված, Դու գիտես ինչ կա իմ մտքի մեջ այսօր: Օգնիր, որ խաղաղության փորձառութիւնը ունենամ իմ մտահոգութիւնները Քեզ բերելով: Ամեն:

Մտացրութիւնները մեր աղոթքները չպիտի շեղեն:

Կարդա՛ Ա Պետրոս 5. 6-10

Ձեր ամբողջ հոգսը նրա վրա՝ օգեցեք, որովհետև նա ձեզ համար հոգ է անում: Ա Պետ. 5.7

Քրիստոսի հոտը ունեին

Տաքացած ու փոշոտած Բորը փոխադրամիջոցից ցած իջավ տնից հեռու: Նա հոգնած էր երկար օրվա ճանապարհորդությունից հետո, սակայն երախտապարտ էր, որ պիտի կարողանար ընթրել բարեկամների հետ, որոնք այդ շրջանում էին ապրում: Նրանք իրեն դիմավորեցին, ու նա շուտով ունեցավ խաղաղության զգացում: Նա իր տան մեջ լինելու նման հանգիստ, ապահով և արժևորված զգաց: Հետո մտածելով, թե ինչու այդպիսի զգացում ունեցավ անձանոթ միջավայրում, Բորը պատասխանը գտավ Բ Կորնթացիների նամակի մեջ: Պողոս առաքյալը նկարագրում է Աստծո հետևողներին որպես «Քրիստոսի հոտը» ունեցողներ: Բորը ինքն իրեն ասաց. «Ճիշտ այդ է»: Իրեն հյուրընկալողները Քրիստոսի հոտը ունեին:

**Կարդա՛ր
Բ Կորնթ. 2.14-17**

Որովհետև մենք Աստծու առաջ Քրիստոսի անուշ բույրն ենք՝ փրկվածների թե կորածների մեջ:
Բ Կորնթ. 2.15

Երբ Պողոսն ասում է, թե Աստված առաջնորդում է իր ժողովրդին Քրիստոսի «հաղթական տողանցքի» մեջ՝ տարածելով Նրա ճշմարտության բույրը, Նա խոսում է հին ժամանակների մի սովորության մասին: Հաղթական բանակները անուշահոտ խունկեր էին ծխում, երբ տողանցում էին փողոցներով: Հոտը ուրախություն էր տալիս նրանց համակիրներին: Նույն ձևով Պողոսն ասում է, թե Աստծո ժողովուրդը հաճելի բույր է կրում: Դա մի բան չէ, որ մենք ենք ստեղծում, այլ մի բան, որ Աստված է տալիս, երբ մեզ առաջնորդում է, որ տարածենք իր գիտությունը: Բորը հայրս է, ու իր այդ ճամփորդությունը հեռու քաղաք տեղի ունեցավ քառասուն տարի առաջ, սակայն նա երբեք դա չի մոռացել: Նա պատմում է այն մարդկանց մասին, որոնք Քրիստոսի հոտը ունեն:

Աղոթք - Երկնավոր Դայր, շնորհակալ եմ, որ Քո ժողովրդին առաջնորդում ես հաղթանակի և Քո ճշմարտության անուշ բույրը տարածելու մեր միջոցով: Ամեն:

Ո՞վ Քրիստոսի նման հոտ ունի քեզ համար:

Ինչպե՞ս ամուր ամալ

Ցուրտ օր էր, ու ցանկությունս տաքուկ մեքենայից տաքուկ չենք մտնելն էր: Հաջորդ բանը, որ հիշում եմ, գետնին լինելն էր՝ սրունքներս դեպի ներս ու ոտքիս ներքևի մասերը դեպի դուրս: Ոչինչ չէր կոտրվել, սակայն սաստիկ ցավի մեջ էի: Ցավը ուժեղանում էր, մինչ ժամանակն անցնում էր, ու շաբաթներ պետք եղան ինձ վերագտնելու համար:

Մեզնից ո՞վ է, որ նման բանի չի հանդիպել իր կյանքում: Լավ չպիտի՞ լինի, որ մի բան կամ մեկին ունենանք, որ մեզ միշտ ոտքի պահի: Մինչ չկա ապահովություն միշտ ֆիզիկապես հաստատ մնալու իմաստով, կա Մեկը, որ պատրաստ է մեզ օգնել, որպեսզի կարողանանք պատիվ բերել Քրիստոսին այս կյանքի մեջ և մեզ պատրաստել ուրախությունք հանգնելու իր առջև:

Ամեն օր մենք փորձություններ ենք դիմազարավում, նույնիսկ սուտ վարդապետություններ, որոնք փորձում են մեզ չեղել, շփոթեցնել ու թակարդը գցել: Սակայն մեր կարողություններով չէ, որ կարողանում ենք ոտքերի վրա մնալ, երբ քայլում ենք այս աշխարհի մեջ: Որքա՛ն մխիթարիչ է զիտենալ, թե երբ մեր խաղաղությունը պահենք՝ փոխանակ բարկությունք խոսելու, անկեղծություն ցույց տանք՝ դավաճանելու փոխարեն, սերը նախընտրենք՝ ատելության դիմաց և կամ ճշմարտությունը՝ ստի տեղ, մենք Աստծո զորության փորձառությունը կունենանք մեզ ոտքի պահելու համար (Հուդ. 1.24): Ու երբ մենք Աստծո առջև կանգնենք, երբ Քրիստոսը նորից գա, փառաբանությունը, որ բարձրացնում ենք իր մնայուն շնորհի համար, պիտի արձագանքի հավիտենականության մեջ (Հմ. 25):

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք մեր հոգիներին Քո տված ամայուն հոգատարության համար: Ամեն:

Միայն իր արդարությունով զգեստավորվենք՝ անմեղորեն իր գահի առջև կանգնելու համար: Էդուարդ Մոթ

Կարդա՛
Յուդա 1. 24-25

Եվ նրան, որ կարող է անարատ պահել ձեզ և անեղծ կանգնեցնել: Յուդա 1.24

Նա մեր անունները գիտի

Նյու Յորքի Սեպտեմբերի 11-ի հուշակոթող այցելության ընթացքում արագ գույգ ավազաններից մեկը նկարեցի: Այս երկու ավազանների շուրջ պղնձյա տախտակների վրա մոտ 3000 գոհերի անուններն են փորագրված, որոնք մահացան Աշխարհի առևտրական կենտրոնի վրա դաժան հարձակումների հետևանքով: Հետո նկարին ավելի մոտիկից նայելով՝ ուշադրություն դարձրի, որ մի կնոջ ձեռք հենված էր մի անունի: Շատերն են գալիս՝ մի անունի դիպչելու ու սիրելիի հիշելու:

Եսայի մարգարեն հիշեցրեց Աստծո ժողովրդին Նրա չմոռացող սերն ու նրանցով հետաքրքրվելը, հակառակ նրան, որ նրանք հաճախ էին Իրենից հեռացել:

Տերն ասաց. «Մի՛ վախեցիր, որովհետև փրկեցի քեզ և կոչեցի քեզ քո անունով, թե իմն ես» (Ես. 43.1):

22-րդ Սաղմոսի մեջ Դավիթը գրեց. «Եթե նույնիսկ անցնեմ մահվան ստվերների միջով, չեմ վախենա չարից, քանզի դու, Տե՛ր, ինձ հետ ես: Ողորմությունը քո, Տե՛ր, պիտի հետևի ինձ կյանքիս բոլոր օրերին, երկար օրեր ես Տիրոջ տանը պիտի բնակվեմ» (Հմ. 5, 7):

Աստված մեզ երբեք չի մոռանում: Հոգ չէ թե ո՛ւր ենք կամ ի՛նչ հանգամանքներում, Նա գիտի մեր անունները ու մեզ պահում է Իր անուրանալի սիրով:

Կարդա՛ր Սաղմոս 22.1-6

Մի՛ վախեցիր,
որովհետև փրկեցի
քեզ և կոչեցի քեզ
քո անունով, թե
իմն ես:
Ես. 431

Աղոթք - Երկնքում ապրող Հա՛յր, շնորհակալ եմք, որ մեզ անունով ես դիմում ու Քու սիրով պատում՝ այսօր և հավիտյան: Ամեն:

**Աստված գիտի մեր անունները ու մեզ պինդ է պահում
Իր սիրով:**

Wi-Fi կա՞

Երբ մի քանի երիտասարդների հետ պատրաստվում էի միսիո- ներակաՆ ճամփորդութեան, ինձ տրվեց հաճախ հնչող հարցը. «Wi-Fi կա՞»: Ու վստահեցրի, թե պետք է լինի: Ուստի երեակա- յեք նրանց հառաչանքը մի զիչեր, երբ Wi-Fi-ը անջատվեց:

Մեզնից շատերը անհանգիստ են լինում, երբ հեռախոսնե- րից հեռու են մնում, ու երբ դրանք մեր ձեռքերում են, մեր կենտրոնացումը մի- այն դրանց վրա է լինում: Շատ բաների նման համացանցը ու նրա հնարավոր- րութիւնները կարող են մեզ շեղել և կամ օրհնութիւն լինել: Կախված է, թե ի՞նչ ենք անում դրա հետ: Առակներ գրքում կարդում ենք. «Ուղիղ սիրտը իմաստութիւն է որոնում, բայց ան- զուսպ բերանը ծանոթ է չարիքներին» (Առ. 15.14):

Աստծո խոսքի ճշմարտութիւնը գործի դնելով մեր կյան- քում՝ մենք մեզ կարող ենք հարցնել. «Պարտաճանաչորեն ստուգո՞ւմ ենք մեր ընկերային համացանցը ամբողջ օրվա ըն- թացքում: Ի՞նչ է ասում դա այն բաների մասին, որոնց ծարավ ենք: Համացանցում մեր տեսածները քաջալերո՞ւմ են մեզ պա- տասխանատու կյանքով ապրելու (Հմ. 16-21), և կամ էլ զբաղ- վում ենք անպետք բաներով, ինչպես բամբասանքը, չարախո- սութիւնը, զրպարտութիւնը և նյութապաշտութիւնը: Մինչ Սուրբ Հոգու գործին ենք լծվում, մեր մտքերը կարող ենք լց- նել այն բաներով, որոնք «ճշմարիտ, պարկեշտ, արդար, սուրբ և սիրուն են» (Փիլ. 4.8): Աստծո իմաստութեամբ մենք կարող ենք բարի բաներ ընտրել Նրան պատվելու համար:

Աղոթք - Հայր, օգնիր, որ ժամանակս լավ ձևով գործա- ծեմ ու միտքս մաքուր բաներով լցնեմ: Ամեն:

Մեր մտքերը լցրած բաներով է ձևավորվում մեր հոգին:

Կարդա՛
Առակներ 15.9-21

Ուղիղ սիրտը
իմաստութիւն է
որոնում, բայց ան-
զուսպ բերանը ծա-
նոթ է չարիքներին:
Առ. 15.14

Ի՞նչ կա անունի մեջ

Գիր Հարդինը՝ մեթոդական եկեղեցու մի քարոզիչ, իր որդուն անվանեց հոգևակավոր քարոզիչ Ջոն Ուեսլիի անունով՝ ցույց տալու իր որդու հանդեպ իր ունեցած հույսն ու իղձը: Սակայն դժբախտաբար Ջոն Ուեսլի Հարդին ուրիշ ուղի ընտրեց՝ հակառակ առաքելության միտումով իրեն տրված անունին: Քառասուններկու մարդ սպանելով Հարդին դարձավ Արևմտյան Ամերիկայի ամենասոսկայի մարդասպաններից մեկը 1800-ականների վերջերին: Աստվածաշնչի մեջ, ինչպես զանազան մշակույթներում, անունները յուրահատուկ նշանակություն ունեն: Աստծո Որդու ծնունդը հայտարարելով հրեշտակը Հովսեփին ցուցում տվեց Մարիամի որդուն Հիսուս կոչելու, քանի որ նա պիտի փրկեր իր ժողովրդին իրենց մեղքերից (Մատթ. 1:21): Հիսուսի անունի իմաստը՝ «Աստված փրկում է», հաստատեց մեղքից փրկելու Նրա առաքելությունը: Հարդինին հակառակ՝ Հիսուսը ամբողջովին ու ամեն կերպով իր անունի համեմատ ապրեց: Իր մահով ու հարությանը ամբողջացրեց փրկության իր առաքելությունը: Հովհաննեսը հաստատեց Հիսուսի անվան կյանք տվող զորությունը՝ ասելով. «Բայց սրանք գրվեցին, որպեսզի հավատաք, որ Հիսուսն է Քրիստոսը՝ Աստծու Որդին, և որպեսզի հավատալով՝ նրա անունով կյանք ունենաք» (Հովհ. 20:31): Գործք Առ. գիրքը հրավիրում է բոլորին՝ նրան ապավինելու, որովհետև «երկնքի ներքո մարդկանց տրված ուրիշ անուն էլ չկա, որով հնարավոր լինի մեզ փրկվել» (Գործք 4:12): Բոլոր նրանք, ովքեր հավատաքով Հիսուսի անզուգական անունն են կանչում, կարող են Նրա տված ներման ու հույսի փորձառությունը ունենալ: Դու երբեք կանչե՞լ ես Նրան:

Կարդա՛

Նա որդի կճնի, և նրա անունը Հիսուս կդնես, որովհետև նա իր ժողովրդին կփրկի իր մեղքերից: Մատթ. 1.21

Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ Որդուդ՝ Հիսուսի միջոցով փրկություն ես հայթայթում: Քեզ սիրում եմ: Ամեն:

Հիսուսի անունը նաև իր առաքելությունն է՝ փնտրել ու փրկել կորսվածը:

Ամբողջական գոհացումը

Մերը Գրոց վարժարանի մի միջոցառման ժամանակ, երբ փոքրիկներին թեթև ուտելիքներ էինք բաժանում, նկատեցինք մի փոքր տղայի, որ արագ կերավ իր բաժինը: Հետո նա նաև կերավ իր սեղանին նստած փոքրիկների չկերած ուտելիքը: Նույնիսկ մի տոպրակ պոպ կորն տալուցս հետո տակավին չգոհացավ: Որպես առաջնորդներ՝ սկսեցինք մտահոգվել, թե ինչու էր նա դեռ անոթի: Ինձ թվում է, թե մենք էլ կարող ենք այդ մանուկի նման լինել, երբ մեր զգացումները նկատի ունենանք: Մենք փնտրում ենք զանազան միջոցներ մեր սրտի փափագները գոհացնելու համար, սակայն բնավ չենք գտնում, թե ինչը կարող է մեզ ամբողջովին գոհացնել:

Եսայի մարգարեն հրավիրում է նրանց, ովքեր անոթի ու ծարավ են, գալու և կերակուր գնելու (Ես. 55.1): Ապա հարցնում է. «Բայց ինչո՞ւ արծաթով ճարպ եք գնում և ոչ թե հաց, ձեր վաստակն ինչո՞ւ կշտանալու համար չեք ծախսում» (Հմ. 2): Եսային խոսում է սովորական ֆիզիկական անոթությունից ավելի մասին: Աստված կարող է գոհացնել մեր հոգևոր և զգացական անոթությունը իր ներկայություն խոստումով: Երրորդ համարի մեջ նշված «Հավիտենական ուխտը» հիշեցում է Աստծո՝ Դավթին արած խոստումի (Բ Թագ. 7.8-16): Դավթի տնից Փրկիչ պիտի ծնվի, որ պիտի վերահաստատի Աստծո ու մարդկանց միջև եղած կապը: Հետո Հովհ. 6.35 և 7.37 համարների մեջ Հիսուսը Եսայիին տրված նույն հրավերն է ներկայացնում՝ Իրեն նույնացնելով Եսայի և այլ մարգարեներին նախապես ներկայացրած Փրկչին: Անոթի ես: Աստված հրավիրում է քեզ գալու և լցվելու իր ներկայությամբ:

Աղոթք - Հայր, փափագում եմ Քեզ ավելի լավ ճանաչել: Միայն Դու կարող ես իմ փափագները գոհացնել: Ամեն:

Միայն Աստված պիտի գոհացնի մեր հոգևոր անոթությունը:

Կարդա՛ր Եսայի 55.1-7

Ո՛վ դուք, որ ծարաված եք, գնացե՛ք ջրի, և դուք, որ բուլորովին արծաթ չունեք, գնացե՛ք գնեցե՛ք ու կերե՛ք: Եսայի 55.1

Բարի է՞ քեզ համար

Քանի որ ես սիրում եմ մուգ տուրմը, համացանցում որոնում կատարեցի՝ հարց տալով. «Մուգ տուրմը օգտակա՞ր է մեզ համար»: Գտա զանազան պատասխաններ. որոշները դրական, որոշները՝ բացասական: Նույն որոնումը դու էլ կարող ես անել համացանցում ցանկացած ուտելիքի վերաբերյալ: Կաթը, սուրճը և բրինձը օգտակա՞ր են քեզ համար: Զանազան պատասխաններ պիտի գտնես: Հետևաբար, զգուշ պիտի լինես, որովհետև որոնումը կարող է դրական չլինել ու քեզ ցավ պատճառել:

Սակայն եթե փորձում ես մի բան, որ միշտ հարյուր տոկոսով բարի է քեզ համար, Աստծո Սուրբ Խոսքն է: Լսիր, թե ինչ կարող է անել Նա Հիսուսին հետևողի համար, որ փնտրում է Աստծո հետ հարաբերություն մշակելու ուղին:

Քեզ կարող է մաքուր և ընտիր պահել (Սաղմ. 118.9, 11): Քեզ կօրհնի (Ղուկ. 11.28): Քեզ իմաստուն կդարձնի (Մատթ. 7.24): Լուսավորություն և իմաստություն կպարգևի (Սաղմ. 118.130): Քեզ կօգնի հոգևոր աճման մեջ (Ա Պետ. 2.2):

Մեր Աստված բարի է. «Տերը քաղցր է բոլորի հանդեպ», ասում է Սաղմոս 144.9-ը: Եվ իր բարությունն մեջ իրեն սիրողներին տվել է մի առաջնորդ, որ օգնում է մեր հարաբերությունը իր հետ զորացնել: Մինչ փորձում ենք որոշել, թե ինչպես կարելի է ապրել աշխարհի մեջ, որ լեցուն է զանազան ընտրություններով, փառք տուր Աստծուն, որ հայտնել է իր Խոսքի մեջ, թե ինչն է բարի մեզ համար: Սաղմոսերգուի հետ ասա՛. «Որքա՛ն քաղցր են Քո խոսքերն իմ քիմփին, ավելի քաղցր, քան մեղրն իմ բերանին» (Սաղմ. 118.103):

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք, որ մեզ տվել ես Քո Սուրբ Խոսքը: Օգնիր մեզ ուշադրությամբ կարդալ, ճշգրտությամբ մեկնաբանել և հաճույքով գործադրել այն մեր կյանքերի մեջ: Ամեն:

Աստծո Խոսքը միակ հաստատ հիմքն է մեր կյանքերի:

Կարդա՛
Սաղմոս 118.65-72

Քաղցր ես դու,
Տեր, և քո քաղցրությամբ քո արդարադատությունը սովորեցրու՛ ինձ:
Սաղմոս 118.68

Աղոթելու շիտակ ձևը

Հիանում եմ այն մարդկանցով, որոնք իրենց աղոթքի խնդրանքները արձանագրում են հաճախ գործածված ու հնացած օրագրի մեջ: Նրանց, որոնք հաշիվը պահում են յուրաքանչյուր աղոթքի ու փառաբանությունների և հավատարմությունների, իրենց ցանկերն են թարմացնում: Ներշնչվում եմ նրանցով, որոնք ուրիշների հետ հավաքվում են աղոթելու, և անկողնի կողքին նրանց ծնկների տակի գորգը մաշում է: Տարիներ շարունակ փորձեցի ընդօրինակել նրանց աղոթքի ձևն ու պերճախոսությունը՝ կատարյալ աղոթքի կյանքի հետամուտ լինելու: Ճիգ թափեցի խորհրդավոր թվացող թնջուկը պարզելու համար, երբ ուզեցի աղոթելու շիտակ ձևը սովորել:

Վերջապես հասկացա, թե մեր Տերը պարզապես ցանկանում է մի աղոթք, որ սկսվում է ու վերջանում խոնարհությունով (Մատթ. 6:5): Նա հրավիրում է մեզ մտերմիկ խոսակցության, որի միջոցով Նա խոստանում է լսել (Հմ. 6): Նա երբեք չի պահանջում շքեղ և անգիր սովորած բառեր ու նախադասություններ (Հմ. 7): Նա վստահեցնում է, թե աղոթքը պարզև է, առիթ իր մեծափառությունը պատվելու (Հմ. 9-10)՝ ցույց տալով մեր վստահությունը իր նախատեսության հանդեպ (Հմ. 11), և մեր ապահովությունը հաստատելու իր ներումի ու առաջնորդության մեջ (Հմ. 12-13): Աստված վստահեցնում է մեզ, թե լսում է յուրաքանչյուր արտասանված կամ չարտասանված աղոթք, նաև այն աղոթքները, որոնք մեր այտերից ցած են հոսում՝ որպես լուռ արցունքներ: Մինչ մեր վստահությունը ղնում ենք Աստծո և մեր հանդեպ իր ունեցած կատարյալ սիրո վրա, մենք կարող ենք վստահ լինել, թե իրեն հանձնվելու նպատակով խոնարհ սրտով աղոթելը միշտ էլ շիտակ ձևն է աղոթելու:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմ, որ հիշեցնում ես մեզ, թե Դու լսում ես յուրաքանչյուր աղոթք: Ամեն:

Քիսուսի՞ն դիմել՝ որպես մեր սիրող Փրկչի ու Տիրոջ, շիտակ ձևն է աղոթելու:

Կարդա՛ր
Մատթեոս 6.5-15

Բայց դու երբ աղոթք անես, քո սենյակը մտիր և դուռդ փակած աղոթք արա քո Յորը, որ ծածուկ տեղում է...
Մատթ. 6.6

Սիրո ավանդները

Մեծ տատիս Աստվածաշունչն էի թերթատում, երբ մի գանձ ընկավ գրկիս մեջ: Փոքրիկ սևագիր թղթի վրա մանկական ձեռագրով հետևյալ բառերն էին արձանագրված. «Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի թագավորությունը: Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք կմխիթարվեն» (Մատթ. 5.3-4): Այդ գրված համարների կողքին տեսա մորս մրտած ստորագրությունը: Մեծ տատս իր թոռներին Սուրբ Գրքի համարներ գրել սովորեցնելու սովորություն ուներ, որպեսզի նրանք սովորեին ու իրենց սրտերի մեջ պահեին այդ համարները: Սակայն այս համարի ետևում գտնվող պատմությունը արցունքներ հոսեցրեց աչքերիցս: Պապս մահացավ, երբ մայրս շատ փոքր էր, ու նրա կրտսեր եղբայրը մահացավ մի քանի շաբաթ հետո: Այդ տխուր ու ցավալի օրերին էր, որ մեծ տատս մորս ցույց տվեց Հիսուսին ու այն մխիթարությունը, որ միայն Նա կարող էր տալ: Պողոսը Տիմոթեոսին գրեց. «Միտքս բերելով այն անկեղծ հավատը, որ քո մեջ է, որ նախ քո Լորդա տատի ու քո Եվնիկե մոր մեջ բնակվեց. համոզված եմ, որ այն քեզանում էլ է» (Բ Տիմ. 1.5): Հավատքը ժառանգական չէ, սակայն կարելի է բաժանել: Տիմոթեոսի մայրը և տատը իրենց ունեցած հավատքը կիսեցին Տիմոթեոսի հետ, ու նա հավատաց:

Երբ մենք քաջալերենք մեզ մոտիկ եղողներին հույս ունենալ Հիսուսի վրա, նրանց սիրո ավանդ կփոխանցենք: Պարզ գրությունով մայրս ապացուցեց մեծ տատիս Հիսուսի, ինչպես նաև իր ընտանիքի հանդեպ ունեցած սիրո մասին: Ի՛նչ լավ է մեր հավատքն ու համոզումները բաժանել մեր հաջորդ սերնդի հետ:

Աղոթք - Հայր, շնորհակալ եմք նրանց, որոնք Քո սերը կիսեցին: Խնդրում եմ օգնիր ինձ, որ ես էլ կարողանամ ուրիշներին Քո փրկության առաջնորդել: Ամեն:

Երբ մեր հավատքը կիսենք, կկիսենք մեծագույն գանձը:

Կարդա՛ր Բ Տիմ. 1. 1-5

Այսպես ձեր լույսը մարդկանց առաջ թող լուսավորի, որ ձեր բարի գործերը տեսնեն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է: Մատթ. 5.16

Իր ձեռքերին փորագրված

1800-ական թթ. Չարլզ Սփրըջընը Լոնդոնի եկեղեցում իր երկար տարիների ծառայության ընթացքում սիրեց քարոզել Եսայի 49.16-ի հարստությունների մասին, որ ասում է, թե Աստված մեզ փորագրում է Իր ափի մեջ: Նա ասաց. «Նման Սուրբ Գրային հատվածի մասին հաճախակի պիտի քարոզներ տրվեն»: Այս խորհուրդը այնքան արժեքավոր է, որ դրա մասին կարող ենք շարունակ մտածել:

Սփրըջընը սքանչելի կապ է գտնում Իր ժողովրդին տրված Տիրոջ խոստումի ու մեզ համար խաչի վրա մեռնող Աստծո Որդու՝ Հիսուսի միջև: Սփրըջընը հարցնում է. «Ի՞նչ վերքեր են Քո ձեռքի մեջ: Փորագրիչի գործիքը գա՛մն էր՝ մուրճի հետ: Նա պետք է խաչի վրա հաստատվի, որպեսզի Իր ժողովուրդը իրապես Իր ափերի մեջ փորագրվի»: Ինչպես Տերը խոստացավ Իր ժողովրդին փորագրել Իր ափերի մեջ, Հիսուսն էլ Իր թևերը տարածեց ու գամվեց խաչի վրա, որպեսզի մենք մեր մեղքերից ազատ լինենք:

Եթե երբևէ փորձենք խորհել, թե Աստված մեզ մոռացել է, միայն կարիքը կունենանք մեր ափերին նայելու և հիշելու Աստծո խոստումը: Նա Իր ձեռքերի վրա անեղծ ու անջնջելի նշաններ է դրել մեզ համար. մեզ այդքան է սիրում:

Աղոթք - Տեր Աստված, որքա՛ն մեծ է Քո սերն իմ հանդեպ: Ինձ հավիտյան Քեզ մոտ ես պահում: Գիտե՛մ, որ ինձ երբեք չափտի թողնես, ու ես երախտապարտ եմ: Ամեն:

Կարդա՛ր
Եսայի 49.14-18

Ահա իմ ձեռքերի
ափերի մեջ գճագրեցի...
Ես. 49.16

Տերը մեզ Իր ափերի մեջ է փորագրում:

Յարմար ժամանակ

Երեկ ինքնաթիռի տոմս գնեցի անդրանիկ զավակիս քոյեջ ուղարկելու համար: Ջարմանում եմ, թե ինչպես է տակավին համակարգչիս ստեղնաշարը աշխատում արցունքներովս թրջվելուց հետո, երբ փնտրում էի հարմար թռիչքը: Ինձ համար մեծ հաճույք էր նրա հետ տասնութ տարի անցկացնելը, ու հիմա տխուր եմ նրա մեկնումի համար: Այո՛, ես նրան չպիտի գրկեմ այս սրբանշնչի հնարավորությունից՝ գիտենալով, թե նրա բացակայությունը տնից զգալի պիտի լինի: Իր կյանքի այս խաչմերուկում հարմար է, որ նա սկսի կյանքի նոր ճամփորդություն, չափահասությունն ու փորձառությունը ունենա, ինչպես նաև ծանոթանա նոր շրջանակի: Մինչ ծնող լինելու այս եղանակը իր վերջին է հասնում, ուրիշ փուլ է սկսվում: Անկասկած այս նոր հանգրվանը իր հետ պիտի բերի նոր մարտահրավերներ, ինչպես նաև նոր ուրախություններ: Սողոմոնը՝ Իսրայելի երրորդ թագավորը, գրեց, թե Աստված նշանակում է «ամեն բանի ժամանակը, ու աշխարհում ամեն գործի ժամանակը» (Ժող. 3.1): Մենք մարդ արարածներս շատ քիչ իշխանություն ունենք մեր կյանքերի մեջ պատահած դեպքերի վրա, հոգ չէ թե մենք այս դեպքերին նայում ենք որպես նպաստավոր կամ ոչ: Սակայն Աստված Իր հզոր ուժով ամեն ինչ անում է իր ժամանակին (Հմ. 1): Տխուր ժամանակ մենք կարող ենք Աստծուն վատահել, որ ժամանակի ընթացքում բարիք բերի: Մեր մխիթարություններն ու ուրախությունները գալիս են ու անցնում, սակայն Աստծո գործը «պիտի մնա հավիտյան» (Հմ. 14): Մենք կարող ենք ամեն եղանակ վայելել: Թեև մի շարք եղանակներ բավական ցավալի են, սակայն Նա կարող է գեղեցկություն առաջացնել այդ բոլորից:

**Կարդա՛ր
 Ժողովող 3.1-14**
 Նա ամեն ինչ լավ է արել իր ժամանակի համար: Ժող. 3.11

Աղոթք - Հայր, Դու ես թույլ տվել այս եղանակը իմ կյանքի մեջ: Օգնիր, որ կարողանամ տոկալ նրա մեջ ու տեսնել, թե Քո գորութունն ու ուժը աշխատանքի վրա են: Ամեն:

Աստված գեղեցկություն է առաջացնում բոլոր եղանակներին:

Ո՛ր գտնել հույս

Էլիզաբեթը երկար տառապեց թմրեցուցիչի մոլուցքով, ու երբ բժշկվեց, ուզեց ուրիշներին էլ օգտակար լինել: Հետևաբար, սկսեց անանուն նոթեր գրել և քաղաքի մեջ տարածել: Նա դրանք փակցնում է մեքենաների ապակիների թարթիչների տակ, ինչպես նաև հանրային այգիների ձողերին: Նա փորձում էր հույսի նշույլներ տեսնել անցյալում ու հիմա այդ գրությունները թողնում է, որպեսզի ուրիշները կարողանան գտնել այդ հույսը: Իր գրություններից մեկը այսպես է վերջանում. «Շատ սե՛ր, հույս ուղարկված»:

Հույսով սեր. Հիսուսը տալիս է սա: Նա իր սերը մեզ հայտնում է ամեն նոր օրվա հետ ու հույսով է զորացնում մեզ: Իր սերը կաթիլ-կաթիլ չի տրվում, այլ սրտից է բխում ձրի կերպով ու հեղեղի նման հոսում մեր սրտերի մեջ: Գիտենք, թե Աստված որքա՛ն է մեզ սիրում, որովհետև մեզ տվել է իր Հոգին՝ մեր սրտերը իր սիրով լցնելու համար: Նա ուզում է մեր ունեցած դժվար պահերը գործածել՝ մեր մեջ համբերության հոգի ու նկարագիր զարգացնելու, ինչպես նաև հույսով լեցուն գոհացուցիչ կյանք առաջացնելու համար (Հռոմ. 3-4): Եվ եթե նույնիսկ մենք իրենից հեռու մնանք, Նա տակավին մեզ կսիրի (հմ. 6-8):

Հույսի նշաննե՞ր ես փնտրում: Տերը սիրով հույս է տալիս՝ մեզ հրավիրելով, որ աճենք իր հետ մեր ունեցած հարաբերության մեջ: Կատարյալ կյանք ունենալու մեր հույսը խարսխված է իր հաստատուն սիրո վրա:

Աղոթք - Շնորհակալ եմ, Աստված, Քո տված առատ սիրո համար: Խնդրում եմ, տո՛ւր ինձ գոհունակություն ու վստահություն՝ Քո արածների համար: Ամեն:

Հույսը հոգու խարխսն է:

Կարդա՛ր Հռոմեացիներ 5.1-11

Հույսն էլ չի ամաչեցնում, որովհետև Աստծու սերը սփռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ: Հռ.5.5

Անակնկալ միջոցներ

1986-ին Հինգ տարեկան Լևան Մերիթթը Անգլիայի Ջերսի կենդանաբանական այգու քսան ոտք բարձրությունից մարդանման կապիկի վանդակի մեջ ընկավ: Մինչ նրա ծնողները ու կողքին եղողները օգնություն ճիչեր բարձրացրին, Ջամբո կոչված արու մեծ մարդակապիկներից մեկը կանգնեց անշարժ մանուկի և մյուս կապիկների միջև: Հետո սկսեց մեղմորեն երեխայի մեջքին զարկել: Երբ Լևանը սկսեց լալ, Ջամբոն առաջնորդեց մյուս մարդակապիկներին իրենց տեղերը» ու մինչ այդ կենդանաբանական այգու աշխատավորներն ու շտապ օգնության վարորդները օգնության հասան: Երեսու՛ն տարի հետո տակավին Լևանը խոսում է Ջամբոյի մասին՝ կոչելով նրան «ագնիվ հսկա» ու «պահապան հրեշտակ», որ անակնկալ կերպով վարվեց՝ մնայուն կերպով փոխելով մարդակապիկների մասին եղած ըմբռնումը: Եղիան ակնկալեց, որ Աստված որոշ կերպով վարվի, սակայն աստվածների Աստվածը գործածեց քարեր և ժայռեր փշրող սաստիկ քամի, գորավոր երկրաշարժ և այրող կրակ՝ ցույց տալու Իր մարգարեին, թե Ինքը ինչպիսի Աստված է: Հետո Նա գործածեց թեթև ձայն՝ Իր սիրտը ցույց տալու ու հայտնելու Իր ներկայությունը (Գ Թագ. 19.11-12): Եղիան նախապես տեսել էր Աստծո գորությունը (18.38-39): Սակայն նա ամողջությամբ չհասկացավ Նրան, որ ուզում է ճանաչվել որպես մեծագույնն ու ահավորը բոլոր աստվածների մեջ (19.10, 14): Վերջիվերջո, թեթև փափսուքը իր իմաստը գտավ Հիսուսի հզոր հեզություն մեջ, որ ասաց. «Ինձ տեսողը Հորը տեսավ» (Յովհ. 14.9): Հետո Նա լուսությամբ ընդունեց խաչի վրա գամվելը՝ որպես մեզ սիրող մեծ Աստծո անակնկալ ու սիրո արարք:

Կարդա՛ր
Գ Թագ. 19.1-12

Ինձ տեսողը Հորը
տեսավ... Հովհ. 14.9

Աղոթք - Երկնավոր Հայր, խնդրում եմք, օգնիր մեզ քաջություն գտնելու Քո մեղմ ձայնի ու Քո Որդու միջոցների մեջ: Ամեն:

Աստված չպիտի գոռա, երբ մենք կարիք ունենք փսփսոցի:

Քաջալերողների օրհնությունը

2010 թվականի «Թագավորի ճառը» շարժանկարը պատմում է Անգլիայի Ջորջ 2 թագավորի պատմությունը, որ անակնկալ կերպով գահ բարձրացավ, երբ իր եղբայրը թողեց թագավորական գահը: Երկիրը Համաշխարհային երկրորդ պատերազմի եզրին էր, կառավարական պաշտոնյաները ցանկանում էին ունենալ ճարտասան առաջնորդ, որովհետև ձայնասափյուռը սկսել էր ունենալ իր մեծ ազդեցությունը ժողովրդի վրա: Սակայն Ջորջ թագավորը կնկմալու ու կակազելու խնդիր ուներ: Ուշադրությունն հատկապես զրավեց Փիլմի մեջ ցուցադրված Ջորջ թագավորի կնոջ նկարագրությունը: Թագավորի խոսակցության դժվարությունը հաղթահարելու ցավալի պայքարի մեջ թագուհին դարձավ քաջալերանքի հարատև աղբյուր: Նրա նվիրումը տվեց Ջորջին հարկ եղած օգնությունը՝ մարտահրավերը դիմազրավելու և երկրին իշխելու: Աստվածաշունչը մատնանշում է քաջալերողների և հորդորողների պատմություններ, որոնք տվեցին իրենց օգնությունը մարտահրավերներով լեցուն պարագաներում: Մովսեսը ունեցավ Ահարոնի և Ուրի օժանդակությունը Իսրայելի պատերազմի ժամանակ (Ելք 17.8-16), Եղիսաբեթը քաջալերեց իր հղի ազգականին՝ Մարիամին (Ղուկ. 1.42-45): Իր վերադարձից հետո Պողոսը կարիք ունեցավ Բառնաբասի օգնության: Երբ Հիսուսի աշակերտները Պողոսից վախենում էին, Բառնաբասը, իր դեմ եղած սպառնալիքը ընդունելով, երաշխավոր եղավ նրան (Գործք Առ.9.27): Հիսուսին հավատացողները կոչ ունեն «իրար քաջալերելու և շինություն տալու» (Աթես. 5.11): Թող մենք էլ հորդորենք և օգնենք ուրիշներին, հատկապես երբ նրանք դիմազրավում են դժվար հանգամանքներ:

Աղոթք - Տե՛ր Հիսուս, շնորհակալ եմ այն մարդկանց համար, որ դրել ես իմ կյանքի մեջ՝ ինձ հորդորելու համար: Օգնիր, որ ե՛ս էլ ուրիշներին հորդորեմ: Ամեն:

Բարեկամի քաջալերանքը կարող է մեծ փոփոխություն առաջացնել:

Կարդա՛ր Գործք Առ. 9. 26-31

Բայց Բառնաբասը նրան (Սողոսին) վերցրեց, առաքյալների մոտ տառավ...Գործք Առ. 9.27

Եղբորդ լսել

«**Դո՛ւ՛** ինձ պիտի լսես. ես եղբայրդ եմ»: Այս խնդրանքը եկավ մեր շրջանում ապրող մտահոգ մի մեծ եղբորից՝ ուղղված կրտսեր եղբորը, որ կամաց-կամաց հեռանում էր իրենից՝ անհանգստացնելով հարազատին: Պարզ էր, որ մեծ եղբայրը ավելի ունակ էր դատելու, թե ինչն է լավագույնը այդ պարագայում:

Մեզնից քանի՞ հոգի է փորձել դեմ կանգնել եղբոր կամ քրոջ իմաստուն խորհուրդներին: Եթե կրել ես ավելի հասուն մարդուց լավ խրատին դիմադրելու հետևանքները, միայնակ չես:

Մեծագույն աղբյուրը, որ կարող ենք ունենալ որպես հավատացյալ Հիսուսի մեջ, ընտանիքն է, որ հոգևոր առումով կապվում է Նրա հանդեպ եղած հավատքին: Այս ընտանիքի մեջ կան հասուն այրեր ու կանայք, որոնք Աստծուն ու միմյանց են սիրում: Իմ շրջանում ապրող կրտսեր եղբոր նման մենք էլ երբեմն կարիք ունենք սրբազրույթյան կամ զգուշացումի խոսքեր լսելու՝ մեզ կարգի բերելու համար: Սա հատկապես ճիշտ է, երբ մեկի վրա հարձակվենք, և կամ էլ մեկը մեզ վրա հարձակվի: Անել այն, ինչ շիտակ է, կարող է դժվար լինել: Սակայն Հիսուսի խոսքերը Մատթեոս 18.15-20-ի մեջ մեզ ցույց են տալիս ինչ անել, երբ հարձակումներ են լինում մեր հոգևոր ընտանիքի մեջ: Բարեբախտաբար, մեր գթառատ Աստված մեր կյանքերի մեջ դնում է մարդկանց, որոնք պատրաստ են մեզ օգնելու, որ իրեն և ուրիշներին պատվենք: Ու երբ լսենք, մեր ընտանիքները կբարեկամվեն (Հմ. 15):

Աղոթք - Հայր, փառք ենք տալիս Թեզ, որ մեզ դրել ես Քո հոգևոր ընտանիքի մեջ: Օգնիր, որ սովորենք ու աճենք հավատակից բարեկամների իմաստուն խոսքերի և Աստվածային վարմունքի միջոցով: Ամեն:

Իմաստությունը աճում է, երբ մենք լսում ենք հասուն հավատացյալների խոսքերը:

Կարդա՛ր
Մատթեոս 18.15-20

...մեղավորին իր մոլորության ճանապարհից դարձնողը մի հոգու մահից կիրակի և մեղքերի շատությունը կծածկի: Հակ. 5.20

Աստծո ճանապարհի մեջ քայլել

«Մենք այս ճամփով ենք գնում», - ասացի որդուս՝ իր ուսին դիպ-
չելով և ուղղորդելով նրան ամբոխի մեջ հետևելու իր մորն ու քրո-
ջը, որոնք մեր առջևից էին քայլում: Սա հաճախ էի անում, մինչ
մեր ընտանեկան զբոսանքը շարունակվում էր: Նա սկսել էր հոգ-
նել և հեշտությամբ մտադրվել, ու ես ինձ հարց էի տալիս. «Ին-
չո՞ւ է չի կարող պարզապես նրանց հետևել»: Հետո հասկացա ու ես
ինձ մտածեցի, թե որքա՞ն հաճախ ես էլ
նույնն եմ անում: Որքա՞ն հաճախ եմ շեղ-
վում հավատարմությամբ Աստծուն հնա-
զանդելու ճամփիս մեջ ու իմ ուզածն անե-
լու փորձություններով եմ հրապուրվում՝
փոխանակ Աստծո ճամփան փնտրելու:

Մտածիր Իսրայելի ժողովրդի համար
Եսայու՝ Աստծուց առած խոսքերի մասին.
«Եվ ականջներդ քեզ մոլորեցնողների
ետևից լսելու են նրանց ասած խոսքերը, թե՛
«Սա է ճանապարհը, այստեղով գնանք», և
կամ թե՛ «Դեպի ա՛ջ, կամ՝ դեպի ձա՛խ» (Ես. 30.21): Գլխի սկզբում
կարդում ենք, թե Աստված հանդիմանում է իր ժողովրդին իրենց
ապստամբության համար: Սակայն եթե նրանք իր զորությանը վա-
տահեն՝ իրենց անձերի զորությանը վատահելու փոխարեն (Հմ. 15),
Նա խոստանում է իր չնորհն ու սերը ցույց տալ նրանց (Հմ. 18):
Աստծո չնորհի արտահայտություններից մեկը մեզ իր Հոգով առաջ-
նորդելու խոստումն է: Սա պատահում է, մինչ խոսում ենք իր հետ
մեր փափազների մասին ու աղոթքով խնդրում ենք, թե ինչ ունի մեզ
համար: Ես չնորհակալ եմ, որ Աստված համբերութեամբ մեզ առաջ-
նորդում է օրեօր, քայլ առ քայլ, մինչ իրեն ենք վատահում ու լսում
իր ձայնը:

Աղոթք - Հայր, Դու խոստացել ես մեզ առաջնորդել մեր
դժվարությունների մեջ: Օգնիր, որ վստահենք Քո առաջնոր-
դող ձայնին ու լսենք այն: Ամեն:

**Աստված համբերությամբ ուղղորդում է մեզ, մինչ մենք
իրեն ենք վստահում ու լսում իր ձայնը:**

Կարդա՛ Եսայի 30.15-21

Ականջներդ քեզ մոլոր-
եցնողների հետևից
լսելու են նրանց
ասած խոսքերը, թե՛
«Սա է ճանապարհը,
այստեղով գնանք»,
և կամ թե՛ «Դեպի ա՛ջ,
կամ՝ դեպի ձա՛խ»:
Ես. 30.21

Շատ գեղեցիկ բաներ

Իր մահից անմիջապես առաջ միսիոններ և արվեստագետ Լի-լիաս Թրոթերը պատուհանից դուրս նայեց ու տեսավ երկ-նային կառքերի տեսիլք: Նրա կենսագրի համաձայն՝ մի բարե-կամ հարցրեց. «Շատ գեղեցիկ բաներ տեսնո՞ւմ ես»: Նա պա-տասխանեց. «Այո, շա՛տ, շա՛տ գեղեցիկ բաներ»:

Թրոթերի վերջին խոսքերը ցոլացնում են Աստծո կատարած գործերը իր կյանքի մեջ: Ո՛չ միայն մահ-վան մեջ, այլ իր ամբողջ կյանքում Աստ-ված նրան ու նրա միջոցով ցույց տվեց շատ գեղեցիկություններ: Թեև տաղանդա-վոր արվեստագետ լինելով՝ նա ընտրեց ծառայել Տեր Հիսուսին որպես միսիոներ

**Կարդա՛ր
Մարկոս 14.1-9**

...նա ինձ համար
մի բարի բան
արեց: Մարկ. 14.6

Ալժիրիայի մեջ: Ասվում է, թե նշանավոր նկարիչ Ջոն Ռապերը, որ սովորեցրել էր իրեն, ասել է. «Ի՛նչ մեծ կորուստ», երբ նա նա-խընտրել էր միսիոներություն դաշտը՝ արվեստի փոխարեն:

Նմանապես Նոր Կտակարանի մեջ, երբ մի կին եկավ բորոտ Սիմոնի տունը իր ալաբաստրե շշով ու թափեց անուշահոտ օծա-նելիքը Հիսուսի գլխին, նրանք, որ այնտեղ էին, այդ բանը նկա-տեցին որպես մեծ վնաս: Այս թանկարժեք անուշահոտը հավասար էր տարեկան վարձատրություն, հետևաբար, ներկաներից ոմանք խորհեցին, թե դրանով կարելի էր աղքատներին օգնել: Սակայն գնահատելով կնոջ այս կատարյալ նվիրումը՝ Իր հանդեպ՝ Հիսուսն ասաց. «Նա ինձ համար մի բարի բան արեց» (Մարկ. 14.6):

Ամեն օր մենք կարող ենք այնպիսի բաներ ընտրել, որ Քրիստո-սի կյանքը շողա մեր կյանքերի մեջ, և Իր գեղեցիկությունը աշխար-հին ներկայացվի: Ոմանց համար թեև կարող է որպես կորուստ թվալ, սակայն ունենանք կամեցող սիրտ իրեն ծառայելու: Թող Հի-սուսը մեզ համար էլ ասի, թե լավ բան ենք արել Նրա համար:

Աղոթք - Սիրելի՛ Հայր, օգնիր ինձ, որ կարողանամ Քո հանդեպ իմ ունեցած սերը ցույց տալ լավ ձևերով: Ամեն:

**Թող որ մեր կյանքերը ներկայացնեն Աստծո
գեղեցկությունը:**

Ձկան մասին չէ՛

Ավստրալիայի Հարավային Քուինսլենդի ծովեզերքը բազմաթիվ անգամներ է երևացել Միգալուն, որ միակ արձանագրված առաջին լսնամորթ կես ձուկն է: Քառասուն ոտքից ավելի երկար եղող այդ չքեղ արարածը այնքան հազվագյուտ է, որ Ավստրալիան օրենք է ընդունել՝ նրան պաշտպանելու համար: Աստվածաշունչը մեզ պատմում է շատ հազվագյուտ «մեծ ձուկի» մասին, որ Աստված հայթայթել է՝ փախստական մի մարգարեի կուլ տալու համար (Հովն. 2.1): Աստված պատվիրում է Հովնանին, որ իր դատապարտության պատգամը տանի Նինվեի ժողովրդին: Սակայն Հովնանը չի ուզում որևէ ձևով կապ ունենալ Նինվեի ժողովրդի հետ, որոնք դաժան էին բոլորի հանդեպ: Ուստի նա փախուստ է տալիս, և դժվար բաներ են պատահում: Ձկան փորի միջից Հովնանը զղջումի աղոթք է բարձրացնում ու ազատվելով՝ Աստծո պատգամը Նինվեի ժողովրդին տանում, ու նրանք էլ են դարձի գալիս (3.5-10): Մինչ Նինվեի ժողովուրդը դարձի է գալիս, Հովնանը դժգոհում է, բարկանում ու ապա աղոթում՝ ասելով. «Ո՛վ Տեր, ես այդ նույն բանը չասացի՞, երբ տակավին երկրում էի... քանի որ գիտեի, որ Դու գլխասիրտ ես ու ողորմած, համբերող ես ու բազմողորմ և զղջում ես չարիքների համար» (4.2): Հակառակ նրան, որ Հովնանը ստույգ մահից ազատված էր, իր մեղավոր բարկությունը շատանում է, մինչև իսկ աղոթում է՝ մահ ցանկանալով (հմ. 3): Հովնանի պատմությունը ձկան մասին չէ: Դա մեր մարդկային բնության մասին է, ինչպես նաև Աստծո բնության: Աստված իր սերն է առաջարկում անգուլթ Նինվեի ժողովրդին, դժգոհ մարգարեին և քեզ ու ինձ:

Կարդա՛ Յովնան 3.10-4.4

Եվ Աստված տեսավ նրանց գործերը, քանի որ բոլորը հետ էին կանգնել իրենց չար ճանապարհներից. Աստված զղջաց...
Յով. 3.10

Աղոթք - Սիրո՛ղ Աստված, օգնիր, որ Քո սիրո մեջ բնակվենք և ուրիշներին պատմենք: Ամեն:

Մեր սերը սահմաններ ունի. Աստծո սերը անսահման է:

Երբ հոգնած էինք

Երբեմն ճիշտն անելը սպառույց է: Մենք կարող ենք մտածել. «Բարի նպատակով իմ արտասանած խոսքերն ու արած գործերը մի՞թե տարբերություն են բերում»: Վերջերս այսպես մտածեցի, երբ աղոթքով էլեկտրոնային նամակ ուղարկեցի՝ մի բարեկամի քաջալերելու համար: Սակայն բարկությունից լցված պատասխան ստացա: Իմ անմիջական հակադարձումը եղավ վիրավորանքի ու բարկության խառնուրդ: Ինչպե՞ս կարող էի սխալ հասկացվել:

Մինչ բարկությունից պատասխանելը հիշեցի, որ մենք անմիջապես արդյունքները չպիտի կարողանանք տեսնել, ոչ էլ մեր ցանկացածը, երբ մեկին պատմենք, թե ինչպես է Հիսուսն իրեն սիրում: Երբ ուրիշներին բարի բաներ անենք՝ հուսալով նրանց Հիսուսին առաջնորդել, նրանք կարող են մեզ մերժել ու արհամարհել: Մեր ազնիվ ջանքերը՝ մղելու մեկին, որ շիտակ բան անի, կարող են անտեսվել:

Գաղատացի 6-րդ գլուխը լավ տեղ է՝ դիմելու, երբ հուսալքված ենք մեկի տված պատասխանից մեր անկեղծ ջանքերին: Այստեղ Պողոս առաքյալը հորդորում է մեզ մեր միտումները ու «մեր գործերը քննել», թե ինչ ենք ասում և ինչ ենք անում (Հմ. 1-4): Նա նաև մեզ հորդորում է հարատևել՝ ասելով. «Բարին գործելուց չձանձրանանք, որովհետև իր ժամանակին կհնձենք, եթե չթուլանանք: Ուրեմն քանի դեռ ժամանակ ունենք, բարի՛ն անենք բոլորին, մանավանդ հավատին ընտանիքներին» (Հմ. 9-10):

Աստված ուզում է, որ Իր համար ապրենք, որ իր մեջ ունի ուրիշներին համար աղոթենք ու պատմենք Իր մասին և «բարին անել»:

Աղոթք - Սիրելի՛ Աստված, շնորհակալ ենք Քո Խոսքից մեր ստացած քաջալերանքի համար: Օգնիր, որ շարունակենք բարիք գործել: Ամեն:

Մեր կյանքերի արդյունքները կարող ենք Աստծո ձեռքերի մեջ թողնել:

Կարդա՛
Գաղ. 6. 1-10

Բարին գործելուց
չձանձրանանք:
Գաղ. 6.9

Նախ Աստծուն հարցնենք

Մեր ամուսնուլթյան առաջին տարիներին մաքառեցի ճիշտ հասկանալու կնոջս նախապատվությունները: Արդյո՞ք խաղաղ ընթրիք է ուզում ունենալ տանը, թե՞ չքեղ ռեստորան գնալ: Արդյո՞ք ընդունելի է, որ բարեկամներին հետ ժամանակ անցկացնեմ, թե՞ ակնկալում է, որ շաբաթավերջը ազատ թողնեմ իր համար: Մի օր, փոխանակ գուշակելու ու որոշելու, իրեն հարցրի. «Ի՞նչ ես ուզում դու»:

Ջերմ ժպիտով պատասխանեց. «Համաձայն եմ երկուսին էլ: Ուրախ եմ, որ իմ մասին մտածեցիր»: Երբեմն ցանկացել եմ անպայման գիտենալ, թե Աստված ի՞նչ է ուզում, որ անեմ: Առաջնորդության համար աղոթելը և Աստվածաշունչ կարգալը չհայտնեցին որևէ որոշ պատասխան: Սակայն մեկ պատասխան պարզ էր. պետք է Տիրոջը վստահեմ, որպեսզի Նա իմ վայելքը լինի, ու իմ ճամփաներն Իրեն հանձնեմ (Սաղմ. 36.3-5):

Այն ժամանակ անդրադարձա, թե Աստված ընդհանրապես մեզ ազատություն է տալիս ընտրելու, եթե մենք նախ Իր ճամփաները մեր ճամփաներից առաջ դնենք: Դա նշանակում է թողնել այն ընտրությունները, որոնք հստակորեն սխալ են ու Աստծուն հաճելի չեն: Կարող է անբարո բան լինել, անաստվածային կամ էլ ոչ օգտակար մեր՝ Իր հետ ունեցած հարաբերությունը: Եթե մնացյալ ընտրությունները Աստծուն հաճելի են, ազատ ենք ընտրելու դրանցից: Մեր սիրող Հայրը ուզում է մեզ տալ մեր սրտի փափագները, այն սրտերի, որոնք Իրենով են հրճվում (Հմ. 4):

Աղոթք - Սովորեցրու, ո՛վ Աստված, որ Քեզ նախապատիվ նկատեմ իմ բոլոր արածների մեջ: Ցույց տուր, թե ինչպես կարող եմ հրճվել Քեզնով, ու իմ սիրտը վերափոխվի՝ Քո սրտին նման լինելու: Ամեն:

Քո որոշումներն Աստծուն ուրախացնո՞ւմ են:

Կարդա՛
Սաղմ. 36. 3-7, 23-24

Բայց դու երբ ողորմություն անես, թող քո ծախ ձեռքը չիմանա, թե քո աջն ի՞նչ է անում: Մատթ. 6.3

Դաշտերը մաքրել

Տանգանհացի մի բարեկամ ցանկություն ունի՝ գնելու անբնակ մի կտոր հող Դոդոմա քաղաքում: Տեսնելով տեղացի այրիների կարիքները՝ Հռութը փափագում է այդ փոշոտ հողի տարածքը վերածել հավեր պահելու ու ցանքեր դնելու տեղի: Իր տեսիլը՝ հոգալու այդ կարիքավորներին, արմատավորված է Աստծո հանդեպ իր ունեցած սիրո վրա, ինչպես նաև ներշնչված իր կրած Սուրբ Գրային անունից:

Աստծո օրենքը թույլ էր տալիս, որ աղքատը կամ օտարականը քաղեր դաշտի եզերքներից (Ղև. 19.9-10): Հռութը օտարական էր, հետևաբար արտոնություն ուներ աշխատելու արտերում՝ իր ու իր սկեսրոջ համար ուտելիք հավաքելու: Մոտ ազգականի՝ Բոոսի արտում աշխատելը առիթ տվեց Հռութին և Նոյեմիին, որ տուն և պաշտպանություն գտնեն: Հռութը գործածեց իր հնարամտությունն ու ջանքը օրվա աշխատանքի ընթացքում՝ ուտելիք հավաքելով արտի եզերքներից, ու Աստված էլ օրհնեց նրան:

Ընկերուհուն՝ Հռութի սերն ու Սուրբ ըքի Հռութի նվիրումը մղում են ինձ Աստծուն շնորհակալություն հայտնել աղքատին ու լքվածին իր տված հոգատարություն համար: Նրանք ներշնչում են ինձ ձևեր որոնելու, որպեսզի ուրիշներին օգնեմ ու մեզ հոգացող Աստծուն երախտապարտ լինեմ: Դու ինչպե՞ս կարող ես Աստծուն պաշտել իր ողորմությունը ուրիշների մեջ տարածելով:

Աղոթք - Տե՛ր Դիսուս, ցանկանում ես, որ ոչ ոք անոթի չմնա: Բա՛ց մեր աչքերը, որ տեսնենք բոլոր հնարավորությունները՝ կարոտյալներին օգնելու: Թող որ Քո սերը կիսենք Քո փառքի համար: Ամեն:

Աստված հոգ է տանում խոցվածին:

Կարդա՛ր Հոութ 2.1-12

Մովաբացի Հոութն ասաց Նոյեմիին. «Գնամ արտը և ում մոտ բարեհաճություն գտնեմ, նրա հետևից հասկեր հավաքեմ»: Հո. 2.2

Խորհուրդը պարզել

Մի օր, երբ աշխատանքից տուն վերադարձա, տեսա բարձր կրունկով մի զույգ կոշիկ մեր կալրուղու կողքին ու վստահ էի՝ ումն էին: Հետևաբար, կառատանը դրի, որպեսզի աղջկաս՝ Լիզային տամ, երբ նա վերադառնա իր երեխաներին վերցնելու: Սակայն երբ ստուգեցի, իմացա, որ դրանք նրանը չէին, ու մեր ընտանիքի որևէ անդամինը չէին, ուստի ես տարա այնտեղ, ուր գտել էի: Հաջորդ օրը դրանք խորհրդավոր կերպով անհետացան: Պողոս առաքյալը խորհրդի մասին գրեց իր նամակի մեջ: Սակայն իր նկարագրած խորհուրդը շատ ավելի մեծ էր, քան լրտեսական խորհրդավոր պատմությունը: Եփեսացիս Զի մեջ Պողոսը խոսեց մի խորհրդի մասին, որ «մարդկանց որդիների անցյալ սերունդներին ցույց չի տրվել» (Հմ. 5): Այս խորհուրդը այն էր, որ մինչ անցյալում Աստված Իրեն հայտնել էր Իսրայելի միջոցով, հիմա Հիսուսի միջոցով հեթանոսներին հայտնեց. նրանք, որոնք Իսրայելից դուրս են, կարող են «ժառանգակիցներ լինեն» Իսրայելի հետ (Հմ. 6): Մտածիր, թե ինչ է նշանակում այս: Նրանք, որոնք ընդունում են Հիսուսին՝ որպես Փրկիչ, կարող են միասնաբար Աստծուն սիրել ու Նրան ծառայել: Մենք բոլորս հավասարապես ունենք «համարձակություն և վստահություն մոտենալու արտոնություն» (Հմ. 12): Ու եկեղեցու միաբանությունը աշխարհը պիտի տեսնի Աստծու իմաստությունն ու բարությունը (Հմ. 10): Փառք Աստծուն մեր փրկության համար: Նա մեզ համար պարգում է միաբանության խորհուրդը, մինչ որևէ և բոլոր տեղերից ժողովուրդներ է միավորում Հիսուսի մեջ:

Աղոթք - Տե՛ր, շնորհակալ եմք միաբանության համար, որով բոլոր հավատացյալները Քեզնով են ուրախանում: Օգնիր մեզ, որ միասին ծառայենք՝ որպես հավասար անդամներ Քո մարմնի: Ամեն:

Միաբանությունը Քրիստոսի մեջ բաժանող պատերը քանդում է ու կառուցում եկեղեցին:

Կարդա՛

Որ հեթանոսները ժառանգակիցներ ու մարմնակիցներ են և Ավետարանով Քրիստոսի մեջ խոստման մասնակից: Եփես. 3.6

Նյութերի ցանկ

Ազոթը.....	Հոււ. 7, 28, օգ. 12, 21, սեււ. 8, 16
Անարդարություն.....	Օգ. 10, 15
Անձնական վարքագիծ.....	Սեււ. 12
Ապաշխարություն.....	Սեււ. 26
Առաջնորդել.....	Սեււ. 17
Աստվածաշնչի սերտողություն.....	Սեււ. 15
Աստծո հետ հաղորդակցվել.....	Հոււ. 7, օգ. 16,
Աստծո հոգածությունը.....	Հոււ. 3, 9, 16, 23, սեււ. 1, 19
Աստծո սերը..	Հոււ. 19,28, օգ.1,4,5,9,22, 29, սեււ. 3,7,11,15, 18,21,26
Աստծո վարդապետությունը.....	Հոււ. 10, 16, օգ. 5, 15
Աստուծո վստահել.....	Հոււ. 12, 16, 18, 24, օգ. 7, 10, 14, 18, 23, 28, սեււ. 2, 6
Աստծո օգնութիւնը.....	Հոււ. 30, օգ. 12
Ավետարանչություն.....	Հոււ. 2, օգ. 8, 24, սեււ. 17
Բավարարություն.....	Հոււ. 9
Դրախտ.....	Հոււ. 4, 20
Եկեղեցական կյանք.....	Հոււ. 14
Եկեղեցու միություն.....	Օգ. 26, սեււ. 30
Ծառայել.....	Հոււ. 26, 30, օգ. 6, 13, 27, սեււ. 27, 28
Խոնարհություն.....	Սեււ. 16
Կյանքի պայքարներ..	Հոււ. 7, 9, 19, օգ. 7,9, 14, 18, սեււ. 6
Ծնող լինել.....	սեււ. 19
Կսկիծ.....	Հոււ. 22, 29, սեււ. 19
Հավատք.....	Սեււ. 1
Հավիտենական կյանք.....	Օգ. 22
Հույս.....	Յոււ. 12, օգ. 22
Հնազանդություն.....	Օգ. 22, 30, սեււ. 24, 28
Հոգեկան կարգապահութիւն.....	Օգ. 27, 30

Հոգևոր աճում.....	Հուլ. 17, 25, օգ. 2, 20, 26, սեպ. 23
Հոգու պտուղները.....	Հուլ. 8
Հիվանդությունը դիմադրել.....	Հուլ. 24
Ճակատում.....	Սեպ. 23
Մատակարարություն և տալ.....	Հուլ. 27, Օգ. 6, 13, 25, Սեպ. 29
Միաբանություն.....	Հուլ. 8
Մեղք.....	Օգ. 22
Մտահոգություն.....	Հուլ. 12, Օգ. 28
Շնորհակալություն.....	Օգ. 19
Ուրախություն.....	Օգ. 23
Ուրիշ հավատացյալների հետ ապրիլ.....	Հուլ. 14
Ուրիշներին դատել.....	Սեպ. 5
Պաշտամունք.....	Հուլ. 5, սեպ. 4, 25
Սեր Աստծո հանդեպ.....	Սեպ. 25
Սեր ուրիշների հանդեպ.....	Հուլ. 6, 11, 27, Օգ. 4, 8
Սուրբ Հոգի.....	Հուլ. 15, օգ. 24, սեպ. 24
Ստեղծագործություն.....	Հուլ. 5, 10, օգ. 19, սեպ. 4
Տանջանք.....	Սեպ. 2, 3
Ցեղապաշտություն.....	Սեպ. 5
Փորձություն.....	Հուլ. 21
Փրկության վստահություն.....	Սեպ. 10
Փրկություն.....	Հուլ. 31, օգ. 2, 31
Քաջակերություն.....	Օգ. 3, սեպ. 22
Քրիստոս՝ Փրկիչ.....	Հուլ. 18, օգ. 16, սեպ. 1, 14
Քրիստոսի անունը.....	Սեպ. 13
Քրիստոսի Աստվածությունը.....	Հուլ. 1, սեպ. 2
Քրիստոսի մահը.....	Սեպ. 18, 21
Քրիստոսի նման ապրել.....	Օգ. 11, սեպ. 9, 12

Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեներով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռախոս՝ (010) 54-35-76, (010) 54-35-78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am

Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

375000, ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7^ա

Հեռ. (+374) 94 52 75, (+374) 95 02 95

Անուն, ազգանուն

Հասցե.....

.....

Հեռախոս.....
